







ՀԱՄԱՌԱԿԱԽՕՍՈՒԹԻՒՆ

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԵԱՆ

Որ բովանդակէ զընդհանուր գիտելիս աշխարհի, զուսումնականն՝ զբնականն և զքաղաքականն։

Աշխատասիրութեամբ Տն Տն Ստեփաննոսի Գիւվէր Ագոնց Աբբայապետի Արքեպիսկոպոսի Սիւնեաց, և Ընդհանրական Աբբայի Մխիթարեան Միաբանութեան։

1817 ՌՄԿԶ

Ի ՎԵՆԵՏԻԿ

Ի Վանս Սրբոյն Ղազարու։

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Բազմաթերթ յառաջաբանութեանց երկարութիւն եթէ է ուրեք ուր պարտաւորեալ դատեսցի, որպէս երկայնաձիգս զայս մատեան լինել, որ ինքնին իսկ կարէ յառաջաբան իմն է բովանդակ աշխարհագրութեան. և ինքն գործն զգլխաւորին ծանօթ է ուսումնական հասարակութեան: Բայց մի՛ սպասեսցէ ընթերցողն տեսանել աստանօր գլուխս գլուխս, այն 'ի ցոյց հանդամանաց յօրինուածոյս, այն 'ի շարս հեղինակաց աշխարհագրական հմտութեան, մինչ եւս 'ի յայտնութիւն գիտութեանց և աշխատութեան զոր յանձն առեալս է, և որում հետևեալ կարգի, և որ այլ եւս կարևոր կանխաբանութեան օրէնք: Ոչ ի զպիտանագոյնսն 'ի դասս ցուցել է յընթացս առաջիկայ հատորոյս. և զայլսն բանիբունն ընթերցողն ընդ յակն արկանելն ինքնին տեսանէ և իմանայ. իսկ որ և այդմ անբաւական գտանիցի, նա և ոչ կարահատար նախերգանօք իմասցի ինչ. այլ իբրև անպէտ ինչ զրուցաց պատահեալ կի՛մ մատենագրին փերևեթել անձնացոյց պարծանաց զանց զնոքօք առնիցէ և յօգտակարագոյն [illegible]ելով. որպէս

գիտեմք առաջուստն լինել ամենայն ուսում
նախիրաց զգոյն առնելոյ, անդստին 'ի
նախադրանց անտի ձանձրութիւն բարեաւ
հնալ ատացեալք. Թէպէտ և վերիպակ
զօրձեն 'ի բազում: Զի որ ուղիղ և իւր
կարգի ընթեռնուլ և ուսանել ինչ ոք
կամիցի, արժան է յառաջաբանէ անտի
մուտ 'ի ներքս առնել, առ 'ի տեսանե-
լոյ զոնէ զմատենագրին զոճ և զկարգ
և զմախնձան, անցանել արդեօք ըստ կար
իւր. զի մի զուր տաժանեսցի 'ի բազում
բանս մատենին, և բամբասասցէ մտօք
պարսաւաղէտ միայն լինել յանդգէտս.
մեղադրութեան արժանի այն է, որ զբա-
րին կոր օգտախնդիր ցանկութիւն յանձն
առեալ է՛ ո՛չ կարողանայցէ կատարել իւր
իւրում բաւականին. իսկ բարւոյ և կա-
րողութեան յոգնամանեայ են բաժան-
մունք, պայդ ո՛չ է անգիտելի: Այլ
բանիւ, զրոց ընտանեայն վայելուչ է իւր
օրինի իւր դուռն անցանել, և ո՛չ գողա-
բար 'ի կողմանէ ինչ 'ի ներքս սպրդել
կամ ընդ պատուհանն վազել: Զայս ա-
ռաւելապէս պարտ վարկայք ծանուցա-
նել աստանօր. զի առաւել կարօտ է
աշխարհագրութի 'ի յառաջաբանէ անտի
սկիզբն առնելոյ, յառաջնոյ աստի ա-
սեմ հատորոյ, որ իբրև աչք բոլորիցն է
մատանց: Յայսմ և ընթերցողն իսկ վը-
կայեաց արդեօք ուրեք ուրեք յընթացս
մթութեանց հանդիպեալ, որք այլում իւիք

կանխագուշակի ուղեկաւն պէտս ունէին .
և ահա այս հատոր է զոր խնդրէք , այս
երկար յառաջաբան հասարակախօսութե
որում կարօտէր : Սակայն յերկարութե
անոր՝ բախտի հասեալ եմք ընթերցողն և
մեզ . զի Ը հատորականութեան անուանք
ոչ վայրապար ինչ կանխագանութիւ միայն
է սա 'ի ուղեկութե և եթ հանրական
գիտելեաց գործոյս , այլ և ինքնին նոր
ինն գիտութե և հմտութե հեշտալի ու-
սումնասիրաց . զորոյ թէ ասասցէ ոք զճա-
շակ ; համառօտ ասասցէ զմերս՝ ոչ և ժ
բակ . և ճոխագունեին փափաքեացէ : Այլ
թէպէտ ոչ առաջին էր սա 'ի կազմութե
և 'ի հարկաւորութե , առաջին 'ի գեղ էր
լինել և 'ի տպագրութե , բայց բազում
ինչ 'ի նեղքս անկեալ խափանեաց եղեն փու-
թոյ մերում . յորս գլխաւորագոյն խառ-
նակեցի աշխատաւորութեանն համաձայնեալ խը-
բառ՝ Փոխիմ յաւէ . զի յաւելուածութեց
պէտս ուսանելեաց ոմն՝ մանկաւանց յա-
ջնեջեան ուղեկութեան . որք աղագա-
բոկ է և այսքան յաւել առակական հատա-
բոց ումանց : Այլ յետ այսր ամի ոչ ինչ
մանր և երկար պատճառաբանութիւնք հան-
գերձեցաք զսա . զի սա այժմ բոլոր թը-
ուականութե և չափաբերութե հրագի-
տակեցին , սա որս զեռ անընդգել են
բազմից ճաշակեցիք . և մեզ կամք էին
վերանորոգելի առնել զսա , որով և զըն-
թերցողն 'ի կատարելագոյն յորդա-

բանիւ ։ Սոյն է կարճառօտ ծանօթութիւն
զոր կամիմ տալ 'ի մուտս սոյն մատե-
նիս վն այսօր հասարակախօս ճառագրոյ ։
Կամիմ և փոքու ինչ ծանուցանել զօգ-
տակէտ ախտանաւորութե և զգեղեցկագոյն
զուարճութն աշխարհահայրապետական հնութե ։
Ո՛չ է պէտ արձակեալ ինձ և յինքնահրա-
մանն օրինաց առանց յառաջաբանից , զի ո՛
զուտ գործոյս ոչ 'ի գործողին քարոզե-
լի է , այլ յընթերցողացն խոստովանե-
լի ․ բայց և մեզ խորհն ծանօթիւն զառաջի
զմերս և այլոց ոչ սակաւուց ընթերցո-
ղի ներբերցեն յառաջ բերել զմերս զա-
տատան՝ քան թէ ձեռամբ գովասանութե ։
Հնգեակ թուին մեզ զկնաւոր օգտաւոր-
սոյն ։

ա ․ Որ հայի ով մանկանց զխանդարկն
իմաստութեան յերկինս ամ երկրի և յերկինս
'ի վեր , և ուսանել զերկնից ահաւոր վսե-
մութիւն և զերկրի ամենազօրեղ զար-
ձան , և որ 'ի նա կարգ և չափ և թիւ և
կշիռ ըստ կարգեալ հրամանի արարչին ․
զերկնից բարեբաստութիւն առ երկիրս , և
զերկրի անհնարին տատութիւն՝ ան-
պակաս յանձնրդութ աղբի աղբի կենդա-
նեաց և բուսոց և անկոց և հանքաց 'ի
ծնունդ 'ի սնունդ և 'ի բարեկենդանութիւն
քանանաց և անբան արարածոց ըստ իւ-
րաքանչիւր բնածնից և ազգաց և տե-
սակաց , և զայլսն ․․․ իրերաց հաղորդա-
կան զուգախառնութեն ․ զայնպիսի բա-

ղաքական միաբանութիւն ընդունել և զա-
ւառս և օրինօք զանազանեալս, զնո-
ցին առ միմեանս կախումն և կցորդակ-
ցութիւն. զհամաշխարհական կեանս մար-
դկան յեղափոխութիւն՝ է որ յանկարծա-
դէպ, և է որ բազում խորհրդածութեանց
պատճառաց մանուածով. զտիեզերա-
խումբ և զաշխարհահաղորդ ճակատա-
մարտից և զատաւորութեանց զանազանեան կար-
եաց և զանձնասիրութիւն, զիա՞րդ ոչ անդէն
խառնակամտութեանցն զայլոց մտի զանօրէնս և
զմարդիկ; որ 'ի բարձանց երկնից կառա-
վարի կալեալ զերասանակս տիեզերաց՝
շարժէ զնոսա 'ի կամս իւրոյ նախախնամող
յաւերժութեանն: Նոյն և 'ի կրօնաւորութեան
ո՞րպէս ոչ արմատացի ապաշաւանօք, անուա-
նեալ՝ զի ԺԹ Պտղոստոսաբեալ Է ամ. ծագու
աշխարհի տարածել յուսալի է զանձնել
ազգք անոք՝ քան անկրօն: Նոյն առա-
ջին պտուղ աշխարհագրական ուսմանն,
համաշխարհի ժամանակագրութեան և կրօնա-
գիտութեան:

Բ. Նա նմանէ և տարբերութեանցն ար-
ծարծեսցի հուր 'ի սիրտս ընթերցողին,
տեսանել յոյժ ազգիս և 'ի քաղաքս զգա-
մեղի օրինակս առաքինեաց 'ի կառուց-
մանէն և 'ի խնամս տաճարաց հիւանդա-
նոցաց որբանոցաց ուսումնարանաց, և
զիւրեալ և զնման այլոցն և առաքինական
հանդիսից ԸՍ ծառայութեան և ԶԻ աշխար-
հաշէն քաղաքականն և տնտեսական օրէ-

ձի , և 'ի սոցին սրբազանուեցնոցն 'ի բաց
վտարեսցի :

Է. Մէջ իմաստս և ուսումնասիրութիւն
և աստուածայնոց և քաղաքագիտականութեան և բնա-
կանն հմտութեանց եկեղեցին և յորդոր , զոր
նախագահն քաղաքականութեան և ուսումնականին զա-
զանց նախանձ ընթերցուած . որ զգօնութեան գոյն
քաղաքացւոց իւրեանց յետ ողջունել և նորա-
նոյն կենցաղավարութ աստուածայնոց համաձայն
բազմօրինակ սովորութեամբ , համայնական-
նոյն կարգաւք 'ի հրահանգս հայրենեաց ,
և նման սովորական և գործնական մանկու-
թեան և իմաստն քաղաքական բարձ-
րագոյն պաշտօնասիրացն յանձամբ յի-
տակ ազգին իւրեանց և գաւառին : Իսկ
արդեւն զինուորականացն և ուսումնակա-
նաց՝ նախանձայութիւն մտաց և հմտութեանց ,
և տեղեկութիւն բնութեան մասնանց աշխարհ-
հի , և երկրագործութեան սրբանցն ծաղկման և
պտղոց և բնակութեանց և լեզուաց կա-
րեւոր հմտութեան. զի մեծ պաշտօն իւր երկիրն
ուսանելն 'ի վերայ զգեստ իւրեանց՝ նոյն
մեր միայն բարեկարգական կարգելոյն
զանազանն իմաստութիւն և զհանճարս
աշխարհին :

Ը. Սահմանադրութիւն և իմաստա-
սիրաց ձեռնադրեալ հօրդ դնելութեան
և յանձնառութիւն. զի որ չգիտէ որ յորդոր
կրօնականն զինչ ընդ է և զինչ լեզու և
զինչ կանոնք , զինչ օրէնք աշխարհիկ
և զինչ դասեր կրօնաւորաց ամենայն բաժնի ուսոյց

Ճանապարհ է, զմեռեալն լոյծ վայրն և անմիջնականին, եթէ մարդասէր և քաղաքա-համբոյր : որ քաղաքաց քան զոր առաւելելն զխոսութիւն և արհեստից և քաղաքակա-նութիւն, զիմաստ կարէ մանկանցն փառա-թամնուն ակն ունել, կամ իմաստասէր և իմաստասիրութեան անուանել, և ոչ զըրա-խորհուրդ թագաւորական :

Է . Հեշտալի և իմաստասիրական ըղ-ձանայք աշխարհագրական վերջին դատա-ցուց տասանօր, բայց առաւելին է 'ի գըզալ-ուն ընթերցողին : Որպէս զի քաղցր և և սքանչելի 'ի շրջագայելն որոնց անուն, կին նախանձով եղանել շրջել 'ի թև այսոր զխոսուն է չորեքծագեան աշխարհ տիե-զերաց, և 'ի վիճին անցանել 'ի ասար աշ-խարհաց բազմահայր առարանձոցս չքնա-ղագեղ վայելչուն, վերանալ 'ի կատարս վանաշագեղ լերանց անմատոցից, իջ-ջանել 'ի ձորս և 'ի հովիտս ծաղկա-փթթիթս, ձնմել է մարգս և է դաշտս դեղածիծաղս, զկարկաջահոսանս լճեր զզարմացուցանող յորդագնացից, և զհե-ղասահ գետոցն խոխոջելոց բարեբերաց տեսանել զծաւալմունս . զամբաղառա-նացն և զգլխախառնից առանալ վհոտ քաղց-րուն զանազանեալ յերանգս և 'ի սը-տոսղս և 'ի համն . անտառաց պտղատահեղ ծրեցոյն թռուցելոց երամակս, է հեշտ անդրադարձ ձայնս շըջել, և զ'ի նոյն մե-ծացոյց ձկունս տեսանել զզարմանալիս .

Ի որ այլ եւս ընդարձակագոյն պերճապատուն
քերթող երկրի եւ ծովու որ 'ի բոյսս որ 'ի
հանքս որ 'ի հօտս որ 'ի հրահանգեալս եւ
յանկանս դասաւորեալս եւ 'ի հոյլս անսա-
սան կենդանեաց ։ Ցուցանել սոսա 'ի
կենդանեաց միաբանութիւն ժողովոյ մարդ-
կան ի քաղաքի քաղաքի, եւ ասեսութե
արժանի լինել հոյակապ մեծագործու-
թեց նոյ եւ սքանչելագործութեան յորինուա-
ծոց մի քան զմի զերազանցեալ 'ի ճարտար
'ի հնարս եւ 'ի ճարտարապետութիւն. մատուցանել
զեղ երկել եւ յարքունիս նոցին իսկ անհե-
ղափոխեա թագաւորացն մեծամեծաց
անառեալ 'ի մարդկանէ խորհրդարար ձեռամբ
պաշտամանց. 'ի մէջ ածանել եւ զանէ-
նից նոցա եւ զանհնարական պայծառա-
զարդ ահաւորութե եւ զխոհական զանձին
եւ զօրէնս դատաստանաց ։ Խնամել եւ
զերկին երկին պահպանող նոյ զանտարածու-
թիւն, եւ զաղքի աղքի առողջութեան եւ
զործոց եւ զօրինացն փոփոխմանն, եւ ըստ
կերպարանաց ոճոց եւ զհանդերձից եւ ըստ
կազմուածոց նոյ մեծահարուստ խոհականու-
ծութիւն եւ զարդարողականն եւ զկարգ ։ Այլ
որ եւս առաւելագործական է՝ այժ ոգինք ազնուա-
սութեց 'ի Հայաստանեայց թագաւորութեան
աս. միաբանեալ համաձայնութեան եւ ընդարձա-
կութեանց եւ զհրաշագործութեց սուրբ խորհրդ-
դոց. եւ այսպէս է բազում նորութեան-
նս պատմական եւ զիմանալի միջոց պա-
տմել 'ի պատմութեան խնամոց, եւ ըստ-

տիրաց դաստիարակեալ յընտրութիւն և 'ի ներ լաւագունացն ։

Այսոցիկ ահա ակնկալեալ մնայ օգտութեանց յԱզգս մեր սերմանելոյ շահաւորս այս մեր քրտանց երկասիրութիւն . և եթէ այդոցիկ և եթ պատահեսցուք յերկնաւոր և յանձնախանձ տուչութենէն և յուսումնասիրացն վաստակասէր ջանից , բաւականութ̃ համեալ համարիմք 'ի կէտ նպատակիս , և զաստի փոխարէնացն լիով ընկալեալ զհատուցումն . առով և զմարդկօրէն թերութեանցն դիւրացուցանել մեզ զներողութ̃ի 'ի բարեհախանձ ուսումնասիրաց Ազգիս , որում և զվստահակս զայս թէպէտ և ոչ ըս̃տ մեծայօժար սրտիս չափոյ՝ համարձակեալ նուիրեմք ։



ՀԱՄԱՌԱԿԱԽՕՍՈՒԹԻՒՆ

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԵԱՆ



Ի ՍԿԶԲԱՆ ԱՍՏ ՄԵՐՈՒՄՍ աշխարհագրութե կարեւոր վարկաք ըստ այլոց աշխարհագրաց օրինի առանձնել ընդհանուր ծանօթութիւնս ինչ զաշխարհագրութէ, որք բազում լոյս ընծայեն մտաց. և երբ ձեռամբ կալեալ առաջնորդեն յուսումն այսր գեղեցիկ և պիտանի մակացութե. զորս յառաջիկայ գլուխս բաժան-գակեսցուք համառօտիւ։

Նախ՝ յաղագս սահմանի աշխարհագրութե։

Երկրորդ՝ յաղագս առարկայի նորա։

Երրորդ՝ յաղագս սկզբան և յառաջատուութե աշխարհագրութեան։

Չորրորդ՝ յաղագս պէսպէս չափուց այլ և այլ ազգաց։

Հինգերորդ՝ յաղագս երրեակ ընդհանուր բաժանման երկրի։ Զոր և բաժանեսցուք ՚ի պարակս պարակս. և յետ այնորիկ յաւելցուք զվերլուծութե աշխարհագրական անուանց։

Զայս ամենայն միով անուամբ կոչեմք ըստ Խորենացւոյն մերոյ Համառակախօսութի աշխարհագրութե, և

կամ Պրտան աշխարհագրութեան · զոր նշանակացուցաք աշխարհագրելոց կոչեն Ներածութիւն աշխարհագրութեան · կամ թէ բարբառոյ լատ՛ · Ինդրոդուքցիօ · և թէ յունաց, Իսակօգէ ։

ԳԼՈՒԽ Ա.

Սահման աշխարհագրութեան ։

Աշխարհագրութիւն անուն՝ եթէ 'ի ստուգաբանութենէ բառին միտ դիցուք՝ է գրութիւն, կամ ստորագրութիւն համօրէն աշխարհի · այսինքն երկնայնոյն և տարրականին · զոր և ոմանք կոչեն Տիեզերագրութիւն, և յունաց Քօզմօկրաֆիա · երբ զի քննէ զերկնային մարմինս, զդրութիւն, զգիծս, և զըղ-ոլանակս գծից և զայլ յատկութիւնս նց ։ Ընդ նմին քննէ և զգունտս երկրի · զորօրինակ զգիծս նր առ համեմատութիւն երկնային մարմնոց · զձև, զմեծութիւն, և զայլ հանգամանս նր · զգլխաւոր բաղադրիչ մասունս նր · այսինքն զջուր, և զցամաք · և զզանազան բաժանմունս, և զանուանս նց են ։ Ըստ այսոցիկ երկատեակ ստորակայից կացուցանելին երկու զանազան մակացութիւնք · յորոց միոյն բերէ ընկ զերկնային մարմինսն · և ոմանք կոչեն Աստեղագիտութիւն ։ Իսկ երկրորդն յամէ միայն զհողագնդ-ոյն, կամ զտարրական աշխարհաս մերոյ · և սա անուանի Երկրագրութիւն · յունարէն Կէօկրաֆիա (1) ։

Բայց թէ հասարակ և սովորական նշանակութեամբ առնէ զաշխարհագրութիւն անուն, նշանակէ զգրութիւն տարրական աշխարհի և եթ · զի անուամբ Աշխարհի թէպէտ թէ իբրու ընդհանրական նշանակութեամբ զհամօրէն մարմնական կերպարանս երկնից և երկրի նշանակէ, զոր և ոմանք Տիեզերք կոչեն, բայց ըստ մասնաւոր, և սովորական նշանակութեան, թէ որոյ ցրեթէ առ հասարակ 'ի գործ ածի, նշանակէ զհողագունդս զայս մեր ։ Յայս միտ առնու և մեծ վար-

դա

(1) 'Ի թուրքաց լեզուի Ճիհաննիւմա, որ ըստ ստուգաբանութեանն նշանակէ աշխարհացոյց, նմին 'ի բառէս Ճիհան, որ նշանակէ աշխարհ, և 'ի բառէս նիւմայ որ է հրամայական ներգործական բային, այն է՝ ցուցանել ։

գտայեան Մովսէս Խորենացին զաշխարհագրութեան անուն, որպ և մեք ՝ի ՆԾ. և ՝ի Կղուդերիոսի սահմանի. Ստորագրութիւն բոլոր երկրի զոր վայր ծանօթ է մեզ : կամ ըստ այլոց բացայայտ ևս. Գիտութիւն որ ցննէ և ստորագրէ զմակերևոյթ հողագնդոյ, ըստ որում բաղկացեալ է ՝ի հողոյ և ՝ի ջրոյ :

Զաշխարհագրութիւն տիրապէս գիտութիւն լինել համօրէն գիտնականք միաբան հաստատեն : Քանզի ունի սկզբունս ՝ի ինքեան ծանուցեալս ՝ի հաստատել զճշմարտութիւն իւրոց նախադասութեանց, որք յերրեակ դաս վերածին : Մի՝ ՝ի նախադասութիւնս երկրաչափականս և թուաբանականս : Երկրորդ՝ ՝ի կանոնս և յինքեան ծանուցեալ նախադասութիւնս աստեղաբաշխականս : Երրորդ՝ ՝ի փորձն. վն զի մեծագոյն մասն մասնաւոր աշխարհագրութեան կախեալ կայ զփորձոյ մարդկան, որք շրջեցին և ստորագրեցին զայլ և այլ կողմանս երկրի :

Իսկ զանազանեալ է աշխարհագրութիւն՝ նախ ՝ի տիեզերագրութենէ. զի որպ ՝ի վերայ ստացուածոյ՝ նա քննէ և ստորագրէ զերկնայինն և զերկրաւոր մարմինս միանգամայն. իսկ աշխարհագրութիւն զերկիր և եթ, վնչ ստորերկրի ՝ի նմանէ կարէ մասն ՝ի բոլորէ : Երկրորդ՝ ՝ի Գաւառագրութենէ. որ յունարէն Քորօգրաֆիա ասի. զի է սա ստորագրութիւն մասնաւոր աշխարհի, կմ գաւառի և եթ. զորօրինակ Հայաստանի, և ՝ի նմա Վասպուրական նահանգի. կամ յանտառանի, գաւառաց, տարանեաց էն : Երրորդ՝ ՝ի Տեղագրութենէ. ՝ի յունաց Դօբօղրաֆիա ասացեալ. որ զմասնաւոր վիճակ ինչ, կմ կալուած ստորագրէ. զորօրինակ զԵկեղեաց վիճակ Կարնոյ քաղաքին էն : Չորրորդ ՝ի Ջրագրութենէ. զոր յոյնք Իտրօգրաֆիա ասեն. որոյ է ստորագրել զջուրս և եթ. որ և կացուցանէ զմասնաւոր տեսակ գիտութեան :

Յայս ամ գիտութեանց տարբերի աշխարհագրութիւն իբր բոլոր ՝ի մասանց. զի զստորագրեալս նց ամենեցուն պարունակէ ընդ իւրև. թէպէտ ոչ այնպէս ճշտիւ խօսի զնոցանէ, որպ նոքա. այլ թէ ոչ յանսահմանս ձգէր առարկայ նորա :

Դարձեալ տարբերի և ՝ի բնաբանութենէ. զի բնաբանութիւն յետ քննելոյ զբնութիւն, զյատկութիւն, և զայլ ևս հանգամանս շարժական էակաց, որք են ՝ի վր երկրի, անցանէ ՝ի հետազօտել և զբնութիւն երկնային մարմնոց, և զներգործութիւնս նց. իսկ

աշխարհագրութիւն միայն 'ի մակերևոյթ հողագնդոյս պատմեսցի. և անդ՝ Ճշգրիտ խօսելով ոչ եթէ զբնութիւն իրաց քննէ, այլ միայն զդիրս, զտարածումն, և զպէսպէս բաժանմանս երկրի: Այս է ահա բնիկ սահման աշխարհագրութեան:

Այլ քանզի այժմեան աշխարհագրաց գրեթէ ամենեցուն՝ սովորութիւն եղև քննել զբնութիւս և զյատկութիւս բնական իրաց, և ևս ընդ աշխարհագրական ստորագրութիւս խառնել և զպատմութիւս քաղաքականս, և բնականս, յաւելեալագոյն ուսումն և 'ի զուարճութիւն ուսանողաց. (զոր մարթ է կոչել երկրորդական տարրեայ աշխարհագրութիւն,) յայն սակս քաջ աշխարհագիրն Անտոն Փեդերիկոս Պիւշինկ ազնուականն բրուսսիոյ՝ կամեցեալ և զայս բացատրել 'ի սահմանի, այսպէս սահմանէ զաշխարհագրութիւն: Է նկարագրութիւն ասացեալ կամ հրահանգութիւն և ստորագրութիւն բնական և քաղաքական հանգամանաց ծանօթելոյ երկրի:

Խորհրդով յաւել զմասունս ծանօթելոյ երկրի. որպէս և կլուվերիոս 'ի նախայիշատակեալ սահմանի իւրում. զի թէ զի չէր տարակոյս թէ առ հիւսիսայինն և առ հարաւային բևեռօք, որպէս և ընդ արևադարձիւք զատամենին ցամաքք երկրիս, յորս կիսով ոչ ոք եհաս գտանել 'ի մերոց աշխարհաց. և կամ 'ի կողմանս ինչ միայն նոյն ցամաքաց և ոչ յամենայն եղելոց մասանց նոցին. որ և յայտ անուն է, զի հանապազ նորանոր երկիրս գտանեն նաւորդք եւրոպացւոց. վասն և չէ մարթ որոշակի ինչ գրել զնոցանէ:

Բնական հանգամանօք երկրի՝ մասամբ իւրն իմանին զբնաբանական ծանօթութիւս, յորում մտածէ զերկիր իբրև մարմին իմն տիեզերաց. և քննէ զձև, զմեծութիւն, զդիրս և զհամեմատութիւն՝ զոր ունի ընդ այլոց տիեզերական մարմնոց. և զայլ սոցին նմանս: Եւ մասամբ իւրն զծանօթութիւն այնր մասին, որ շարժի, կամ անշարժ կայ 'ի մակերևոյթ երկրի, զոր մարթ է արդարապէս կոչել Աշխարհագրութիւն Ֆիզիքական, կամ Բնաբանական: Իսկ Քաղաքական հանգամանօք երկրի՝ իմանին զզանազան տէրութիւս յորս բաժանեալ է երկիր. զկառավարութիւն, և զկարգ նոցա. և զպէսպէս հանգամանս բնակչաց նն, զորոց խօսի աշխարհագրութիւն. և ահա այս է զոր ասէ 'ի սահմանի. Պոփարկեալ հրահանգութիւն:

Բայց այս կախեալ կայ զկամաց աշխարհագրաց. որք

տրէք է զի՝ համառօտ խօսին զազգանէ, և է զի՝ ընդարձակ . այլ միշտ յապաւեալ յաւելուրդ և յանօգուտ իրաց . զի մի մատեանք աշխարհագրութեան անօգուտ իրօք ստուարասցին :

ԳԼՈՒԽ . Բ .

Ռուարկայ աշխարհագրութիւն :

Ռուարկայ աշխարհագրութիւն է համառօտութիւն, և է ընդարձակութիւն 'ի պէսպէս դարս՝ պէսպէս հանգամանաց փոփոխեցաւ . է զի՝ ճիշտ էր և ամփոփ, և է զի՝ ընդարձակ : 'Ի նախնումն ամփոփ էր յոյժ . զի բաց 'ի բաժանմանց երեւելի աշխարհաց և գաւառաց, և բաց 'ի քաղաքաց և շինեաց նոցա, գրեթէ զայլ ինչ իրաց ոչ ճառէր . բայց եթէ ոմանք 'ի նոցանէ 'ի հարեւանցի ճառելով զբնական իրաց, զբարուց ազգաց, զորօրինակ են Ստրաբոն, Մելա են . և այն ամփոփեալ կայր միայն 'ի մասն ինչ մակերեւութի վերին կիսագնտոյ : Քանզի ոչ յայտնի է ամենեցուն՝ ոչ միայն ներքին կիսագնտոյն անծանօթ էր նախնեաց, այլև վերին կիսագնտոյ մեր է այրեցած գօտիս, և 'ի կողմանս հիւսիսային և հարաւային բեւեռի բազում մեծամեծ և ընդարձակ կղզիք, յորոց յոլովք առ մերով ժամանակօք գտան : Եւ զի՜նչ ասեմ զհեռաւոր կղզեաց, ուր և մեծագոյն մասն Ափրիկոյ անծանօթ էր նց . զի ծանօթութիւն նց հազիւ հասանէր ցատանեօրդ աստիճան հարաւային լայնութեան :

Իսկ 'ի վերջին ժամանակս ընդարձակեցաւ յոյժ ռուարկայ աշխարհագրութիւն . և որ է օրէ ընդարձակի . զի թող զնորանոր գիւտս կղզեաց և ցամաքաց, զորս հարկ է գէթ համառօտիւ իմն ստորագրել, յաւելան 'ի դմ և այլ պէսպէս իրողութիւնք բնականք և քաղաքականք . զորս Վարենիոս յերիս դասս վերածէ . այսինքն յերկնայինս, յերկրայինս, և 'ի մարդկայինս :

Երկնայինքն են, որք կախեալ կան զշարժմանէ արեգական և աստեղաց . և են սոքա : ա . Բարձրութիւն բեւեռին, հեռաւորութիւն աստեղաց 'ի հասարակածէ, և 'ի բեւեռէ : բ . Խոտորնական ընթացք օրական շարժման արեգական և աստեղաց 'ի վր

եղերանց ածելեաց : Գ. Տեսողութիւն, կի՛ր ողջանալն առաւել երկայն, և համառօտ առուր : Դ. Բնաժերն կամ Աշխարհն, և գօտին : Ե. Ջերմութիւն և ցրտութիւն, և եղանակք տարւոյն, ոճ և անձրևք, ձիւնք, հողմունք, ամպրոպք, և այլ օդերևութականք կամ մետէորայք : Զ. Ծագումն աստեղաց, երևումն նոցա և տեսողութիւն 'ի վերայ եղերանց : Է. Անցք աստեղաց ընդ կէս գագաթան տեղւոյ իւրեք : Ը. Առաջումն շարժման նց, որով ըստ պտտմանց շրջաբերին զերկրաւ յիւրաքանչիւր ժամու . կի՛ր ըստ կոպերնիկեանց՝ երկիրն անցանէ 'ի ներքոյ նոցա : Թ. Ներգործութիւն և ազդեցութիւն մոլորակաց զոր ընծայեն նոցա . և զոր ունին յարանան :

Երկրայինքն են սոքա : Ա. Սահմանք : Բ. Ձև . Գ. Մեծութիւն : Դ. Լերինք : Ե. Ջուրք . որոշենակ ծովք, գետք, աղբիւրք, և նաւահանգիստք : Զ. Անտառք և անապատք : Է. Արգասաւորութիւն, և անարգասաւորութիւն . և տեսակք արգասեաց, կի՛ր ընտրոց : Ը. Հանք և հրաբուղխք : Թ. Կենդանիք : Ժ. Երկայնութիւն ածելեաց :

Իսկ մարդկայինքն են սոքա : Ա. Դէմք մարդկանց, կերպարանութիւն գունոյ, խառնուածն, երկայնութիւն կենաց, կերակուր, և սկզբնաւորութիւն բնակչացն : Բ. Առևտրութիւնք և վաճառք նց : Գ. Բարք . առաքինութիւնք և մոլութիւնք նց, և գիտութիւնք, և դպրութիւնք : Դ. Սովորութիւնք նց 'ի ծննդեան, յամուսնութեան, և 'ի թաղման : Ե. Լեզու նց : Զ. Քաղաքական կառավարութիւն նց : Է. Կրօնք, և անապաշտութիւն, և եկեղեցական ծէսք : Ը. Քաղաքք և երևելի տեղիք նց : Թ. Գլխաւոր պատմութիւնք նց : Ժ. Արք երևելիք . նշանաւոր արհեստաւորք, և գիտունք :

Այս այսոքիկ են, զորս ըստ վարկանելոյ առաւելագոյն յիւրաքանչիւր գաւառս զննել պարտ է որչափ ինչ հնար է . բանզի դժուարին է, և զրեթէ անհնարին զայս ամենայն ճշտիւ և մի առ մի գիտել ստուգութեն :

Արդ ահա և մեք յառաջիկայ աշխարհագրութեան մերում փոյթ կալցուք թէ ոչ զամենեցուն՝ գէթ ընտրելագունից յայտնել զառաւել յիւրաքանչիւր տեղիս ըստ ատենելոյ մասանց . ըստ ներքելոյ ժամանակի, և ըստ ճշգրտելոյ 'ի սոսուդագոյն աշխարհագրացն և յաշխարհագրաց ճանապարհորդաց :

Գ. Լ.

ԳԼՈՒԽ Գ.

Սկիզբն և յառաջադիմութիւն աշխարհագրութեան:

Աշխարհագրութիւնն է այլոց գիտութեանց սկիզբն և կայեան: Քանզի յորժամ ոչ կամին մարդիկ առաջանձինս յաշակերտութիւն գրոց՝ է այլ գիտութիւնս, մանաւանդ թէ և յառաջ քան զնա՝ ոչ կամին մշակել և զաշխարհագրութեան գործ, և ճեպոյուք: Սեսոստր արքայ եգիպտացւոց որ եկաց 1742 ամօք յառաջ քան զՔս ըստ պատմելոյ Եւստաթեայ՝ զնոյն աշխարհս է որս խառնեաց, եւ նկարել 'ի տախտակ ինչ պղնձի: Հոմերոս 907 ամօք նախ քան զՔս ակզբնահայրն բանաստեղծիցն յունաց, որ 'ի բանաստեղծութեան՝ նորին այլս և յաշխարհագրութե նախ առաջին հանդիսացաւ, որք առէ ստրաբոն գիրք ա. մասն 5. որ մեծ ծաղկեան խնամով 'ի յուցանես քաղաքաց, և նաւուց յերկրորդ գիրս եղիականին կոչ իլիականի, զամ յունաստան գծագրեաց. և զմասն ինչ ասիոյ առ հելեսպոնտոսիւ, կամ առ ասահմանօքն արաւելադայ.

Ձեռն եդ այլք բազումք երևելիք և հռչակաւորք հանդերձեալ յումեմն աշխարհագրութե. յորոց սակի էր Անաքսիմանդրոս աշակերտ Թալեսի Միլեսացւոյ միոյ յեօթն իմաստասիրացն յունաց: Սա ըստ պատմելոյ Ագաթեմերոսի, և Լաերտացի ծաղկեալ 'ի 552 ամի յառաջ քան զՔս, նախ առաջին նկարեաց 'ի տախտակի զերկիր և զծով. և ձևացոյց գունտ արուեստաւոր երևեցուցիչ հողագնդոյս մերոյ.

Փոքր մի զկնի եւր 'ի 498 ամին նախ քան զՔս Արիստագորաս բռնաւոր միլեսացւոց մատոյց ցկղեոմենէս արքայ սպարտացւոց տախտակ պղնձի, յորում քանդակեալ էր զշրջանակ, կամ զատարածումն երկրի ընդհանրելոյ 'ի ծովուց և 'ի գետոց. որպէս պատմէ հերոդոտոս գիրք Ե. գլ. 49:

Այսպիսի ինչ տախտակ ունէր և Սոկրատէս ծաղկեալն 'ի 425 ամի յառաջ քան զՔս. զոր եցոյց ալկիբիադայ աշակերտի իւրում որ էր զօրավարն աթենացւոց. և առ 'ի ընկճել զամբարտաւանութիւն

ոք, առաջ ցնա խնդրել 'ի նմ՛ զաԹէնս․ և յաԹէնս՝
զհաւաքածս իւր․ որք և ոչ իսկ բնաւ նշանակեալ
էին․ վասն զի և աԹէնք կիսով և կէս էր 'ի նմա
գծագրեալ։

Եւ ես 'ի կատարելագործութիւն արհեստաւորանեցն՝ որ
ծաղկեցաւ 'ի 396 ամի յառաջ քան զՔՍ, յիշատակէ
մի ոմն յաշակերտաց սոկրատայ, որ առաւել մատոյց
առաքելականագոյն տախտակ աշխարհագրական։ Ու-
նէր և Թէոփրաստոս ծաղկեալն 323 ամօք նախ քան
զՔՍ այլազգի տախտակս բազումս, զորս կտակաւ
Թողեալ կախել 'ի սրահի, որպէս պատմէ Դիոգինէս
լաերտացի 'ի վարս նորա։

Սոյնպէս և Թագաւորք եգիպտացւոց ծանու-
ցեալ զօգտութիւն այսր գիտութեն զհետ եղեն սոր 'ի
և ես պայծառացուցանել։ Զի Նեքաւով արքայ ե-
գիպտացւոց 'ի 610 ամին յառաջ քան զՔՍ, ետ քննել
փիւնիկեցւոց զշուրջ մերձին կողմն ափրիկէոյ որ հայի
յանկիւնս․ որոց ելեալ 'ի ծովէն արաբացւոց՝ անցին
քան զհարաւային և քան զարևմտեան ովկիանոսն նաւարկ-
եալք, քան նեղուցն սեպտէի մտին 'ի ծովն միջերկ-
րական, և յետ ամաց երից դարձեալ 'ի ճանապար-
հորդութեն՝ հասին յեգիպտոս։ Դարեհ առաքեաց
լրտեսել զգնացս հնդոս գետոյն, և զարմանագոյն
արևելեան ծովն եթովպացւոց։

Մեծն աղեքսանդր 'ի ճանապարհորդութեան իւր
էած ընդ ինքեան զփաղէսոփենս 'ի քննել զերկնային
մարմինս․ և զդէտողնկատս, և զքեռանեկս 'ի չափել
զճանապարհորդութիւն իւր․ և հրաման ետ պատ-
րաստել նաւս 'ի քննել զեզերս ծովուն Հնդկաց և
պարսկային ծոցոյն։ 'Ի գիրս անուանեալ Յաղագս
աշխարհի՝ զոր արիստոտէլի ընծայեն, գրեալ կան
սահմանք գլխաւոր մասանց երկրի․ որք առ նովին
ժամանակօք էին երեք․ այսինքն եւրոպիա, ասիա
և ափրիկէ։

Յետ մահուն մեծին աղեքսանդրի, Թագաւորք
որք յաջորդեցին նմ յեգիպտոս, ժողովեցին զերևե-
լի երևելի չափաբերս․ և հաստատեցին յաղեքսանդ-
րիա զաԹոռ աստեղաբաշխութեն, և աշխարհագրու-
Թեն․ և 'ի մէջ այնոցիկ՝ որք անդ յաւէտ հանդիսա-
ցան յառաջ քան զՔՍ՝ եղեն Կոնոն, Արիստիղոս,
Տիմոքարէս, Իպպեռնոս, Երատոսթենէս գիւ-
նայեա դպրատան աղեքսանդրիոյ քաղաքին, որ յա-
րեգակնային գիտողութեց՝ չափեաց զչափն երկրի․
Թէ

թէպէտ ոչ այնչափ ճշտիւ ։ Այլ յաղագս աշխարհագրացս այսոցիկ, դարձեալ բան ՚ի մէջ առցուք ՚ի խօսելն զմեծութէ երկրի ։

Այլ և երբայեցիք ՚ի հնումն հետամուտ եղեն այսմ գիտութեան. բաժանելով ողջ ամէ յոկնեակս զերկոտասանն ցեղս ՚ի ձեռն աշխարհագրական տախտակաց ։

Այսպէս էանց առ հռովմայեցիս. զի սովորութն էր նոցա նկարել ՚ի տախտակս զաշխարհս, որոց յաղթէին, և կրել զայն իբր յաղթանակ ։ Ծերակոյտ հռովմայ միով դարու յառաջ քան զծնունդն քրիստոսի մերոյ, առաքեաց աշխարհագիրս ՚ի չափել զերկիր ։ Սկիպիոն ափրիկեցի երկերիւր ամօք յառաջ քան զքս՝ պատերազմ մղելով յափրիկէ, յանձն արար պողիբիոսի գերահռչակ ժամանակագրի լրտեսել զծովեզերս ափրիկոյ, գաղղիոյ և սպանիոյ ։ Յուլիոս կայսր իբր 50 ամօք նախ քան զքս՝ ետ չափել աշխատս մղոնաչափս հռովմէական տէրութե ՚ի ձեռն զենոդոքսեայ ; թէոդորոսի և պողիկղետեայ, և ինքն ՚ի յիշատակարանս գաղղիական պատերազմաց ստորագրեաց զգաղղիս, և զբրիտանեան կղզիս ։

Ստուար մատեանն պղինիոսի հռովմայեցւոց բնագիտի ՚ի 74 ամին զկնի քնի՝ ցուցանէ թէ որչափ սիրէին հռովմայեցիք զուսումն աշխարհագրութե. յիշատակելով զյոլովս, որք գրեցին ՚ի յանձնառարութիւնս նոցա ։

Գերահռչակն ստրաբոն, որ ծաղկեցաւ առ ժամանակօք տէրութե օգոստոս կայսեր, և տիբերիոսի յամին իբր 25, կմ 19 ին սաքսոնոսի. Ճանապարհորդեաց Է բազում աշխարհս առ ՚ի վերայ հասանել գրեց աշխարհաց և քաղաքաց և բարուց զանազան ազգաց. և այսպէս արար զայն աշխարհագրութն ընտիր և կատարեալ, քան զոր ընդարձակ չունիմք ՚ի նախնեաց, բովանդակեալ ՚ի ԺԷ գիրս, լի տեղեկութիւնս. այլ ուրեք ուրեք թերատ և բազում ուրեք աղաւաղեալ ։

Կայ դեռ ես մատեանն ճանապարհորդութե ընծայեալ անտոնինոսի կայսեր որ յերկրորդ դարուն քնի. այլ զհեղինակ նորին աքսորեալ համարի լինել իբր ՚ի մէջն անդ Դ դարուն, իսկ դիոնիսիոսի յառաջս մեծին թէոդոսի ։

Առ տէրութե ադրիանոսի և մարկոսի աւրելիոսի,

որ, յամին Քրիստ. 138, կարգելոյ պատգամաւոր պատարա-գրելոց զերկիր, որչափ ինչ ծանօթ էր յայնժամ. Վերամբարձեալ զհետ աւետարանին աւրհնեաց յառաքելական, և 'ի մեծագործութեան ԺԲ չափոխման պատերազմական՝ Գնայելոյ պայծառութեն, և զերկայնութեն. որ յետոյ 'ի ձեռն քա-ղաքաց զննութեանց և փոքրայ Պտղոմէոսի եւս զատու:

'Ի գործ տպագրական եղանն և աշխարհագրացոյցք Նկարագրեալք յարդարագրութեանց, որք մինչև ցայժմ Երևելին տպագրելոյ յաշխարհագրութեան նորին պատու-մեալ: 'Ի 435 Նկարագրեալ յանծանօթ Հեղինակէ աշ-խարհագրացոյցն՝ Պէվտինկէրեան կոչեցեալ, հրաման-աւ փոքրուն Թէոդոսի՝ յորոյ անուն կոչի և երբեմն. որ է ճանապարհագրութիւն ինչ Ը հասարակն Եւրոպիա և յասիա մինչ 'ի յաւելիուտնա. առաջնոյ էհաս մեծն աղեքսանդր. մի ապա և ուրէք ուրէք 'ի մասունս գրեաց կոչի, աշխարհագրացոյց ճանապարհորդական, զինուո-րական, քաղաքական, ևն: Նոյնպէս աւանդեն՝ եղեւ զայս կանոնացուց կենդանէ, յետ ԺԵ դարուն. որ կատարեալ եղիցի 'ի պարգև կենդանասէր աշխարհագրութեան. յո-րոյ անուանե կոչի աւանդութեան Պէվտինկէրեան: Զա-ւանդեն տպագրեալ զայս աշխարհացոյց մարթա մեծութեան. զնէն 'ի 1753 ուղղագրեալ եւս տպագրելոյ 'ի Վիեննա քրիստոնէից չէր, 'ի ԺԸ ազգնեն աւուրս: Արդ ձեռագրեր օրինակ պահէ 'ի Վիեննա 'ի գրատուն կայսեր, որ կարծի լինել Նկարեալ 'ի 1265 յանանուն հեղինակէ, որ գրեաց նաև տարեգրու-թիւն հայոցերկրի:

'Ի Է դարուն ծաղկեալ նկատե այս գիտութիւն յարգեի մերում 'ի ձեռն քաղցրաչելոյ մատենագրի մերոյ Մովսիսի Խորենացւոյ, որ Է արդեամբ վարդապետ եղբօր՝ ծաղկե-ցելոյ 'ի ԺԵ և զարդարեալն քաղաքականութեան ուսումնաց. զորոյ աշխարհագրութեան մի այնոքիկ համառօտութեան բե-րեր և ցանկալի, զի բովանդակ ինչ համաշխարհական ումէ 'ի պատմոյ աշխարհանկարագրացոյ, որ էր երևելի աշխարհա-գիր երկրացոյց 'ի Աղեքսանդրիա մեծին Թէոդոսի, ո-րոյ աշխարհագրութեան քաղաքի ուր ուրեք երևի, յաշ-խարհագրութեան ասա խորենացւոյն մերոյ պատմեալ զհարդս այլև զնմանութիւն ինչ նորին պատմոյ ա-ղեքսանդրացւոյ: „Յորոյ նմանագիր քաղաքին „ պետաղեքսանդրացեալ առեալ (առէ Նա նոյն խոր. „ յաշխարհագրեալ".) պատմոյ աղեքսանդրացւոյ համառ „ օտաբար երկրագրութեան. յորում և մեր ծաղկեա- „ քաղ արտաքրեալ զբերցողս զմեծամեծն և զնշանա- „ ւորսն

„ տորան մնայն" : Բազում ինչ եւս խորհեցին եւ 'ի պատրաստեալս, բազում ինչ անդրէկացին մանէր նաեւ յակնկալութեան Հռոմայեցւոց մերոյ . որպէս ինքն Եսայի մեծ յ'է . „ Քանզի դյուզանակաւնոն (որ է մի „ Չերկրական ծածը) եւ դիւանաւորականութեան՝ եւ մերոց „ իսկ տարանց պատառմանց չուրջ անցանել" . խոր- յաշխարհական." : Իսկ զատորագրութիւն հայրապետա- նեայց էաւ յարքունի դիւանաց Թագաւորաց մե- րոց եւ 'ի քաղաքական մատեանից, որպէս յայտնի է ամենեցուն :

Ցետ այնորիկ 'ի զօրանալ տէրութեան արաբացւոց, սկսան եւ նոքա ծաղկեցուցանել զայս գիտութիւն : Մեծն ապատոլլահ մեմուն խալիֆայ պարտառաւ, եւ թագաւորաց արաբացւոց . որ մեռաւ 'ի 218 հիճրէ- թին, եւ յամի փրկչին 833, քաջահմուտ գոլով չափ- փաբերականն ուսմանց, մաթեմատիկական- ութեան, կոչեաց զբազում իմաստունս . եւ յանձն արար նոցա ճշգրտել զչափ երկրի : Իսկ նոքա ըստ բեցին մի այսր գործողութիւն զդաշնաբացն գաշտ մեջադասայ, կի դաւաղաւ անապատ որ ընդ ա- րեւելս կարմիր ծովու, եւ անդ պէսպէս գործողութ ուղղեցին զնախնի չափմունս . բայց եւ նոքա բա- զում վրիպեցան :

Սակայն զկնի չափման նախայիշեալ խալիֆայից՝ Է ժամանակս յոլովս ոչ ոք եղեւ հետամուտ առ'ի լաւ եւս ճշգրտել զչափմունս երկրի . այլ արտաքս ցեք զհետ երթային աստեղագիտաց իւրեանց, իսկ յոյնք եւ լատինք պարապմանց, եւ զնորին աշխարհա- ցոյցս պտղոմէականին :

Այլա իւրք գտաւ կողմնացոյցն, եւ գիտակն, եւ անուաւոր ժամացոյց, որք են մեծամեծ նպաստք աշխարհագրութեան, սկսան եւ իշխանք եւրոպիոյ փոյթ ատնել 'ի պայծառացուցանել զայս գիտութիւն : Սա- կայն յաղթել երեւելի աշխարհագրերք եւրոպիոյ տա- կաւս օգտեցան 'ի նորաստից անտի . որպէս աստ Դըլինղայոս Սամսոնն հռչակաւոր աշխարհագիրն որ մեռաւ 'ի փարիզ յամին 1667, թէպէտ վրիպակս գոր- ծեաց . զորս յետոյ ուղղեաց Գուլիէլմոս Տըլիլ 'ի ճեմարանին փարիզու . բայց եւ նա չկարաց զերծ 'ի սխալանաց . զոր ուղղեաց աշխարհականն Տանվիլ . այլ եւ տարբեր գրուածք կարօտացին ուղղութեան 'ի ծաղկել եւ եւս այսր գիտութեան :

Զբազմութեան զանազան աշխարհացուցից՝ ընդհա- նուր

նոր աշխարհաց, նահանգաց և գաւառաց, որք գտանին առ Եւրոպացիս, 'ի սկզբանէ անտի մինչև ցաւարտիլ դարս, համարին ամենայն լեալ. մինչ 16000 Թուով. յորս իբրև 1700 աշխարհացոյցք են միայն՝ որք սկզբնագիր գտողացն են, իսկ մնացեալքն առհասարակ օրինակեալ են 'ի սոցանէ :

Այլ նոր և երջանկագոյն դար աշխարհագրութեան սկսաւ յամին 1736. յորժամ հրամանաւ Լուդովիկոսի ԺԵ գաղղիացւոց արքայի երկու խումբք իմաստանոց յարքայական համալսարանէն փարիզու յանձն առին զաշխատութիւն Ճանապարհորդութեան 'ի հասարակածն կոյս, և 'ի հիւսիսային բևեռական շրջանակն, 'ի Ճշգրտել զձև և զմեծութիւն հողագնտոյս մերոյ : Եւ զկնի բազմաջան Ճգանց՝ գտին զի գունտ երկրի ոչ էր ըստ ամենայնի բոլորաձև, այլ ըստ երկուց ծայից տափակաձև, Ճնշեալ 'ի բևեռաց կուսէ, և ուռուցեալ առ հասարակածիւ. ըստ որոյ հարկ եղև ուղղել գէթ մի ծովագնաց Ճանապարհորդութեանց զամ աշխարհացոյցս :

Այլ զայսմանէ վերաբերեն ունիմք խօսել առաւել 'ի Ճառս մեծութեան և ձևոյ երկրի :

ԳԼՈՒԽ Գ.

Պէսպէս չափք այլևայլ ազգաց :

Սկսեցեալ խօսել ինչ ստուգապէս յաղագս պէսպէս չափուց այլևայլ ազգաց, կարևոր համարիմ նախ զչափս նախնեաց հռովմայեցւոց և յունաց և այլոց ազգաց ուսանել, որք և յանձնարկեալ են 'ի գիրս. որպէս զի որք ընթեռնուն զայնոսիկ, կարող լիցին հասու լինել որքանութեան չափուց նոցա. և տակա զչափսն՝ զոր առեալ 'ի գործ ածեն աշխարհագիրք : Այդ սկիզբն արասցուք 'ի չափուց հռովմայեցւոց, որք առաւել արուշ են :

Չափք նախնի հռովմայեցւոց՝ յորոց բաղկանայր մղոնն նց, և յորս բաժանէր սկսեալ 'ի մատնոց՝ են այսոքիկ. Կոնտիլոս. Տ'իճիտուս. Ո'ւնկիա. Բա'լմուս. Բէս. Գու'պիտուս. Ո'ւլնա. Բա'սսուս. Դէ'ճէմբէտա. Փէ'րդիգա. Ստա'տիոն. Մի'լլիարիոն. ոմանք յաւելուն և զԼևգայն. բայց այն՝ ոչ էր սեփական հռովմայեցւոց, այլ գաղղիացւոց՝ այսինքն Փռանսացւոց.

ղաց. զոր Թէպէտ և համեմայնեցեք 'ի գործ ածել, բայց 'ի գաղղիա միայն, և ոչ յիտալիա:

Կաստիլեան. Հօռ: Է նոյն խակ գաղղիական Է եղ կայսին եղեալ. առ է ոկիզըն չափուց համեմայնեցոց:

Տէմիրքատ. Մայլ: Ունի չորս գաղղիական եղեալ ատ միլեանքս ըստ երկայնութեան:

Ոնգերիա. Ունկի: Ունի զմի մասն, նաև զմի երրորդ մասն մասունն. կամ թէ ունի զմի բոլոր մասն:

Բոհեմիա, կրկին է, փոքր և մեծ: Փոքրն է Ռուղոփ, և ունի մասունս չորս կցեալս առ միլեանքս. իսկ մեծն է Թոյզ, և ունի երկոտասան մասն, քառորդիւ պակաս քան զոյան. մի սոյն կոչի և Տօղոան, և 'ի Պղինիոսէ յոյն ձայնիւ Մէյիեա,

Բէռ. Ոփն: Այս չափ առաւել 'ի գործ ածի, և սովորաբար կոչի ոտն մեծապատնեալ: Ունի գաղղիական 64. մասունս 16. ըստ զնէ նաև խոր. յաշխարհագրութեան երրում. ունկիս 12. և սաղուկս 4:

Գրոալիտոա. կամ Գրոալիտում. Կանգուն: Ունի ոտն և կէս. սաղուկս 6. ունկիս 18. և մասունս 24: Եր կայնութեան որ ձգի 'ի միջամասնութեան մինչ 'ի յարմուկն. ոտք և այժմ յաղագի մերում այս է չափ կանգնոյ:

Բառսա. Քայլ: Է միջոցն՝ որ ձգի 'ի կիւնէ միոյ ոտին մարդոյ մինչ 'ի կէս միւս ոտին յորժամ քայլէ: Բաժանի 'ի քայլ մեծ և 'ի քայլ փոքր. քայլ փոքր ունի ոտս երկուս և կէս. և կոչի Ոփսէնի: իսկ մեծն է կրկնապատիկ, զի ունի ոտս հինգ. այս մեծ քայլ՝ կոչի Քայլ աշխարհագրական, կամ սակ Քայլ 'ի խօսս աշխարհագրականս: Երկոքին տեսակք քայլից բաժանին յերիս կարգս այսպէս:

Քայլ Համեմայնեցոց	Փոքր, կամ Պարզ. լատ". Սիմփլէքս, կամ Կոմմունս:	1. Երկոտնեան. 2. Երկոտնեան և կէս. 3. Եռոտնեան. որ է քայլ զօրքեացոց:
	Մեծ, կամ Կրկնակ:	1. Քառոտնեան: 2. Հնգոտնեան, որ է քայլ երկրաչափական. զոր ոմանք կոչեն և Զօրքական: 3. Վեցոտնեան, որ է քայլ երագոտուն:

Զայս

Զայս վեցոտնեան քայլ յիշէ և մեր Խորենացին ։ „ Եւ քայլն վեց ոտն ” ասէ ։ 'Ի դէպս անստերաց առաջի Հնդուամսեան քայլն՝ առօրաբար 'ի գործ ածել ։

Եռամեկասամ. Լատինաբ կամ Օրոմէոր ։ Ունի երկայնութիւն 240 ոտնաչափ, և լայնութիւն 120. որով բաղկանայ յերկուց քառակուսեաց, և է չափ անդաստանի՝ զոր լծոյ մի եզանց կարէ հերկել 'ի միում աւուր, որպէս գրէ պլինիոս ։

Փէսոլիօս. Զող ։ Ունի տասն ոտն, մի որոյ կոչէին Տեկմիլիօս. Տասնոտնեան. իսկ զփէտոդեկային որ ունէր ոտս վեց, և է քայլ՝ կոչէին Հեքսամեդոս. վեցոտնեան. որպէս առօրաբար յայժմեան չափս առնուլ լինի ։

Սդադիօն. Ասպարէզ ։ Թէպէտ յաճախ 'ի գործ ածի 'ի հռովմայեցւոց, այլ և յայլոց ազգաց, բայց քանզի է չափ յունաց, զոր նոքա ստադիոն կոչէին, յայն ասեմ 'ի կարգս չափուց յունաց ունիմք սահմանել զայն ։

Միլլիառէ. կամ Միլլիարիոն. զոր նախնիք մեր տառադարձութեամբ կոչեցին Մղոն. նշանակէ առ հռովմայեցիս հազարաւոր, կամ հազարեան. իբր զի ունի 1000 քայլս հնդուամսեայս. քզի անուանն Միլէ 'ի լատին բարբառ հազար լսի, յորմէ հռովմայեցիք զնոյն տարածութիւն հազար քայլից միլլիառէ կոչեցին ։

Յայսմ միաբան են համօրէն նախնիք մատենագիրք, այլ ոչ նոյնպէս 'ի մի թուոյ ասպարիզաց պարունակելոյ 'ի մի մղոն ։ Զի Եւսեբիոս ասէ՝ թէ մղոնն լատինացւոց է չափ ճանապարհի եօթն ասպարիզաց. պղուտարքոս փոքր մի աւելի դնէ, զի ասէ. „ Մղոնն փոքր մի պակաս է յութ ասպարի„զաց ”: Իսկ այլք բազումք ութ կատարեալ ասպարէզս տան միոյ մղոնի ։ Պողիբիոս. գիրք Գ. գլ. 39. ասէ. „ Զմիջոցս հռովմայեցիք ութեակ ասպա„ րիզօք խնամով չափեցին, և նշանօք որոշեցին ”։ Ստրաբոն գիրք Է. երես 223. ասէ. „ Որպէս բա„ զումք համարին՝ մղոնն է ութ ասպարէզ ”։

Զնոյն հաստատեն ամ մատենագիրք հռովմայեցւոց. այլ և համօրէն բնակիչք տէրութեան նց ։ Վա որոյ մարթ է անտարակոյս հաստատել, թէ մի մղոն հռովմայեցւոց պարունակէր ասպարէզս ութ ։

Իսկ զի Եւսեբիոս և պղուտարքոս ոչ տան ամբողջ ութ ասպարէզս առ մի մղոն, այն է պատ-

ճառն՝

Նշխեա 15

Համառ մայիցուց	Ասպա րեղ	Փող	Քոյլ երեքումն
Մշնին է	8	500	1000
	Ասպա րեղն է	62 $\frac{1}{2}$	125
		Փողն է	2
			Քոյլն երկ րամ՛՛ է.

[illegible] զի որպէս երկիր [illegible] յայն [illegible] է. յուսնական [illegible] շաւիղներն [illegible]. իսկ [illegible] յուսնոյ առ [illegible] մի [illegible] էր քան [illegible] հա- [illegible], կամ [illegible]. [illegible] 'ի [illegible] յուսնոյ և այլոց է։

Զայս [illegible] [illegible]՝ կամ [illegible], [illegible] էին նախնի հռոմայեցիք [illegible] կամ [illegible]. [illegible] զի [illegible] [illegible]. կամ որ նոյն է [illegible] 'ի նշանակ [illegible] [illegible]. յայն [illegible] հռոմայեցւոց կամ [illegible] [illegible]՝ [illegible] կամ [illegible]. [illegible]. [illegible] [illegible], և [illegible] [illegible] են. մինչև նոյն [illegible] [illegible]՝ որ [illegible] է [illegible], կամ 1000 [illegible]։ 'ի նախ- [illegible] և 'ի [illegible], [illegible]. [illegible] 'ի [illegible] հռոմայ. [illegible] [illegible], և [illegible] [illegible]։

Զայս [illegible] 'ի [illegible] նախնի հռոմ- այեցւոց՝ [illegible] 'ի [illegible] [illegible], [illegible] 'ի [illegible]։ Զորոց [illegible] [illegible] յաւալիկայ [illegible]։

Ամիսք նախնի յունաց են այսոքիկ. [illegible]. [illegible]. [illegible]. [illegible]. [illegible]. [illegible]։ [illegible] և [illegible] [illegible]. [illegible] այն [illegible] է [illegible] [illegible]. [illegible] է յունական։ [illegible] և [illegible] է [illegible]։

[illegible]. [illegible]։ [illegible] [illegible] [illegible] [illegible]. [illegible] և [illegible] է [illegible]։

[illegible]. [illegible]։ [illegible] [illegible] 'ի [illegible] [illegible], մինչև 'ի [illegible] [illegible] [illegible] և [illegible] [illegible]. [illegible] և [illegible] [illegible]. [illegible] [illegible] [illegible], որ է [illegible] կամ [illegible]։ [illegible] է [illegible] [illegible]՝ [illegible] [illegible]. [illegible] [illegible]

որ

որ բաժանէ յերկոտասան ունկիս . և երբեմն Թարգմանեն Ոփնալուֆ . այլև Կիսոփնալուֆ . որ գրեթէ նոյն է որ ինչ քէլն . որոյ տարածութիւն է ութ մատնաչափ :

Փուսս . Ոտն : Ըստ Երոդոտոսի ունի չորս բաղէսթի . որք առնեն վեշտասան մատունս . բայց փոքր մի մեծ է քան զոտս հռովմայեցւոց , ոտք և մատունքն մեծ քան զհռովմայեցւոցն . զի է չափ ոտից հերակլեայ , որ չափեաց իւրովք ոտիւք յոլիմպիական ասպարէզ . և յայն սակս անուանեալ կոչի Ոտն ոլիմպիական :

Օռգիիա . Գիրկ . այն է՝ ղուլաճ : Սորա երկու են տեսակք . մի՝ ճիշտ , որ ունի վեց ոտնաչափս . և միւս եւս մեծ , որ ըստ Թեոփրաստեայ՝ ունի տաս ոտան :

Բիպլեթրոն . է չափ գրեթէ հարիւրոտնեան . հռովմայեցիք զսա Յուճէրում Թարգմանեն :

Ա՛րուրա . որ Թարգմանի Արտ , կամ Երկիր վարեալ . զոր մեք կարեմք կոչել Արօրավար : Է չափ տարածութեան ի ոմանց 50 ոտնաչափ . իսկ ի այլոց հարիւր կանգուն . այսինքն՝ հարիւր յիսուն ոտնաչափ :

Ստադիոն . Ասպարէզ , Ապառան : Է չափ յունաց յաճախեալ յոյժ առ նախնի մատենագիրս յունաց , և լատինացւոց , և մեր , ուստ և 'ի մեր գիրս . որ ըստ միաբան կարծեաց նախնի մատենագրաց՝ է 125 քայլ . կամ 600 ոտնաչափ՝ ի ոլիմպիական ոտից : Բայց ոմանք 'ի վ(երայ) 600 ոտից յաւելուն և այլ 25 ոտս . ուստ ալլեքսիոս . որ գիրք Ը . գլ . 23 . ասէ ,, Ասպարէզն ,, առնէ 125 քայլ 'ի քայլից մերոց . այս է՝ 625 ոտ-,, նաչափ '' :

Կեռսսերինոս յաղագս աւուր ծննդ . գլ . ԺԳ . զանազան ասպարիզաց յիշատակէ : ,, Ասպարէզ (ասէ) ,, 'ի չափս այսր աշխարհի զայն յաւէտ իմանալ ,, պարտ է , զոր իտալական կոչեն . որ է 625 ոտնա-,, չափ . քանզի են և այլք անհաւասարք ի երկայ-,, նութե . որպէս ոլիմպիականն , որ է 600 ոտնա-,, չափ . (1) և Պիւթէանն 1000 ոտնաչափ '' :

Իտալական կոչէ (ասէ կեղարիոս ,) զի զայն 'ի գործ էած աշխարհագրաց գլուխն իտալացւոց գրա-

բոն

(1) Յայս միտ առնուն և մեր մատենագիրք . որպէս գիւղացւոց սորին :

րոսյեն 'ի չափել զհեռաւորութիւն մարմնոյ աշխարհի. զոր կենտրոնիւս համարի մեծագոյն քան զշրջանակական ասպարիզին յունաց, որ էր 600 ոտնաչափ : Բայց քանզի ոտք ողիմպիականք ըստ որում համաստ ատեց հերակլեայ ստուգութեամբ քան զոտս հասարակս. վասն այսորիկ են՝ մեք համարին թէ 600 ոտք ողիմպիականք հաւասարին 625 հասարակ ոտից. որ էր չափ ասպարիզի խաղացից : Իսկ ըստ այսմ չափ ասպարիզին նոյն էր առ յոյնս և առ խաղացիս կամ առ հռովմայեցիս. այսինքն 125 քայլ : Սդատերոնն կամ ասպարիզին կրկնեալ՝ կոչի Տիաւլոս. և Տիաւլոսն կրկնեալ՝ կամ չորս ասպարիզին՝ անուանի Տօլիխօս :

Մէյլոս. ըստ անգղիացւոց անուան պարսկական. իսկ ըստ եւրոպացւոց՝ անուան եգիպտական, կամ սեփական չափ եգիպտոսի. բայց են որք ասեն՝ թէ է անուան յունական, որ 'ի բարբառ նոցա նշանակէ կնիւն. յորմէ Մէյլիօն, այս է՝ կէմ. պարան. լար : Քանզի ոնք ասէ սՔՆ հերոնիմոս՝ ստորութին է եգիպտացւոց 'ի նաւելն Է նեղոս, կամ Է վտակս նր, պարանաւ ձգել զնաւսակս. ունելով սահմանեալ միջոցս, ուր ձգօղք նաւակաց փոփոխէին. և 'ի սեղի առաջնոց վտառակելոց՝ այլք մտանէին ընդ պարանաւ. յայս անկս զմիջոցն զայն Մէյլոս, կամ Մէյլիօն կոչէին. այսինքն Պարան. իսր զի ևնդ պարանն ձգանէր 'ի պարանորդս այլոց : Յորմէ լինի երևի թէ բառն է յունական. սակայն գործածութիւն նր փոխանակ սահմանաւոր չափոյ՝ է սեփական եգիպտացւոց. որպէս ասէ Երոդոտոս :

Այլ 'ի մր չափոյ ասպարաց նր պէսպէս կածիք են նախնի մատենագրաց : Ոմանք առ մի սքէնոս՝ եդին 32 ասպարէզ : Այլք 40. որպէս գրէ Ստրաբոն 'ի ԺԵ գիրս. և ոմն մեկնիչ ողջոյնիոս զերաասութեանց 'ի գիրս ԺԶ. գլ. ԺԳ. ուր ասէ. « Սքէ- « նոս ըստ հաշուի երասոսթենեայ է 40 ասպարէզ. « այս է՝ 5000 քայլ » : Իսկ Երոդոտոս գիրք Բ. գլ. Զ. որում զհետ երթայ և Երմոգէնէս՝ առեալ 60 ասպարէզ, ասաց և երկու փարսախ. ըստ որում առնու զփարսախն նա իբրև Երոդոտոս. զոր տեսցես 'ի բացատրութեան փարսախին ունիցիս նշանակել :

Այս անհամաձայնութիւն մատենագրաց՝ ծագէ 'ի զանազանութենէ չափոյ սքէնոսի այլևայլ տեղեաց. զի որպէս ասէ Ստրաբոն գիրք ԺԵ. երբեմն 553, առ նոյն իսկ եգիպտացիս անհաստատ էր չափ սքէնոսաց.

սայ. զի 'ի Նաւակին եւրեւնց Է նեղոս՝ զոր ագինոս 40 աստիճանեալ հաշուեցին. իսկ յայլ անդրն՝ յաւելոս և նաւաց. նոյնպէս և ԶԸ նորին աստիճանի՝ հասարակ անելոյ 'ի վերջաւորութեան արանածոցորդայ. յաղէքսանդրիոյ մինչև ցգլուխ կամ ցծայր անելմայնն զոր ագինոս հաշուեցին 30 աստիճանեալ. 'ի պեղուսիոյ մինչև ցծայրն զլուխ՝ 25. 'ի մեմփիսայ մինչև 'ի Թեբայիդ իւրա-քանչիւր ագինոսի սոյին 120 աստիճանեալ. 'ի Թէ-բայիդայ մինչև յաւուհէն, (այն է՝ սիէնէ, այժմ ասուան) 60։ Եւ յաւելու աստղաբան, Թէ և Թեւա-փոխեսս 'ի առօրեայ դրութ հայրապետանայց, (զոր առնէ լինել երկայն 100 ագինոս, և կրկնապատիկ լայն,) զագինոսն ըստ մանր փոխանակ 40 աստիճանիցն։

Յայսմ ամէ յայտ է Թէ ագինոսն չունէր զասահմա-նաւոր ինն չափ. այլ ԶԸ զանազան անդեաց՝ զանա-զան էր և տարածումն նր. սակայն սովորել ասել-բական չափն էր 32 աստիճանեալ։ Այլ զիարդ և իցէ, չէք 'ի դէպս նախնեաց այնչափ յաճախ գործա-ծութեան այսր չափոյ։

Փարոսի. կամ ոտք հնչեն եւրոպացիք Բաստանժնկո կամ Ֆարանժնկո. իսկ ԶԸ բուն հնչման պարսից Փէր-սէնկ. և Փէրսէնկ։ Եւ անուն չափոյ պարսից. զոր յոյնհաննէս կանոնաւորս չափոց տառագրաւ յանուա-նէս Փարսի, որ նշանակէ Պարսիկ. և 'ի մասնաւո-նէս անկա. յորմէ յունական անուանք Անկառոս. որ նշանակէ Հրեշտակ կամ Սուրհանդակ պարսից, այսինքն՝ Մեհդիի։

'Ի սմանէ եղանէ յունական բայս Անկառել. որ է Տարապարհակ վարել, Ստիպել. ևս զի սովո-րութեամբ սուրհանդակաց զօրիմացու, կամ զայլ աւետա-ճանապարհի առնլով յաւիշտակաւ վարել։

Այլ չափոց մի իւնան յայսմ տասագարանութեան. զանզի ըստ բուն հնչման պարսից Փէրսէնկն Ֆէլս-զրի. իսկ ֆարսին միլիոս. և զի արաբացիք չունին զՓիւր տառն. վա այսորիկ զանուն փարսի՝ Ֆար-սի հնչեն։ Ըստ մեծաղ Փէրսէնկն 'ի բաբելոն պար-սից էիւ գրի. իսկ Ֆարսին այլեւ. Թող զայն, զի ԶԸ հնչման լատինացւոց տառագրանէ, որ հեռաց-եալ է 'ի բուն հնչմանէ պարսից. ուստի և ոչինչ զօրէ. այն զի որպէս հասարակն հմուտք լեզուին պարսից, անունս Փէրսէնկ չունի առ նա տառագա-րանուն ինչ. և չէ իսկ բարդեալ կամ բաղադրեալ. այլ պարզ անուն։

Այլ

Այլ ՚ի մէջ չափոյ տարածման փարսախին ան-
համաձայնութիւն են նախնի մատենագիրք . զանզի զատ
ատրպատականի գիրք ժա . երկու 3½7 . ոմանք 60 ասպա-
րէզ տանեն մէջ փարսախի . այլք 30 . կէսք 40 . յոր-
մէ յայտ է թէ, չափ նոյն զանազան էր ըստ զանազան
տեղեաց . զոր և այժմիս նշանակէ գիրք Գ : ՏԼ-
ԽԶ : Բայց ըստ կերպարանի ՚ի զանազան չափոց սա-
ռոյ զգայն ստորոյ է առնուլ երր հասարակ և անխա-
բանական չափ փարսախի, որ ՚ի բազում անձինս գե-
րէ . և յորում բազում մատենագիրք միաբանեն :
Այլք՝ Երոդոտոս, Եսիքիոս, Ստրաբոն, և Երոն՝ 30
ասպարէզս տան մէջ փարսախի . այլ մարթ է ան-
սամնել ՚ի գիրս նոյն : Այլ ստեփանոսեան չափ նորա է
30 ասպարէզ . այլ առնու և մերս Խորենացին յա-
սելն . ,, Խորասանին (կամ փարսախին) է Գ մղոն '' .
այսինքն՝ երեք մղոնք առնեն 30 ասպարէզ . զասպա-
րէզն առեալ 100 քայլ : Սակայն պարսիկք զփար-
սախն մինչև ցայսօր վարեն փոխանակ չորս աշխար-
հագրական մղոնաչափ տարածութեան : Իսկ մեք թէ
յեմնէ մերս ունիմք վարել զփարսախն առնուլ ՚ի մի-
բանութիւն աշխարհագրական տորոյ յայտնեսցուք :

Չափք նախնեաց մերոց են . Մատն . Ոտն . Քայլ .
Ասպարէզ . Վտաւան . Աշխարհիկ մղոն . Մղոն . Հրա-
սախ, կամ որ նոյն է Փարսախ . Պէտաղիք . Մատն .
Օթեւան . Կայանատուն :

Մատն : Է նոյն իսկ մատն համեմատութեամբ . ամէն
՚ի մերոյ :

Ոտն : Է 16 մատնաչափ, ըստ ամենայն յունաց՝ որ և
կոչի Ոտն Հերակլեան, կամ Ոտն ողիմպիական . այլ
գրեցաք ՚ի մերոյ :

Քայլ : Է 6 ոտն, որ համեմատ է օրկիայի յունաց .
ամէն ՚ի մերոյ զոր լինէ գրեցաք զօրկեայն յունաց և
զքայլն համեմատութեամբ :

Ասպարէզ : Է 100 քայլ . զքայլն առեալ 6 ոտնա-
չափ, որով և ասպարիզին լինի 600 ոտնաչափ . և ըստ
այսմ նոյն է ընդ ասպարիզին յունաց կամ ստադիոնին .
վասն զի նոքա ևս զասպարիզին ըստ ոտից գնեն 600
ոտնաչափ . իսկ ըստ քայլին Թէոդէսու 125 քայլ գնեն .
այլ քայլ նոյ է հինգ ոտնեան ըստ ողիմպիական ոտին՝
որ է մեծ . ամէն զոր ասացաք ՚ի մերոյ զստադիոնէ
յունաց :

Վտաւան : Է նոյն ընդ ասպարիզին . այս է 100 քայլ :
Աս-

Արշաւանք ձիոյ. կամ Ձիընթաց։ Է ասպարէզ և կէս։ Ցնէ զայս աղաւթ. 'ի յԿՁ. որ յանձնակատարն զնէ Ասպարէզ և կէս։

Մղոն։ Է 1000 քայլ, կամ եօթն ասպարէզ ըստ պարսից ասպարիզին. որոյ մի ասպարէզ է 143 քայլ ըստ գնելոյ խորհրդոյն. զորմէ տես առաջն։

Փարսախ. որ և կոչի խրսախ, կամ Հրասախ։ Է 3 մղոն, կամ 30 ասպարէզ. այս ասացաք 'ի վերոյ 'ի խօսելն զփարսախէն յունաց։

Խրսախ, կամ Հրասախ։ Նոյն է ընդ վերագրեալ փարսախին. և զի է անուն և չափ պարսկական, վասն այսր ուրեք ուրեք Պարսիկ հրասախ կոչէ։ „ Տարաւ հեռի „ (ասէ զաղաղ փարսախեցի) այս պարսկաւ մերով „ Հրասախաչափօքս"։

Նէշտայիճ։ Է 4 մղոն. այս յայտնի երևի 'ի չափս մնացեալ հեռաւորութեանց ոմանց քաղաքաց յօրինեալ ըստ մասին 'ի սուրբ գրոց ուսմանէ։

Մառն։ Է 500 ասպարէզ պարսից ըստ լայնութե և ըստ երկայնութե չորեքկուսի, վասն մի մասն է 71 մղոն և կէս։ Խոր. յաշխարհագրութե իւրում զԿիպրոս կղզին չափել կամելով, զերկայնութիւն նորա գնէ մասունս Գ, որ առնէ 213 մղոն, և զլայնութիւն նորա մասն մի և կէս. որ առնէ 106 մղոն և կէս։

Օթևան։ Է չափ Ճանապարհի միոյ աւուր. զոր տես առաջն։

Կանգուն։ Է երկայնութիւն որ յարմկանէ մինչև ցծայր միջամատին հասարակաչափ մարդոյ, և է չորրորդ մի գրկաչափի։

Զայս ծանօթութե 'ի վերոյ նախնի չափուց մերոյ ազգիս՝ առաք 'ի զանազան մատենագրաց, մանաւանդ յաշխարհագրութե Խորենացւոյն, հայելով 'ի զանազան ձեռագիրս զորս ունիմք առ մեզ. և ընդ նոյնս համեմատելով ըստ չափուց հռովմայեցւոց և յունաց, զորոյ զբանս բերցուք յառաջիկայդ, մեկնելով որչափ ինչ հնար է։ „ Ասպարէզն է հեռա- „ կացուն. այսինքն՝ վաստուան մի. (հեռաւորութեամբ խմանայ խոր". զհեռաւորութիւն միոյ տեղւոյ յայլ տեղի գնալով ընդ բնական Ճանապարհ. վասն կոչէ նաև գետնաչափութի. տես 'ի 6 երես նորին աշ- „ խարհագ. խոր".) և է ասպարէզն ըստ օդաչափութ „ քայլս Ճ, (օդաչափութ խմանայ զուղղագիծ Ճա- նապարհն. զոր ընդ օդս հնար է չափել գործեօք. տես 'ի 6 երես նորին աշխարհագր". խոր.) և քայլն „ Է

,, ԿԲ տուն . և տուն ԺԶ մատն , և մղոնն է ասպարէզ
,, է . (իմա՛ զասպարէզն պարսից .) իսկ պարսից
,, ասպարէզն , ՌՃԶ քայլ . որպ զի լինել դետոմերչա-
,, փոսուէ՛ մղոնն Ռ քայլ . և խրատամանն , (կամ ըստ այլոց
,, օրինակաց փարասախն .) է Գ մղոն . բայց է օգա-
,, չափումն երկրաչափութեան մասն . Շ ասպարէզ . (իմա՛
,, զպարսից ասպարէզն .) 'ի լայնն՝ և նոյնչափ յեր-
,, կայնն չորեքկուսի , որպ զի լինել մասին 'ՏՌ մղոն " :

Յօրինակս ինչ խոր" . մի մեր ասպարիզին դնի ուռնել ՃԾ քայլ . յօրինակս ինչ ՃԿ քայլ . իսկ յօրինակս ինչ Ճ քայլ . յորոց Ջքն վերջինս այս յարմարի ասպարիզի յունաց , մի այնորիկ զայն գաւառացուցանելիք : Յօրինակս ինչ փոխանակ պարսից ասպարիզին , եդեալ կայ ասպարիզաց ասպարէզ . որ յայտնի մեկնակ է . և չիք այս չափ յայլ գիրս ինչ . իսկ յերկուս օրինակս ոչ գտանելոյ ոչ ասպարիզաց ասպարէզ , և ոչ պարսից ասպարէզ . մինչ մեք եդաք ըստ ձեռագրի միում՝ ուր 'ի խօսելն զպէսպէս չափուց , 'ի խորենացւոյն անուն կարգաւ և զվերոդրեալ չափս , և փոխանակ ասպարիզաց ասպարէզին՝ դնէ պարսից ասպարէզ : Զորոյ զուղղութիւն յայտնի ցուցանէ այն բան խորենացւոյն՝ ուր ասէ . մղոնն է ասպարէզ է . և թէ մասն Շ ասպարէզ է . կամ թէ ՏՌ մղոն , զի ըստ այսմ օրինակաց ասասէն ոչ դնէ ասպարիզաց ասպարէզ . այլ միայն ասպարէզ . այսինքն զասպարէզն ըստ մեր ասպարիզին առեալ , է ասպարէզ ոչ առնէ մի մղոն , և հինգ հարիւր ասպարէզ ոչ առնէ ՏՌ մղոն . այլ հարկ էր խորենացւոյն զայլ ինչ ասպարէզ իմանալ ասասէն 'ի մեր ասպարիզէն , որ է նոյն իսկ պարսից ասպարէզ :

Յոհաննէս երզնկացին 'ի մեկնե" մատթէի . Ե . 41 . Չէհանրատապէս առնու զմղոնն 'ի նախադասելն չափուց՝ յորժամ ասէ . ,, Մղոնն Փարասանգն է . զոր Զիլի-
,, թաց մի ասենք անուանեն . և այլք Զորմահաս ,
,, և կէսք Քարընեկց , և ոմանք Նշատամիր մի :
,, Բայց Ճշմարտապէս Ասպարէզն է , որ է երկու
,, տասան հազար քայլ ըստ երկրաչափական արհես-
,, տին " :

Նախնիք չափէին զՃանապարհս օթեւանօք , որ 'ի հռոմայեցւոց կոչի Մանսիօ . 'ի մերոց մատենագրաց Օթեւան , իսկ 'ի տաճկաց Գոնաք . քանզի աւելորդ էր 'ի հնումն չինել պանդոկս 'ի մէջ ալքասնի Ճա-

նա-

նաւապարհաց 'ի Նեղոսէ ճանապարհորդաց, որ անդ օթեվանս կալցեն 'ի գիշերի. և յայնմանէ և զմիջոցն հեռաւորութեան 'ի միմեանց, որ ԺԲ լսելատեղեաց էր 18000 քայլ, կոչեին նոյնպէս օթեվանս. ոմն ասէ պլինիոս գիրք ԺԲ. գլ. ԺԳ. ասէ „ Գիւղն Թա- „ գաւառին կառավար 'ի վր բարձր լերին. յաղագս „ ոյր օթեւանօք հեռի է աշխարհ նոցա խնկաբեր „ սաստ անուանեալ" :

Այս սովորութիւն գոյ և այժմ յեւրոպիա, ուր 'ի վր արքունի ճանապարհաց սովորաբար կառուցեալ կան պանդոկք 'ի պէտս ճանապարհորդաց, և արքունի թղթատարք սուրհանդակաց. որք անդ փոխեն զերիվարս. և այն պանդոկք կոչին և Փօստ. յորոց միջոցն հեռաւորութեան 'ի մէջ նոցա՝ նոյնպէս անուանի, վասն բազում՝ անգամ փոխանակ ասելոյ ասոր միւսէ ցայն տեղի է այսչափ մղոն, ասեն այսչափ փօստ. թէպէտ և միջոցք իւրաքանչիւր փօստից չեն հաւասար միաչափ հեռաւորութեամբ և միաչափ մղոնիւ :

Գտանին և յասիա ուրեք ուրեք 'ի վր արքունի ճանապարհաց մեծամեծ շինուածք, զոր [illegible] խան կոչեն. և մեք կոչեմք յայս գիրս իջեւան շինեալ յօթեւանս ճանապարհորդաց. բայց միջոցք հեռաւորութեան նց 'ի միմեանց, յայժ տարբեր անկարգ են քան զեւրոպացւոց : Որոյ վս արեւելեայք սովորաբար օթեւանօք, այս է՝ դանաւոր չափեն զճանապարհ, խմանալով զմիոյ աւուր գնացս ճանապարհի. վս նոյն է առ նոսա օթեւանն կամ դանաւոր, և նոյն աւուր ճանապարհ. որոյ սովորականն է գնացք վեց կամ եօթն ժամուց ԺԲ գնացից կարաւանին. այլ ուրեք ուրեք կարաւանն իջանէ մինչ 'ի գնացս չորից ժամուց. և ուրեք ուրեք տանելով մինչ 'ի գնացս տասն ժամուց, զորս [illegible] կոչէ Աբու Էսէբը :

Այս սովորութիւն, այսինքն աւուրբ չափել զհեռաւորութիւն տեղեաց հնագոյն էր և առ նախնիս. որպէս մարթ է տեսանել առ նախնի մատենագիրս յունաց, լատինացւոց, և այլ. բայց 'ի վր չափոյ տարածութեան միոյ աւուր ճանապարհի հեռի գնալով չեն համաձայն մատենագիրք. զի տարաբերոյ յատուկին գիրս իւր դնէ աւուր ճանապարհի գնէ 333 ասպարէզ. այսինքն 20 լեւղաս գաղղիական. կամ գէթ 250 ասպարէզ, որ է իբր 15 լեւղաս. իսկ յեօթնեկորդ գիրս՝ 310. ասպարէզ. այսինքն 38 մղոն, զի 8 ասպարէզն՝ ոմն եղեալ 'ի միլոյ, է մի.

մղոն

մղոն համեմատելեաց ։ Երկրագունդս 'ի շրջապատ գիծս գծէ 200 ասպարիզաց. իսկ պտղոմէոս և տիւրոս ըն-դունին 150 ասպարիզաց. այսինքն իբր 9 լէւղայ գաղ-ղիական. նոյնպէս և այլք այժմեան չափս սահմա-նեն ։ Այլ սովորական գնացք հետևակ մարդոյ 'ի միում ժամու՝ համարի առնուլ (առ գծէ նաև ալե-շխնել հո. իզ.) 3 մղոն, որ է 1 փարսախ. որով 'ի 20 ժամու առնէ 60 մղոն, որ է մի աստիճան ։

Իսկ զչափ աւուր ճանապարհի զինուորաց՝ համա-րեալ են սովորաբար 20 մղոն հաշուելին. բայց կրկ-նակիս նորոն 33 մղոնս առնէր յաւուրն ։ Աղեքսանդր 'ի նուաճել զպարսաստանն արշաւեաց յերկուս աւուրս ասպարէս 600 ասպարիզաց. որ առնէ 75 մղոն. ուստի յաւուրն առնէր 37 և կէս մղոն ։ Բայց այժմ 'ի պատ-ճառս մեծամեծ հրացանից՝ և այլոց բազմապատիկ պատերազմական կահից՝ հազիւ տասն մղոնս կարեն առնել յաւուրն ։

Գտանեմք 'ի գիրս նախնեաց զճանապարհորդու-թիւն զօրաց չափել բանակօք. որք էին իբր ասպարէզա-կան օթևանք նց ։ Լիվիոս գիրք իզ. ասէ. „ Ելեալ „ բանակելին 'ի սինայեան, յետ չորրորդ բանակի է „ հասա յամփիպոլիս ". այսինքն յաւուր չորրորդի ։ Եւ Կուրտիոս գիրք Գ. գլ. Թ. ասէ. „ Աղեքսանդր „ յետ մետասաներորդ բանակի եհաս առ եփ-„ րատ ". Նոյնպէս և յայլ բազում տեղիս ։

Առ նախնիս էր սովորութիւն աւուրբ չափել նաև զճանապարհ ծովու. այլ չափն նց չէ որոշեալ իբրև առ. մեռոդոտեայ ։ Հերոդոտոս 70 հազար օրկիա գնէ Է օրն. այսինքն է՝ 700 ասպարիզաց. (զասպարէզն առնելով 600 ոտնաչափ իբ ոլիմպիականին.) որ առնէ 8 մղոն համեմատելեաց. և 60 հազար օրկիա ընդ գիշեր, այսինքն 600 ասպարիզաց. որ առնէ 75 մղոն ։ Պտղոմէոս առ ստրաբոնիւ, կարծէ թէ 'ի մի-ում աւուր չէ մարթ կտրել 2000 ասպարիզաց, որ առնէ 250 մղոն ։ Արիստիդէս գնէ թէ 'ի ընթե-յաջողակ հողմոյ՝ մարթ է 'ի միում աւուր կտրա-նել 1200 ասպարիզաց, որ առնէ 150 մղոն ։ Մարկ-իանոս յառ պտղոմեայ զմիոյ աւուր ճանապարհ ծովու՝ համարի 1000 ասպարիզաց. որ առնէ 125 մղոն ։ Ստրա-բոն համարի թէ Է օրն և Է գիշերն միանգամայն առնել մարթ է ընթանալ 1000 ասպարիզաց ։ Սկիլաքս զծո-վագնաց ճանապարհ Է օրն և Է գիշերն հաստատէ գալով լինել երից աւուրց ճանապարհի որ ընդ ցա-մաք.

Զորրորդ՝ հաստատեն զկարծիս իւրեանց վկայութբ՝ սբ գրոց, և սբց հարց․ որք յայտնաբարբառ քարոզեն շարժիլ արեգական և լուսնի, և այլոց երկնային մարմնոց, իսկ երկրի կալ մնալ անշարժ և անսասան 'ի կեդրոնի աշխարհի: Վնկ ուղղորդ ուսումնոս առային համոզմամբ 'ի ժողովին կարդինալաց՝ որ ընդդէմ գալիլէաւ, դատապարտեաց զկարծիս կոպեռնիկեան իբր մոլորական և հերետիկոսական, և հակառակ բանից սբ գրոց․ զոր համօրէն սբ հարք ըստ նկարագրական իմաստից մեկնեն: Այլ մեծիմաստ հայրն բիւկլինոփս 'ի միաբանութէ յոյնանց ասէ: „Ով եղէ այնչափ յանդուգն, որ զքարսեղ, „զաթանաս, զերկոսին գրիգորս, զոսկեբերան, „զկղեմէս աղեքսանդրացի, զդիոնեսիոս, զերա-„նոս, զեպիփան, զամբրոսիոս, զհերոնիմոս, զօ-„գոստինոս, և զայլ ջահս եկեղեցւոյ, յորժամ 'ի „մի կարծիս միաբանին, իշխեսցէ մերժել, և 'ի „դատապարտանէ նոցա խոտորիլ": Այս խրատանք մերժելի է կարծիք կոպեռնիկեան:

Իսկ կոպեռնիկեանք առ խուսափանչիւր մերոցդ բերելոցս, և անտեղութիւն զայս օրինակ պատասխանեն: Առ առաջինն՝ ուրանալով, թէ երկիրն եղէ ծանր յանմ մասունս իւր․ վն զի սակն ծանրութին ոչ այլ ինչ է, եթէ ոչ գիմողուն մասանց առ բոլորն համամասեռ․ վն այսպիսի ծանրութ գտանի և 'ի մասունս արեգական, և լուսնի․ սակայն և ոչ մին սակ պարզապէս ծանր: Նոյնպէս ուրանան և զայն, թէ շարժումն առաւել պատշաճական իցէ արարողին, քան թէ կրողին․ քանզի միապէս՝ առեն անձկ է և կրողին․ այն զի բաղդեալ անգամ ս-բարօղն 'ի ներգործելն շարժէ զկրողն:

Առ երկրորդն պատասխանեն կոպեռնիկեանք, թէ և ոչ մի ինչ յանտեղութենց անտի զհետ գայ դրութեն իւրեանց: Քանզի ամ մարմինք՝ որք են յերկրի․ է որս և օդն շրջապատ՝ կամ մթնոլորտն

որ պատահի դիտելոյ , ունին է երկրի մի շարժումն հասարակաց , մի միջումն , և մի գլխումն · վասն 'ի շարժիլ երկրի , շարժի է նմա և օդն · և նմա պատրունակեալք 'ի յօդն ամպք · և նմա իրք պատկանեալ զօրա նա , որով նմա ինչ այնպէս է 'ի շարժական երկրի , որպէս թէ բնաւ անշարժ լինէր ։

Եւ այս իսկ է պատճառն՝ զի ոչ համառօտ հաղմաջելի լինիմք · վասն զի 'ի շարժիլ երկրի՝ առնի ընդ իւր և զշրջակայ օդն · և ոչ պատահէ զնա՝ առ 'ի պատճառել զհողմն ։ Քարն ընկեցեալ յաշտարակէ՝ և զնտակն արձակեալ 'ի հրացանէ՝ ուղիղ 'ի վայր անկանին , քանզի կրկին շարժումն ունին · մի պատճառական՝ տպաւորեալ յերկրէ · և երկրորդ ուղիղ՝ 'ի քարն պատճառեալ 'ի վայրահակ ծանրութենէ , իսկ 'ի գնտակն յուժգին մղմանէ վառօդոյ ։ Այս երկու տպաւորութիւնք կամ մղմունք չեն միմեանց հակառակ · յայն սակս միաբանեալք ընկեցեալք 'ի բարձունս , կամ 'ի բարձանց 'ի խոնարհ , կարեն առնել փոխարար մի ձանապարհ ուղիղ 'ի վեր՝ կամ 'ի վայր , ընդ նմին 'ի նոյն ժամանակի փոխարարս վերյ ընդ արեւելս՝ զոյգ է երկրի · որով միշտ մնան ուղղայեն է կէտից՝ յորոց արձակեցան ։

Քանզի թէ սակելոյ լուլանսայ , առ 'ի մնալ նոցա առկախեալ յօդս՝ տասանց շարժելոյ ընդ երկրի · հարկ է զի գտցի պատճառ ինչ յօդս երբեմն է հանուր տպաւորութիւն , զոր ընդունելին 'ի շարժմանէ երկրի , այլ չէք այնպիսի պատճառ , այլ հարկ է զնտակին հրացանի շարունակել զշարժումն շարք զկեդրոնիւ երկրի · թէպէտ և 'ի ձեռն մղման վառօդոյ հեռանայ անտի ։ Զի առաջին և ընդհանուր կանոն շարժման է , թէ մարմին որոշեալ միանգամ 'ի շարժիլ 'ի կողմն մի , շարունակէ միօրինակ զայն շարժումն · եթէ չիցէ ինչ պատճառ յամեցուցիչ , կամ բոլորովին խափանիչ նորա , որ և անտանի ճշմարտեալ յամ իրս ։ Զնոյն սակն և վասն թռչնոց՝ որք այնչափ հեռանան 'ի բունոյ իւրեանց , որչափ թռչելով յաւելուն , կամ բառնան 'ի շարժմանէ շրջապատ օդոյ · է որում միաժամանակ շարժին և ինքեանք պարբերական շարժմամբ ։

Զայս նմ հաստատեն և փորձիւ · առեա սակն՝ 'ի նաւ սրընթաց , եթէ ընկեցցի քար ուղիղ 'ի վեր , 'ի նոյն տեղի անկանի՝ ուստի ընկեցաւ · յայտ է թէ վասն զի քարն նաւ յետ եւ անեւլոյ 'ի ձեռանէ ,

պահէ

պահէ զտպաւորեալ շարժումն նաւուն. և է բե-րիլն ուղիղ 'ի վեր կայմ՝ միանգամայն և է նաւուն գնայց առ ներքոյ: Իսկ առ այն՝ թէ մարմինք՝ որք չէին կառուեալ է երկրէ 'ի բաց ցրուէին 'ի նմանէ, պատասխանեն՝ թէ համաբնական դիմողութիւն և բերումն նոցա 'ի կեդրոն երկրի՝ առաւել է քան զաւժգնութիւն հեռանալոյ 'ի կեդրոնէ տպաւորեալ 'ի շարժմանէ երկրի. յայն սակս ոչ 'ի բաց ցրուին, այլ կան 'ի նմ այնպէս., որ թէ բնաւ իսկ ոչինչ շարժումն ունէր:

Առ երրորդն պատասխանէ բարայ, ընդունելով՝ թէ 'ի շարժիլ երկրի ընդ գիծն խաւարման՝ իրօք փոփոխի բարձրութիւն բևեռին. քանզի առանցք նորա յանսահմանս երկայնեալ յերկոցունց կողմանց, առ է առն գործէ զշրջանակ սինաձև յերկինս. որոյ տրամագիծ է գրեթէ 60000000, այսինքն վաթսուն միլիոն փարսախ: Այլ քանզի է հաշուի այժմեան երևելի աստեղաբաշխից կնիմար տրամագծի այնր-սեան ձգեալ յերկինս չէ ինչ աւելի, քան զ 3 կամ 4 երկրորդական մասն աստիճանի. վս այնորիկ իւր կէտ մի և եթ երևի յերկինս. որով և առանցք երկ-րի միշտ առ նոյն կէտ թուին հայել. թէպէտ իրօք փոփոխի զիրք կէտին՝ և բևեռին, որ հերկ զգաս-կամք ոչ երևի. Քանզի հարկս այժմեան ներհուն աս-տեղաբաշխք յետ բազմապատիկ ճգանց զօրեցին նշմարել մասնաւոր գործեօք, որով առաւել հաս-տատեցան 'ի կարծիս շարժականութեան երկրի. զի թէ ոչ շարժէր երկիր, ոչ լինէր այն տեղափոխու-թիւն բևեռին:

Առ չորրորդն պատասխանեն կոպերնիկեանք, թէ բանք սբ գրոց և սբց հարց, և որ յաղագս կո-պերնիկեան դրութեան բացորոշութեանք ինչ եկեղեցա-կանք, ոչինչ հակառակեն ուղղակի այսմ դրութեան: Զորոց զբանս անտեղի համարիմք մեք երկարել աս-տանօր, այլ թողումք որոց կամք են տեսանել 'ի բուն մատեանս նց: Որմ և զերկաքանչիւր կողմանց զամ փաստս և զբանս համառօտիւ և եթ յիշեցաք 'ի հարևանցի, զկատարեալն աստեղաբաշխից թող-եալ. զի չեն մեզ կամք յայտնապէս լսել և խա-փանել խնդիրս վասն տարապայման զժամանակս:

Զայս միայն ոչ կարեմք լռել աստանօր, զի ամ ուսումնականք և ամ դպրոցք միաբան են այժմ, թէ տիեզերական գիրք անպարման է բնաբանութեան,

պատշաճական՝ աստեղաբաշխութեան, իսկ կոչեցեալ կէտաց յերկնային և բարեխառնաց. և այն երի ընկալեալ է իւրն ենթադրեալ կարի հաւանականն։ Այլագոյնս շառաւիղ մի, զուգահեռական տեղաց։

ՅՕԴ. Դ.

Առանցք և բևեռք աշխարհի։

Առանցք (1) աշխարհի կոչեմք զմտակամածական զայն գիծ՝ զոր աստեղաբաշխք դնեն՝ անցեալ ընդ կեդրոն երկրի, և ձգեալ 'ի ծագաց 'ի ծագս երկնից։ Կէտք ծայրից սորա՝ որոց մինն է 'ի հիւսիս, իսկ միւսն 'ի հարաւ, կոչին Բևեռ (2)։ Հիւսիսայինն անուանի Արջային. առեալ զպարանունս նոսին զայս յաստեղէ անտի՝ որ երևի 'ի ծայր սահման նորին համաստեղութեան, զոր աստեղաբաշխք Փոքր արջ կոչեն. որ երկու աստիճանաւ և կէսով հեռի է 'ի բուն բևեռէն. զոր և մարթ է դիւրաւ ճանաչել. մի զի ձևացուցանէ զբևեռն. ուղիղ գիծ ընդ երկուց յետին անուանց մայրէն, կամ մեծ արջոյն (3)։

Իսկ հարաւային բևեռն կոչի Հակարջային կամ դէպ-հիւսիսային. իբր թէ հակառակ արջայնոյն. ըստ առնում տարամերձափառակէս հակադրեի նմ. միոյն 'ի զուգաթեան զօրով, և միւսոյն առորև հանդէպ նորա. զոր մարթ է ճանաչել 'ի համաստեղութէ չորեց աստեղաց հարաւային կիսագնտոյն. զոր նաւավարք որք 'ի վերջին ժամանակս ծանեան զայն՝ կոչեն Խաչայն. իբր զի բերէ զձև նմանութէ խաչի (4)։

Այս երկու բևեռք 180 աստիճանօք հեռի են 'ի միմեանց. որոց անշարժ կացեալ ամենևին, համաստուեին զօրհանապազ հոլովի գնդոցս յարևելից յարևմուտս։ Զերկրիս օրինակ նոյ մարթ է առնաւ նել յանիւս կառաց՝ որ յարևելից ընթանայ յարև մուտ։

(1) 'Ի փռանկաց կոչի Մերիտիէր։
(2) 'Ի փռանկաց Պոլլալ։
(3) Այս բևեռ կոչի 'ի փռանկաց գուգալի շենմալի։
(4) Այս հակարջային բևեռ 'ի փռանկաց կոչի գուգալի ժէնուալի։

մեռուսս. զի յայնժամ ծայրք առանցից կէտ լինելով՝ զօրով ամենայն հոլովմին՝ հասցեն 'ի հակակայ կողմանս, մինն 'ի հիւսիս, իսկ միւսն 'ի հարաւ. և երկրագնդին եւս կան մնան անշարժ 'ի հոլովիլ զինքեան առանցս: Այսպէս նոյնպէս և յերկինս նշանակեն առանցաբեւեռաշխ երկու կէտս անշարժս, զորս բեւեռս կոչեն. զորով շրջաբերի հաստատութիւն:

Եթէ ոք կամիցի գիտել, թէ յոր կողմն իցէ բեւեռն հիւսիսային, մարթ է նմ գտանել զայն դիւրաւ: Կայցէ յայնպիսի դիրս՝ զի արեւելք անկցի յաջակողմն իւր, իսկ արեւմուտք 'ի ձախակողմն. և այսպէս առաջ կէտն եղեալ հանդէպ երեսաց, է բեւեռն հիւսիսային մօտ առ պետեղեցիկ աստղ մի, որ միշտ 'ի մի և 'ի նոյն տեղւոջ երեւի. իսկ հակակայ կէտ որ 'ի թիկանց՝ է բեւեռն հարաւային: Այլ արեւելեան աշխարհագիրք 'ի գծագրելն զաշխարհացոյցս իւրեանց, դարձուցանէին զերեսս ընդ արեւելս. ուստի հիւսիսային բեւեռն անկանէր նոց 'ի ձախակողմն, իսկ հարաւայինն 'ի յաջակողմն. յայն սակս և 'ի մեր գիրս հարաւային կողմն կոչի աջ, իսկ հիւսիսայինն ձախ:

Բնակչաց հիւսիսային կիսագնդոյ մարթ է գտանել զբեւեռն հիւսիսային և այլ դիւրագոյն օրինակաւ: Ի լինել արեգական 'ի հասարակ աւուր՝ կալով 'ի մէջ արեգական, ստուերք մարմնոց նոցա յոր կողմն ձգեսցին, յայն կողմն իսկ է բեւեռն հիւսիսային: Այս օրինակ անվրէպ է քան զառաջինն. իսր զի զարեւելս չէ մարթ ճշգրիտ որոշել, ըստ որում կէտ ելից արեւու փոփոխի յամառան և 'ի ձմեռան. այլ հասարակ օր, կէս որ նոյն է՝ կէսօրական գիծ, միշտ է մի և նոյն. իսկ բնակիչք հարաւային կիսագնդոյ՝ սովին օրինակաւ կարեն գտանել զհարաւային բեւեռն. զի ստուերք մարմնոց նոց 'ի հարաւ ձգին:

Այլ անվրէպ օրինակաւ՝ մարթ է գտանել զբեւեռն հիւսիսային 'ի ձեռն սլաքի օծելոյ մագնիսիւ, զոր աւրապէս կողմնացոյց ասեմք. ռմ''. բուսոլա. զի երկաթն օծեալ մագնիսիւ՝ ունի զհամակրութի ընդ հիւսիսային բեւեռի. վս այնորիկ միշտ յայն կողմն ձգի, եթէ յարտաքին ինչ բռնութէ ոչ իցէ արգելեալ: Եւ եթէ յայլ կողմն դարձուսցես զնա, միշտ 'ի շարժման կայ, մինչև ոչ դարձցի 'ի հիւսիս. ուր սակս զկայս առնու և հանգչի, իսկ

յիւր համաշխարհական կեդրոն․ յորմէ մարթ է ՚ի միա-սնական, թէ բեւեռն հիւսիսային է յայն կողմն , յոր հայի ծայր սլաքին օծելոյ մագնիսիւ ։ Իսկ բա-քանչելեաւ սլաքք օծեալք մագնիսիւ ունին լինել խո-տորումն ՚ի կէտէ հիւսիսային բեւեռին, այլ զսոյն խոտորումն նոյ մարթ է փորձիւ ճանաչել և կամա-նաւորել ։ զոր օրինակ առնեն նաւաստիք ։

Արդ թէ սկզբնապատճառ այսր կարեւոր գործ-ւոյ եղև փլաւիոս ճիօյայ յամալֆեայ քաղաքէ , որ է երեւելի վաճառատեղի ՚ի թագաւորութեան նէապոլսոյ, այսինքն նապօլիի․ յամին իբր 1302 ։ Այլ նախնիքս՝ Հոմերոս ՚ի գիրս իւր կոչեցեալ Ոդի-սական, յիշատակէ թէ յոյնք ՚ի պատերազմին տրո-վադայ (որոյ կործանումն եղև 1180 ամօք յառաջ քան զՔս ,) ՚ի գործ ածին զմագնիսական առ ՚ի ուղղել զնաւարկութ իւրեանց ։ Իբրև տեղեկ հա-մարի և այն՝ զոր պատմեն վն չինացւոց՝ այն է չինաց․ թէ սոքա 1115․ կմ ըստ այլոց 2700 ամօք յառաջ քան զՔս գտին զկողմնացոյցն , որոյ և ձև յօրինմ ժամանակին էր ՚ի ձևոյ մարդոյ աջռամբ ցու-ցանելով զհարաւ ։ Իսկ զբեւեռական աստղն կարե-լի գիւտս գտանել․ եթէ գէթ զմնան ինչ գիշե-րոյ նաւորեալ երկայնմամբ զննեսցէ զայլ և այլ աս-տեղս , գտանելով զպարզութիւն նց և զդիրս․ համեմա-տութբ աշտարակաց, կմ լերանց , և կմ այլոց ի-րաց․ և գտցէ փոփոխումն աստղ մի զերծեցեալ , որ ըստ գիշերին ողջոյն միշտ զնոյն գիրս պահէ․ զիրեթէ ան-շարժ անձնէին․ և ահա այն է բեւեռական աստղ ։

Զայս երկու բեւեռս՝ զոր աստեղագիտաց միա-ծեն յերկինս , աշխարհագրեաց դնեն և յերկիր․ զմին՝ ՚ի կողմն հիւսիսային բեւեռի , իսկ զերկրորդն՝ հա-րաւային կողմն․ և ՚ի միջի դնեն առանցս՝ որ անցեալ ը կեդրոն երկրի , բաժանէ զայն տրամագծականս յերկուս հաւասար մասունս ։ Բայց յայսմանէ՝ ան-գիտապայն բաժանեալ զերկիր , շրջանակս , զոր աստեղագիտաց դնեն ՚ի պարունակ երկնից , առա-դնեն և ՚ի զանազան երկրի․ և են ութ․ չորք մեծա-գոյնք , որք զդասնան բոլոր հատուածեն յերկուս հա-ւասար մասունս․ և չորք փոքրագոյնք , որք յան-հաւասար մասունս հատանեն զնա ։

Մեծագոյն շրջանակք են, Հասարակած․ Կենդա-նակերպ․ այն է՝ Զոդիակոս․ Միջօրէից շրջանակ․ և Հորիզոն ։ Իսկ փոքրագոյնք են, Արեւադարձ խեցգետ-

նի․

նի. Արևադարձ այծեղջերի. Շրջանակ արջային. և Շրջանակ հակարջային :

'Ի չորից մեծագոյն շրջանակաց հասարակածն և զոդիակոսն են անշարժք. իսկ այլ երկուքն են շարժականք և այլայլելիք. որք այլայլելին ըստ զանազան դրից խոտորնաձևութեան առեղեաց. զի ժամ առեղի ունի իւր սեփական եզերս, և սեփական մէջօրեայ զանազան յայլոց. և յայն սակս այս երկու շրջանակք յարուեստակերտս գունդս երկրի՝ զոր յօրինեն աշխարհագիրք, ոչ դնին կցեալ ը գնդոյն. այլ անջատ 'ի նմանէ, զի դիւրին լիցի շարժել զնոսա ըստ հարմարելոյ : Զայս ժամ շրջանակս մի առ մի բացատրեսցուք յառաջիկայդ :

Հասարակած :

Անդ մէջ պատկերի գնդոյ երկրի երևի գիծ մի նկարեալ, որ պատէ զբոլորովանդակ գունդն շուրջանակի յարևելից յարևմուտս. և բաժանէ զայն յերկու հաւասար մասունս հաւասարապէս տարածեալ յերկոցունց բևեռաց, յորոց մի մասն ունի իւր մէջ կէտ կեդրոն՝ զբևեռն հիւսիսային. իսկ միւսն՝ զբևեռն հարաւային :

Այս գիծ կամ շրջանակ՝ զոր նաւորդք առաւել կամ անուամբ կոչեն Գիծ, առ հնոցն անուանի Հասարակած (1). վս զի անդ է ամն ուղղոյն՝ տիւ և գիշեր միշտ հաւասար են. զի եզերքն նր զժամ օրական շրջանս արեգական ձևէ յերկուս զուգահաւասար մասունս :

Կոչի և Գիշերահաւասար, մի՝ նկատմամբ բնակչացն ը սովին գծիւ, որոց տիւք միշտ հաւասար են գիշերաց : Եւ երկրորդ՝ նկատմամբ բնակչաց համօրէն աշխարհի, երբ զի արեգակն յորժամ գտանի 'ի նմ, տիւ և գիշեր հաւասար են ը ամ աշխարհ. Թէպէտ նկատմամբ գաւառաց անկելոց ընդ բևեռօք, պատահի տարբերութի : Եւ պատճառն է, զի արեգակն յայնժամ ընթանայ ը մէջ գնդոյ երկրի 'ի մէջ երկուց բևեռաց : Եւ այս երկիցս հանդիպի 'ի տարւոջ. մի իսկ 'ի 21. մարտի. յորժամ արե.

(1) 'Ի տաճկաց՝ արաբացւոց անուամբ կոչի Խատթըլ Իսթիվա, որ նշանակէ գիծ հաւասարութե :

րեգակն մտանէ յառաջին աստիճան խոյին. և կոչի Գիշերահաւասար գարնանային: Երկրորդ 'ի սեպտեմբերի 22. յորժամ արեգակն մտանէ յառաջին աստիճան կշռոյն. և անուանի Գիշերահաւասար աշնանային:

Այս գիծ յաշխարհագրաց բաժանի 'ի 360 աստիճանս. ըստ օրինակի, որով առնուլ են շրջապատերը բաժանել զամ շրջանակս. և իւրաքանչիւր աստիճան պարունակէ 60 մասունս. կամ նոյնչափ մղոնս իտալականս կամ աշխարհագրականս: Արդ՝ 360 աստիճանք 60 թուով բազմապատկեալ, առնեն 21600 մղոնս աշխարհագրականս: Եւ ոչ այս է չափ բոլոր շրջանակի հասարակածին: Իսկ հեռաւորութիւն նորա յիւրաքանչիւր բևեռաց՝ է 90 աստիճան. այս 5400 մղոն. և 'ի միոյ բևեռէ մինչև ցմիւսն՝ են 180 աստիճանք. որք առնեն 10800 մղոնս աշխարհագրականս:

Հասարակածն է կանոն և չափ օրական շարժման արեգական և այլոց աստեղաց. քանզի ամ աստեղք օրական շարժմամբ իւրեանց գործեն շրջանակս զուգահեռականս 'ի հասարակածէն: Եւ 'ի բարձրանալ նշ 'ի վր երկրաց 15 աստիճան 'ի հասարակածէն, այն մինչդ է չափ ընթացից միոյ ժամու. վն զի առժին հաշուիւ չափէ արեգակն 'ի մէջ 24 ժամուց զբոլորակն 360 աստիճանսն:

'Ի մէջ բևեռաց և հասարակածի, բաց յարևադարձից՝ և 'ի բևեռայինն շրջանակաց՝ նկարին առ մտաւոր մեծատարածն գիծք կամ շրջանակք 'ի հասարակածէն 'ի բևեռս կոյս գնալով մի ըստ միոջէ փոքրութ 'ի հիւսիսակողմն, և այլ եւս ութ 'ի հարաւ. որք անուանին Զուգահեռականք զի ձգին 'ի հասարակածէն նոյնաթիւ աստիճանաց հեռաւորութբ 'ի միմեանց մինչև 'ի բևեռս: Եւ հնարեցան 'ի գիւտ բոլորն թուելոյ զաստիճանս. զի մինչ իւրաքանչիւր գիծ պարունակէ առանձին աստիճանս, որով մարթ է գիտել՝ 'ի միտ առնուլ, թէ քանի՞ աստիճանք են ցեն 'ի հասարակածէն մինչև 'ի մի 'ի բևեռացն. միանգամայն ցուցանեն և զլայնութիւն տեղեաց, զոր մք ունիմք խօսել առաջն:

Այս շրջանակք լայնութեան՝ որչափ հեռանան 'ի հասարակածէ՝ և մօտենին 'ի բևեռս կոյս, նոյնչափ և փոքրկանան մի ըստ միոջէ. և 'ի փոքրկանալն շրջանակաց լայնութեան՝ փոքրկանան և աստիճանք երկայ-

նու

նութե, որք նշանակին 'ի մէջ շրջանակաց լայնութե և հասարակածին և չափին գծիւ ։ Այդ յայտնի կարես տեսանել զայս 'ի բոլորակ աշխարհագրութեան համառաւ րած, զի 20երորդ շրջանակն լայնութե՝ փոքր է քան զ10երորդն . և 30երորդն փոքր է քան զ20երորդն . և 80երորդն փոքրագոյն է քան զայլսն ։ Տեսանես նոյնպէս և զշրջանակս երկայնութե ձգեալս ընեւեռ 'ի բևեռ, զի ըստ չափու մատչելոյ նց 'ի բևեռն նոյնչափ և մերձենան միմեանց . (կմ ըստ երկրաչափից առանելոյ, փոքր ադերն հասարակածին 'ի շրջանակաց լայնութե) . վասն և փոքրկանան աստիճանք նց . այնպէս զի ըստ 90երորդ վերջին շրջանակս լայնութե, ուր բոլոր այն շրջանակն լայնութե է կէտ մի, անդ և ամ շրջանակք երկայնութե խիտ առ խիտ մերձեցեալ միմեանց աւարտին 'ի մի կէտ ։ Այլ առ կայն խուարանցիւր շրջանակք թէ մեծ և թէ փոքր՝ բաժանին 'ի 360 աստիճանս . միայն զի մեծ շրջանակին աստիճանք մեծ են, իսկ փոքուն՝ փոքր . յայն սակս 'ի համեմատելն զնա առ մի և նոյն չափ՝ երևի տարբերութի նց, զի առհաս միաստիճանն 'ի հասարակածին՝ է 60 աշխարհագրական մղոն . իսկ յառաջին զուգահեռական շրջանակի որ զէտ հասարակածին ոչ է 60 մղոն, այլ 59 մղոն և 920 ձող . երկրորդին 59 մղոն, և 860 ձող . երրորդին 59 մղոն, և 800 ձող ։ Ահա առաջնոյ զուգահեռականի աստիճանն փոքր է քան զհասարակածին 31 ձողով . երկրորդին փոքր է քան զառաջնոյն 60 ձողով, երրորդին նոյնպէս 60 ձողով փոքր է քան զերկրորդին . ըստ այսմ և այլք, որք ըստ չափոյ հեռանալոյ 'ի հասարակածէն՝ մի քան զմի առաւելապէս նուազին, մինչև չունիլ ընաւ տարածութի 'ի բևեռսն, այլ 'ի մի կէտ աւարտիլ ։

Եւ քանզի բազում անգամ կարևոր է փութանակի գտանել յամ զուգահեռական շրջանակս զհամեմատութի աստիճանաց նց՝ ընդ աստիճանաց հասարակածին, 'ի դէպ վարկաք դնել յայսմ վայրի զառաջիկայ աղիւսակդ . յորում մի առ մի եդեալ կան աստիճանք 'ի հասարակածէն մինչև ցբևեռս այ 90 աստիճանն, զի այսչափ աստիճանք են 'ի հասարակածէն մինչև ցմի կմ ցմիւս բևեռն . և հանդէպ նց չափ-տարածութե խուարանցիւրոց բացատրեալ աշխարհագրական մղոնիւք և ձողովք . առեալ զմի մղոնն 951 ձող ։

Աս

Աղիւսակ որպիսութեան աստիճանաց երկայնութեան ի հասարակածէն մինչև բևեռս ։

Լայնութիւն.	Աստիճան զուգահեռականին.		Լայնութիւն.	Աստիճան զուգահեռականին.	
	Մղոն.	Ձող.		Մղոն.	Ձող.
0	60.	000			
1	59.	920.	31	51.	382.
2	59.	860.	32	50.	826.
3	59.	800.	33	50.	318.
4	59.	740.	34	49.	699.
5	59.	680.	35	49.	128.
6	59.	620.	36	48.	510.
7	59.	515.	37	47.	891.
8	59.	377.	38	47.	255.
9	59.	188.	39	46.	574.
10	59.	061.	40	45.	891.
11	58.	823.	41	45.	255.
12	58.	633.	42	44.	574.
13	58.	441.	43	43.	826.
14	58.	188.	44	43.	128.
15	57.	890.	45	42.	382.
16	57.	633.	46	41.	636.
17	57.	377.	47	40.	890.
18	57.	064.	48	40.	128.
19	56.	696.	49	39.	318.
20	56.	382.	50	38.	510.
21	56.	000.	51	37.	699.
22	55.	569.	52	36.	891.
23	55.	191.	53	36.	128.
24	54.	763.	54	35.	255.
25	54.	382.	55	34.	382.
26	53.	890.	56	33.	510.
27	53.	446.	57	32.	636.
28	53.	000.	58	31.	763.
29	52.	446.	59	30.	891.
30	51.	890.	60	30.	000.

Լայն

Լայնութի·	Աստիճան զուգահեռականին·		Լայնութի·	Աստիճան զուգահեռականին·	
	Մղն·	Չոր·		Մղն·	Չոր·
61	29·	064·	76	14·	510·
62	28·	128·	77	13·	510·
63	27·	191·	78	12·	510·
64	26·	255·	79	11·	446·
65	25·	318·	80	10·	382·
66	24·	382·	81	9·	318·
67	23·	446·	82	8·	308·
68	22·	510·	83	7·	300·
69	21·	510·	84	6·	255·
70	20·	510·	85	5·	190·
71	19·	510·	86	4·	180·
72	18·	510·	87	3·	128·
73	17·	510·	88	2·	064·
74	16·	510·	89	1·	064·
75	15·	510·	90	0·	000·

Սովին աշխատակաւ մարթ է չափել զերկայնութիւն զինչ և իցէ գաւառի կամ աշխարհի. զոր թէ կամիցիս առնել, նախ թուեսցես զաստիճանս հեռաւորութեան 'ի միմեանց երկուց միջօրէական գծից՝ որք առաջի և յետոյ պարփակեն զգաւառն կամ զաշխարհն. ապա տես թէ քանի՞ աստիճանօք հեռի է 'ի հասարակածէն զուգահեռական շրջանակն, որ 'ի միջական տեղւոջ գաւառին անցանէ ը̄ երկուս միջօրէից շրջանակս, և յայնժամ գտցես յաղիւսակի առա զթիւ մղոնաց միոյ աստիճանի այնր զուգահեռական շրջանակի. զոր բազմապատկեալ 'ի ձեռն թուոյ աստիճանաց հեռաւորութեան երկուց միջօրէից պարփակելոց զգաւառն կամ զաշխարհն, գտցես զերկայնութիւն գաւառին չափեալ մղոնաւ ։

Զոր օրինակ, առեալ երկու միջօրէից շրջանակք, որք պարփակեն զհայաստան աշխարհն և զմեծն 'ի միասին առեալ, չորեքտասան աստիճանօք հեռի են 'ի միմեանց ։ Զուգահեռական գիծն որ հատանէ զնա 'ի միջական տեղւոջ հայաստանեայց քառասուն

առ

աստիճանացն հեռի է 'ի հասարակածէն. և մի աստ-
տիճան այնր զուգահեռականի ըստ աղիւսակին է 45 մղոն, (առնելով զմղոնն փոխանակ 951 ձողոյ, որք և 'ի վերոյ նշանակեցաք.) և 891 ձող։ Արդ՝ բազմապատկելով զ45 մղոնս, և զ891 ձողս 'ի ձեռն նախասացեալ 14 աստիճանաց, արտադրեալքն լինին 643 մղոն, և 111 ձող. որ է չափ երկայնութեան հաստատնելոյ ի 40 աստիճանս լայնութեան։

Դարձեալ օրինակ։ Երկու միջօրեայ շրջանակք՝ որք պարփակեն զգաւառն, երեքտասան աստիճանաւ հեռի են 'ի միմեանց. իսկ զուգահեռականն շրջանակին՝ որ հատանէ զնոսա, քառասուն և հինգ աստիճանաւ հեռի է 'ի հասարակածէն, և մի աստիճան այնր զուգահեռականի՝ ըստ աղիւսակին՝ պարունակէ 39 մղոն, և 318 ձող։ Արդ՝ 39 մղոնք, և 318 ձողք բազմապատկեալ 'ի ձեռն նախասացեալ 13 աստիճանաց, արտադրեալքն լինին 511 մղոն, և 330 ձող. որ է չափ երկայնութեան գաւառին 'ի միջական տեղւոջ։

Կենդանակամար, այն է Զոդիակոս։

Թէպէտ կատարեալ տեղագրութիւն կենդանակամարին տիրապէս յաստեղագիտաչիս հայի, բայց ջքղի չէ հնար առնել ապացուցութիւն ինչ 'ի մի գնտոյ երկրի, առանց ունելոյ զծանօթութիւն ինչ զընթացից արեգական, իսկ զայն ցուցանէ այս կամար կենդանակերպից. վասն այնորիկ կարեւոր է յայսմ վայրի բանս ինչ կարգել զնմանէ։ Արդ՝ հելլենական անուամբ Զոդիակոս, 'ի մեզ թարգմանի Կենդանական. ելեալ 'ի Զօփիօն բառէս, որ է կենդանի, զոր մեք միով անուամբ կոչեմք Կենդանակամար՝ (1) որ ունի զլայնութիւն. զի այլ շրջանակք յանբաժանելիս միամծին. լայնութիւն սա է իբրեւ ութետասան,

(1) 'Ի փանկաց կողմն Մինդագաւթեան տիեզերուն. Մինդադաս նշանակէ գօտի, իսկ Պիեւրուն. (որոց միաւորականն լինի պիեւրն,) նշանակէ Աշխարհս, յոր անուն կողմն կենդանակերպն. զոր օրինակ և շնորհաւոր յոյն եղականցն։

Է և բանք յետ պատմելի պատմագրական,
յոր աշտարակք կենդանատեսակք երկոտասան։

տասն աստիճան. և բաժանեն զգօտին երկրի յերկուս հաւասար մասունս, որ խոտորնակի ձգեալ 'ի մէջ գնտոյն հասանեն զհասարակածն յերկուս տեղիս, 'ի խոյն և 'ի կշիռն:

Յայսմ շրջանակի՝ են երկոտասան համաստեղութիւնք անուանեալք ըստ ձևոյ կենդանեացն կենդանակերպք, և այլով անուամբ կոչեսցին կենդանաբերք և կենդանատեսակք. զորս անցանէ յամի շաւիղ արեգական: վեց 'ի հիւսիսակողմն, և վեց 'ի հարաւ. երկոտասան երեսուն աստիճանօք բաժանեալ 'ի միմեանց. որոց բոլորեցուն գումար առնէ 360, և գրեթէ է մի մի 'ի նոցանէ օր ըստ օրէ անցանէ արեգակն. բայց ոչ ամբողջ. առաջ թէ ոչ՝ նոյնչափ աւուրք լինէին տարւոյ արեգականն. ուր ահա առ կատարումն տարեկան ընթացից արեգական պահանջին 365 օր. 5 ժամ, և $\frac{3}{4}$: Իւ այս՝ ասեն յամն ընթանալոյ արեգական է կենդանատեսակս հիւսիսայինս զի անդ է հեռաւորեալ նորա, քան 'ի հարաւայինս, ուր է մերձաւորեան:

Իսկ նշանագիրք և անուանք կենդանատեսակացն համաստեղութեանց յաստեղաբաշխից՝ են այսոքիկ:

Հիւսիսայինք.		Անուանք տճկ՞.
♈	Խոյ.	Համէլ. որ նշանակէ Գառն.
♉	Ցուլ.	Սէվէր.
♊	Երկուորք.	Ճէվզա. նշանակէ Զոյգ.
♋	Խեցգետին.	Սէրէգան.
♌	Առիւծ.	Էսէտ.
♍	Կոյս.	Սիւնպիւլէ. նշանակէ Հասկ.

Հարաւայինք.		Անուանք տճկ՞.
♎	Կշիռ.	Միզան.
♏	Կարիճ.	Ագրէպ.
♐	Աղեղնաւոր.	Գավս. նշանակէ Աղեղն.
♑	Այծեղջիւր.	Ճէտի. նշանակէ Ուլ.
♒	Ջրհոս.	Տէլվ. նշանակէ Դոյլ.
♓	Ձուկն.	Հութ. նշանակէ Կիտոս.

ողք

որք և բովանդակեն յայս տաղաչափութեան (?)։

Ընդ Խոյն է Ցուլ՝ և Երկաւոր.
Խեցգետին Առիւծ՝ Կոյս միաւոր.
Կշիռ Կարիճ՝ և Աղեղնաւոր.
և Այծեղջիւր՝ Ջրհոսն և Ձկունք։

Այս անուանք եդան 'ի նախնի աստեղաբաշխից մանաւանդ յեգիպտացւոց, 'ի նմանութենէ ընթացից արեգական. յորոյ յընթանալ յիւրաքանչիւր կենդանատեսակս՝ տեսանէս այլայլութիւնս լինել յաշխարհի երկրաւորս և կարծաւէ առաւել, ջերմութեան և ցրտութեան, խոնաւութեան և չորութեան, փոփոխմանց եղանակաց և գործոց մարդկան ևն, զորս զննմանն նախնի եգիպտացիք նմանեցուցեալ բնութեան կամ ընթացից տեսակս կենդանեաց, ըստ նոցին նմանութեան յանդգնեցան անուանել անուամբ ժողովրդեան զայս կամար։ Որք գեղեցիկ ցուցանէ բլէուշ 'ի գիրս պատմութեան երկնից, յորում ժամանակի չև ևս հնարեալ գրով գիր, զայսպիսի ընտրեալ նմանութիւնս 'ի կիր առնուին փոխանակ գրոց։ Բայց գիտել պարտ է, զի համաստեղութիւնք կենդանակամարին ոչ ևս համեմատին ընդ գրից տեղւոյ առուցեալ նշանացդ, որք համեմատէին 'ի նախնումն. վասն զի 'ի ժամանակէ անտի յորում որոշեցան անունք և աստեղատունք և արեգակնային տարին՝ մինչև ցայժմ յամ 72 ամ մի մի աստիճան յարևելս խաղալով աստեղացն, 'ի պատճառս կամախման գիշերահաւասարից, այժմ իբրև 29 աստիճանօք առաւել յարևելեան կողմն անկանին, քան զոր էին 'ի նախնումն։ Այդ համաստեղութիւն խոյոյ՝ որ յառաջն համեմատէր առաջնոյ նշանի կենդանակամարին, այժմ իբրև 29 աստիճանաւ առաւել է արևելս անկանի. քան անդ ուր էր համաստեղութիւն ցլոյ։

Ընդ մէջ կենդանակամարին նկարի գիծ մի բաժանեալ 'ի 360 աստիճանս. որ կոչի ծիր արեգական. իբր զի արեգակն է այն ընթանայ անխոտոր. հանապազ ընդ մէջ կենդանակամարին քան զոգելակամն ունելով. իսկ այլ մոլորակք թափառեալ շրջին ընդ լայնութեան կամարին, մանաւանդ արուսեակն որ առաւել քան զայլ մոլորակս հեռանայ 'ի ծրէ արեգական իբրև աստիճանս 9։ Անուանի և ծիր խաւարման, յունարէն Էգլիփդիգոն. որ նշանակէ նուաղական կամ պակասական. վասն զի յայնժամ լինին 'ի լրման.

լրման, կամ 'ի ծննդեան գտանի յայս գիծ, լինի խաւարութիւն կամ նուաղութիւն լուսոյ. 'ի լրման խաւարութիւն լուսնի, իսկ 'ի ծննդեան խաւարութիւն արեգականն:

Այս գիծ գոլով ընդ մէջ կենդանակամարին, խոտորնակի հատէ ընդ նմա զհասարակածն. և միով մասամբ մնայցէ 'ի բևեռն արջայինն, իսկ միւսովն 'ի բևեռն հակարջայինն, խոտորելով 'ի հասարակածէ իբրև քսան և երեք աստիճանօք և կիսով. որոց զումարն յերկուց կողմանց առեալ, է 47 աստիճան, կամ 2820 մղոն աշխարհագրական: Այսուիկ խոտորումն ծրի արեգական՝ լինին մեզ փոփոխումնք եղանակաց տարւոյ յամ աշխարհի. և անհաւասարութիւն աւուրց, և բարեխառն տրամադրութիւն տուընջեան և գիշերոյ ընդ ամ երկիր:

Այս խոտորումն ծրի արեգական 'ի հասարակածէ գտանի որոշակի նկարեալ 'ի վերայ ամ արուեստականերս գնտոյ երկրի՝ ընդ այլոց երկուց շրջանակաց անուանելոց արևադարձք. մինն 'ի հիւսիսային կողմանն, իսկ միւսն 'ի հարաւային կողմանն: Միջոցն երկուց արևադարձից կոչի Այրեցած կամ այրեցական գօտի. զորմէ ունէին խօսիլ առաջև: Բազումք ևս զբոլոր կենդանակամարն անուանեն Այրեցած գօտի, զի որում ձգի միջև ցարևադարձս. բայց չէր թուեն այդ այն ուղղաձողաց. զի այնորիկ լաւ ևս է խորաքանչիւրում զիւր ուղղութեան անուանել:

Մէջօրէայ շրջանակ:

Մէջօրէայ շրջանակն (1) է գիծ մեծ՝ որ 'ի միոյ բևեռէ աշխարհի ձգի 'ի միւսն, անցեալ ընդ գագաթամբ խորաքանչիւր վայրաց, և պատեալ զբոլոր գունդն, զոր բաժանէ յերկուս հաւասար մասունս. յորոց մին ունի իւր մէջ կամ կեդրոն զարևելս, իսկ միւսն զարևմուտս: Մասն և առաջինն անուանի Կիսագունդ արևելեան. իսկ երկրորդն՝ Կիսագունդ արևմտեան, ընդ հակառակն հասարակածին. զի նա 'ի կէսն արևելից և արևմտից՝ հատեալ զգունդ երկրի, բաժանէ զնա 'ի հիւսիս, և 'ի հա-

(1) Տաճկերէն կոչի Նըսֆըննեհար. որ եղեալ յարաբացւոց բառից Նըսֆ. Նեհար, նշանակէ Կէս օր:

հարաւ ։ Այլ եթէ բաժանեսցուք զգունդ երկրի նախ ը միջօրեայ շրջանակին, և ապա ըստ հասարակածին, երկիրս լինիցի բաժանեալ ՚ի չորս մասունս հաւասարս, և ուղղանկիւնս ։

Այս գիծ անուանի Միջօրէայ շրջանակ, վս զի ՚ի հասանել արեգական ՚ի միջօրեայն տեղւոյ երկք՝ նկատմամբ այնր տեղւոյ կատարեալ է զկէս մասն օրական ընթացից իւրոց ․ որով և է անդ կէս օրւոյն սակս ՚ի նմին վայրկենի տեղինակն, արեգակն, և երկու բևեռք գտանին ՚ի վր մի և նոյն գծի ․ վս զի եթէ ՚ի վայրկենի իսկական միջօրէի այնր տեղւոյ ձգեսցի բոլորակ գիծ բևեռէ ՚ի բևեռ, այն գիծ անցանէ ը միջ տեղւոյն այնորիկ և ը կեդրոն արեգական ․ և այսպէս տեղին, արեգակն, և բևեռք գտանին ՚ի վերայ մի և նոյն գծի ։

Դարձեալ՝ եթէ մարթ էր ունել ՚ի վայրկենէ միջօրէի տեղւոյն ընթանալ հաւասար արագութբ ը արեգական զգնտով երկրի յարևելից յարևմուտս, առնելով յիւրաքանչիւր ժամու հնգետասան աստիճանս, լինէր նմ անընդհատ միջօրեայ ․ և ՚ի միջոցի 24 ժամուց գտանելը ՚ի նոյն տեղւոջ ուստի ելն, առանց երբէք տեսանելոյ զգիշեր ։ Բայց քանզի այսմ՝ չէ հնար լինել, վս զհետ գոյ ․

Նախ՝ թէ միջօրեայ տեղւոյ իւիք ոչ առնէ ասաւել ք զմի միայն վայրկեան ․ վս զի ընդ անցանելն արեգական ընդ գիծ միջօրէի, իսկոյն անցանէ ընդ նմ և միջօրեայ տեղւոյն ։

Երկրորդ՝ զհետ գոյ, թէ միջօրեայն բնակչաց, որք նկատմամբ նախասացել տեղւոյն են յարևելեան կողմն, յառաջէ ք զնորայն ․ այս միջօրեայն բնակչաց կոստանդնուպոլսոյ միով ժամու և 11 վայրկենիւք կանխէ ք զվենետիկոյն ․ զի կոստանդնուպօլիս 16 աստիճանօք և 30 մասամբք է յառաջ յարևելս քան զվենետիկ ։ Եւ ընդ հակառակն միջօրեայն բնակչաց՝ որք են յարևմտեան կողմն նկատմամբ այնր տեղւոյ, անագանի ք զնորայն, այս միջօրեայն Լիզպոնայի փորթուգալաց նկատմամբ վենետիկոյ ։

Երրորդ՝ եթէ երկու նաւք ճանապարհորդեսցեն շուրջ զգնտով երկրի, մինն ը արևելս, իսկ միւսն ընդ արևմուտս, և եթէ երկոքին հանդիպեսցին միմեանց առ 180 աստիճանաւ երկայնութ ․ այն՝ որ նաւեաց ընդ արևելս, օր մի աւաւել առնէր քան զերկրորդն՝ որ նաւեաց ը արևմուտս ։ Եւ պատ-

ճառն

ճանաչ է, զի նա՝ որ գնայ ընդ արևելս, ճանա-
պարհորդելոց առ արևն․ որում միշտ վաղագոյն
ծագեսցէ և մտանիցէ արեգակն, քան այնորիկ աւուրք որք
ընթանայցեն կարճ, այլ բազմութիւն է զմիւսոյն, որ գնէ
մեռայ է արևմուտս․ զի սմա յամէն օր անդադան ծա-
գէր և մտանիցէր արեգակն․ և յայն սակս աւուրք
սորա ընթանէին երկարք, այլ սակաւութիւն քան զա-
ռաջնոյն ։ Ասացեալ ևս բացատրեսցուք զայս առած
աշխարհագրականն ՚ի յանկոյ և յետոյ՝ որք ծնեալ ՚ի
միում վայրկենի, զի եթէ սոքա երկու եղբարք անդ
անդ շրջան առնուլին զոլորտիւք երկրի զամս 60,
մեկնեալ լինել ՚ի նոյն քաղաքէ ; և հասանելով ՚ի նոյն
քաղաքն, այլ յանկոյ ճանապարհորդելով միշտ ընդ
արևելս, և նա միշտ ընդ արևմուտս, և յետ 60
ամաց մտանելին, յանկոյ 120 աւուրբք առաւել
ապրեալ քան զեւսա․ թէպէտ և ճշմարիտ ժամանա-
կին նոյնչափ ապրեցին երկոքեան ։

Զօրօրոր՝ ամենեքին նոքա՝ որք բնակին ՚ի կողմն
հիւսիսոյ՝ կամ հարաւոյ՝ ՚ի վերայ նոյն գծի ՚ի բևեռս
կողմ, որչափ և հեռի իցեն ՚ի միմեանց, ՚ի նմին
վայրկենի ունին զմիջօրեայն․ որպէս մերոյն և բա-
ղերդ թէպէտ հեռի են ՚ի միմեանց ՚ի հիւսիսոյ ի
հարաւ․ բայց զաղ են ի միով միջօրէիւ․ զի ի 58
աստիճանս երկայնութ․ և ի 47 մնայանք նոյն
աստիճանին, յայն սակս երկոքեան ևս ՚ի նոյն վայր-
կենի ունին զմիջօրէայ ։ Եւ պատճառն է, զի միջ-
օրեայն ոչ փոփոխի գնալով ՚ի հիւսիս, և ՚ի հա-
րաւ․ թէպէտ և փոփոխի կէտն զագաթան և ստո-
ղական, ուստի և եղբարք՝ որ կանխեալ կայ զկէտն
զագաթան, այլ գնալով յարևմտից յարևելս, կամ
անդրադարձեալ ։ Այլ գիտացուք ՚ի փոքր պէսպէս․
յորոց մին ընթանայ ի հաստատունութիւն, իսկ միւսն
ի միջօրէականն գծիւ ընդ երկիր, յայտ է թէ առ
իւրաքանչիւր քայլ փոփոխին տոցա միապէս կէտ
զագաթան, և կէտ ստորոտական, այլ և եղեռանք․
նոյնպէս և միջօրեայն նկատմամբ առաջնոյն միշտ
փոփոխի, ոչ ըստ օրական ընթացից արեգականն՝ զի միշտ
նոյն է առեն, այլ ըստ համեմատութեան երկնային աս-
տիճանաց․ իսկ նկատմամբ երկրորդին՝ միշտ նոյն
մնայ ըստ համեմատութեան երկնային աստիճանաց, և
փոխի ըստ օրական ընթացից արեգականն․ զի առեն
կարճի և երկայնի, ըստ որում կամ ՚ի բևեռն կայ
գնայ կամ ՚ի հասարակածն կողմ ։

Այս

Այս միջօրեայ շրջանակ ցուցանէ զպարզութիւն արեգական և աստեղաց. վասն զի 'ի հասանելն արեգական 'ի գիծ անդր միջօրէի իւրաքանչիւր տեղւոյ, այնուհետև ոչ ևս բարձրանայ, այլ սկսանի խոնարհիլ. որով և յերկուս հաւասար մասունս բաժանէ զաւուրն, 'ի վաղորդայնէ ցօր հասարակ և անտի ցերեկոյ. միանգամայն և է սկզբնաւորութիւն բնական, կամ աստղաբաշխական աւուր. զի աստեղաբաշխք 'ի միջօրէէ սկիզբն առնեն աւուրց:

Գիծք միջօրէականք չունին զորոշեալ ինչ թիւ, զի ամ գիւղք տեղւոյ է արևելս և ընդ արևմուտս՝ ունին իւրեանց սեփական միջօրեայ. վասն որոյ եթէ կամէին աշխարհագիրք նկարել 'ի վերայ աշխարհացուցից զմիջօրեայս ամ տեղեաց երկրի, հարկ էր նոցա անհամար գծիւ լնուլ զաշխարհացոյցս. վն զի այնչափ են միջօրեայք գնտոյ երկրի, որչափ կէտք 'ի հասարակածն: Յայն սակս կամեցեալ խորշիլ 'ի շփոթութենէ աստի, հնարեցին զմի միայն միջօրէական շրջանակ 'ի պղնձոյ, կամ 'ի փայտէ, որ լինու զտեղի այն անհամար միջօրէական գծից: Վն զի եթէ այն հասարակ միջօրէական շրջանակ դիցի 'ի վերայ վենետկոյ՝ լինի միջօրեայ վենետկոյ, եթէ դիցի 'ի վերայ կոստանդնուպոլսոյ՝ լինի միջօրեայ նորա. նոյնպէս իմա և վասն այլ ամ տեղեաց, զոր մարթ է ըստ հաճոյից շարժել 'ի վերայ գնտոյ երկրի, զի ոչ է կցեալ ընդ նմա:

Այլ բաց 'ի սմանէ՝ առ 'ի դիւրութիւն թուելոյ զաստիճանս գնտոյն, գծեալ կան զնովաւ այլ ևս երեսուն և վեց միջօրէական շրջանակք. զոր սմանք կոչեն Զուգահեռական միջօրեայս. իւրաքանչիւրքն տասն տասն աստիճանօք հեռի 'ի միմեանց: Որք որչափ մատչին առ բևեռս, նոյնչափ մերձենան միմեանց, մինչև 'ի մի կէտ աւարտել նոցա 'ի բուն բևեռսն անդ: Վասն որոյ մի աստիճան երկայնութեան առ հասարակածիւ՝ բազում մղոնս պարունակէ, քան մերձ 'ի բևեռսն. որպէս ունիս տեսանել 'ի նախընթաց աղիւսակին չափոյ աստիճանաց երկայնութեան:

Յայս երեսուն և վեց շրջանակաց աշխարհագիրք զմինն կացուցանեն առաջին միջօրեայ. յորմէ սկսանին թուել զաստիճանս հասարակածին յարևմտից յարևելս գնալով: Բայց 'ի վերայ այսր առաջին միջօրէի կարծիք անմիաբան են աշխարհագիրք: Պտղոմէոս՝ որում զհետ չոգան սմանք 'ի նախնեաց՝ եդ

'ի

'ի մէջ Երանելեաց կամ Գանարեան կղզեաց առ.հա-սարակ. կարծեցեալ թէ այն տեղ կղզիք Է միով առ-աւելութեամբ երկայնութեան են։ Այլք եդին 'ի կղզին Ազորեաց. կէսք 'ի կղզին սրբոյն Նիկողայոսի մերձ յաֆրիկէ. և այլք այլուր։ Իսկ յամին 1634 Լու-դովիկոս ԺԳ արքայ գաղղիացւոց հաւանութեամբ գլխաւոր չափաբերաց եւրոպիոյ՝ զորս ժողովեաց 'ի փարէզ 'ի քացորոշել զայս խնդիր, հրամայեաց ժողովրդեան իւրում զառաջին միջօրեայն հաստա-տել 'ի մէջ երկաթի կղզւոյն. որ է մի յԵրանելեաց, կամ 'ի գանարեան կղզեաց՝ առաւել յարեւմուտս, Ժ զայլս։ Եւ ախոյեան նաև այլ աշխարհագիրք եւրոպիոյ իբր 'ի քաղաքս անդ հաստատեն զառա-ջին միջօրեայն։

Բայց աստեղաբաշխք այժմ 'ի նախնումս, նոյնպէս և այժմ՝ անդ դնեն զառաջին միջօրեայն, ուր առ-նեն զդիտումս իւրեանց. և յայն սակս պտղոմէոս եդ յաղեքսանդրիա եգիպտոսի. տիքոն 'ի փոքրիկ ինչ կղզի վանեմարքի անուանեալ յաշխարհին դա-նիմարքայի. անդղիացիք 'ի լոնտրա յարքայանիստ քաղաքս իւրեանց. շվէտք 'ի յուբսալ երևելի քաղաք իւրեանց. նոյնպէս և այլք այլուր։ Բայց մեր է որոշեցելն զառաջին միջօրեայն ոչինչ օգտակար. միայն թէ որոշեսցեն ուրեք։

Սահման, այն է Հորիզոն։

Յունական անուամբ Հորիզոն (1) 'ի մեզ թարգ-մանի Եզերք կամ Եզր. Ծայր. Սահմանագ։ Եւ է շրջանակն այն մեծ՝ որ աւարտէ զտեսութ մեր առ եզերօք երկրի շուրջանակի. ուր երևի կցել երկնից անմիջապէս ընդ երկիր։

Եզերք զանազանին յաշխարհագրաց 'ի Զգալի, կամ Բնական. և յիմանալի, կամ Ճշմարիտ։ Զգալին է սահման է շրջանակն՝ որ եզերէ և պարագրէ զտեսու-թիւն մարդոյ. որպէս եթէ ոք 'ի դաշտի՝ կամ 'ի ծովու կացեալ, ուր ոչ ինչ լեառն, կամ անտառ արգել կացցէ, և շուրջ հայեցեալ, ձևացուցանէ շրջա-նակ, յոր աւարտի տեսութիւն. ուր և երևի կցել երկնից ընդ երկիր, կամ ընդ ծով։ Այս եզերք կոչի Զգա-

(1) 'Ի բառից յունին Իւրիզոն։

Ջգալի, կամ Բնական, վասն զի ոչ ձգի անդր, քան ցուր վայր տեւումն մարդոյ կարէ ժամանել: Իսկ չունին համատառան ինչ կեդրոն, այլ ուր և կայցէ ոք, շրջանակին՝ յոր աւարտի տեւումն աչաց նորա, այն է նոր եզերքը: Այլ թէ իւրաքանչիւր անհատի մարդկան են զանազանք և նոյն զգալի եզերքը. և թէ իւրաքանչիւր տեղական փոփոխումն նոյ՝ փոփոխին և եզերքը նոյին զգալիք. ուստի և անհնար է երկուց ումանց ունել ճշգիւ զնոյն եզերս: Իսկ զայսմանէ, չէ ինչ փոյթ աշխարհագրաց. վասն զի ոչ առարաձգի 'ի մէնջ՝ բայց եթէ քանի մի մղոնս. ուստի և ոչ ձևացուցանէ շրջանակ մեծագոյն, որ բաժանիցէ զերկիր յերկուս հաւասար մասունս:

Իսկ Իքուինոքցի Եկուէտոր. որ կոչի և Ճշմարիտ Եկուէտոր, է շրջանակն մեծ, որ անցեալ ընդ կեդրոն երկրի, բաժանէ զնա յերկուս հաւասար մասունս՝ կամ 'ի կիսագունդս, յորոց մին կոչի վերին կիսագունդ, իսկ միւսն ստորին: Այս եզերքը առի իմանալի, վասն զի չեք յիրում. այլ միայն իմանական. իսկ զի են թագաւորեալք զգունդ երկրի հատանել ՟ի՟ մէջ. և զմէջակէտ մակհաւասար մակերևութի կիսագնդոյն՝ իմանալից կեդրոն այսր մեծի շրջանակի. յորմէ բաղըր կիսագունդ հաւասարութեան երկրի. և զամ կիսագըրամագիծք ձգեալք յեզերս նորա՝ հաւասար են միմեանց: Բայց չէ մարթ տեւութեան մերոյ ժամանել 'ի ծայր այսր Ճշմարիտ եզերաց. այլ միայն և երևակայութ և եթ ըմբռնել. յայն սակս Ճշմարիտ եզերքը ոչ երբէք երևելի է մեզ:

Այլ եթէ ոք կամիցի գտանել զՃշմարիտ եզերս տեղւոյ իւրք յարուեստականս գունդս երկրի. պարտ է նմ զտեղին զայն դնել 'ի գլուխ կիսագնդոյն, այնպէս՝ զի սկսեալ 'ի տեղւոջէ անտի մինչև ցեզերս՝ իցեն 90 աստիճանք յամ կողմանց. և եթէ չիցէ այնպէս, այն ոչ է Ճշմարիտ եզերք այնր տեղւոյ:

Եւ զայն զայս իմանալի, կամ Ճշմարիտ եզերս մարթ է ունել բնակչաց երկուց տեղեաց, եթէ տեղիքն յորս բնակին՝ տրամաչափապէս հակադրեալ ցին միմեանց, զոր օրինակ են հակոտնեայք. քանզի յորժամ միոյն կէտ գագաթանն՝ է միւսոյն կէտ ստորական. և անդրագարձեալ՝ զի յայնժամ նոյն եզերք հատանէ զերկաքանչիւրոց կիսագունդս: Որպէս Կոստանդնուպոլիս ունի զնոյն իմանալի եզերս

զծիրս է խորում հակոտնէի, որ է 'ի սառոյն կէ-տադուռն անդր 'ի խաղաղական ովկիանոսի է 41 աստիճանաւ հարաւային լայնութեն. և է 226 աստիճանաւ երկայնութեն, եթէ գուցէ անդ ցամաք, և բնակութիւն մարդկան, և թէ նաւ ինչ անցցէ ընդ այն :

Այս շրջանակ կարի պիտանի է 'ի նկատել զըն-թացս արեգական. վն զի յայտ է թէ՝ չէ հնար ա-րեգական 'ի նոյն վայրկենի լուսաւորել, եթէ ոչ միայն զկէս գնտոյ երկրի, յայն տակս հարկ է, թէ 'ի միւսին՝ յորում է արեգակն՝ ինչէ տիւ. և 'ի հա-կակայ միւսին գիշեր : Այս յաջորդութիւնք տուընջեան և գիշերոյ յայտնապէս ցուցանեն մեզ զեզերսս. քանզի յորժամ արեգակն է 'ի վր եզերաց մերոց, յայնժամ մեզ տիւ է. իսկ յորժամ է 'ի ներքոյ նո-րա, է գիշեր : Այս ամ առաւել յայտնի լիցի յո-րոց ունիմք ասել զկնի :

Երկրագունդ :

Դիւր անդր տեսցուք, թէ արեգակն ամի ամի չափէ զբոլոր կենդանակամարն, զոր այսպէս պարտ է իմանալ :

Երկին շարժմունք են արեգական, մի յարևելից յարևմուտս. պատելով զօրհանապազ զդարձանդակ երկրաւ 'ի քսան և չորից ժամուց միջոցի. որ և կոչի Օրական շարժումն արեգական : Երկրորդ յարև-մտից յարևելս, զի զայն հանապազորդեան շրջան ոչ առնէ միապէս, վն զի յիւրաքանչիւր քսան և չորս ժամու ոչ դառնայ 'ի նոյն կէտ՝ ուստի մեկնաւ, այլ առանձին շարժմամբ օր ըստ օրէ խոտորի է հիւ-սիս, կմ ընդ հարաւ. որ է երկրորդ շարժումն : Եւ ըստ այսմ անցանելով՝ յամ օր հատանէ իբր մի մի աստիճան 'ի գծէ [illegible] խաւարման. որ և կո-չի Պարբերական, այլև Տարեկան շարժումն արեգական. զի սովին շրջաբերութբ կացուցանէ զտարի :

Զայս երկրորդ շարժումն արեգական մարթ է զգալի փորձիւ առաջի առնել այսպէս : Առեալ 'ի ձեռին գնտակ, պատեսցես զնովաւ քանի ինչ անգամ լար՝ մի զմիով. և տեսցես յայտնապէս, զի յիւրաքանչիւր 'ի դառնալն լարին առնել զնոր շրջան, ոչ գայ 'ի վր առաջնոյն, այլ պատի զնո-վաւ. և այնպէս յիւրաքանչիւր շրջանս մատչի 'ի

մի, կամ 'ի մէջ ծայր գնդակին։ Զնոյն է իմանալ և յարեգակն՝ որ թէպէտ յամ օր առնէ շրջան մի զերկրաւ, բայց 'ի դառնալն անդրէն՝ ոչ եւ ընթանայ ըստ նոյն գիծ, այլ իբր միով աստիճանաւ առ 'ի շեղ ընդ ծիրն խաւարման խոտորի 'ի նմանէ։ Զի 'ի սկզբան գարնան. այսինքն 'ի 21 կամ 22 մարտի ուղիղ ընթանայ արեգակն 'ի վերայ հասարակածին. և հատանէ զառաջին աստիճան խոյին, որ է նկարեալ 'ի կէտ անդր, ուր ծիրն խաւարման հատանէ զհասարակածն, որով լինի մեզ գիշերահաւասար. այսինքն տիւ և գիշեր հաւասար։ Այսպէս շարունակեալ զիւր պարբերական ընթացս, օր ըստ օրէ բերի 'ի կողմն արջային բևեռի, մինչև ժամանէ 'ի կենդանատեղին խեցգետնի. որ դիպի 'ի 21 յունիսի, որ օր երկայնագոյն է առ մեզ քան զամ աւուրս տարւոյ։

Յետ այսորիկ պահելով միշտ զիւր ամենօրական շարժումն, դառնայ անդրէն 'ի հասարակածն. և մերձենայ առ նա յամ օր մի մի աստիճան հատանելով ընդ ծիրն խաւարման՝ ըստ աստեղաց, մինչև գայ ժամանէ 'ի կշիռն, որ է յանդիմանակաց խոյին. ուր վերստին ուղիղ ընթացեալ 'ի վերայ հասարակածին, պատճառէ զերկրորդ գիշերահաւասար, որ դիպի 'ի 21 կամ 'ի 22 սեպտեմբերի։

Այսպէս շարունակէ զընթացս իւր 'ի կողմն հարաւային բևեռի ըստ նախասացեալ պարբերական շարժման, մինչև գայ հասանէ յայծեղջիւրն. որ դիպի 'ի 21 կամ 'ի 22 դեկտեմբերի. որ օր համառօտ է առ մեզ քան զայլ ամ աւուրս տարւոյ։ Յետոյ դառնայ վերստին 'ի հասարակածն կրկին. և գայ միւսանգամ 'ի խոյն 'ի 21 մարտի. և անդ կատարէ արեգակն զընթացս միոյ տարւոյ. այսինքն աւուրս 365, և ժամս 6. այլ քանի մի վայրկեան պակաս։ Իսկ վեց ժամքն 'ի վերայ միմեանց յաւելեալ, 'ի չորրորդում ամի կացուցանեն զօր մի. և յայնմ ամի տարին լինի 366 աւուրս։ Բայց քանզի քանի մի վայրկեանք պակասին 'ի վեց ժամուց, այն պակասորդք ամ ըստ ամէ յաւելեալ՝ յընթացս հարիւր ամաց, օր մի նուազեցուցանեն յաւուրց տարւոյ. վասն այնորիկ նոր տումարն յայնմ ամի ոչ առնէ նահանջ. իսկ հին տումարն առնէ ըստ հին սովորութեան իւրոյ, ուստի և միշտ յետս մնայ։

Ի կէտն՝ յորում արեգակն դառնայ գնալ 'ի հա-

սա-

տարածեալ կոյս մի յամառնայնի, և մի ևս 'ի ձմե-րային, Նկարեն երկու շրջանակս շուրջ զգնտաւ երկ-րի. զորս անուանեն Արևադարձս։ Այն որ է 'ի հիւսիսականումն՝ կոչի Արևադարձ Խեցգետնի. զի անդ սկսանի կենդանատեսակն Խեցգետնի (1)։ Իսկ որ է 'ի հարաւականումն՝ անուանի Արևադարձ այծեղ-ջեր. զի անդ Նկարի կենդանատեսակն այծեղջերն (2)։ Յայսմանէ յայտ է՝ թէ ոչ այլ ինչ են արևադարձք, եթէ ոչ վերջին սահմանք ընթացից արեգական 'ի հիւսիս կամ 'ի հարաւ կարգելով յամբարձէն, որոյ քայլեալթն միջոցին ըստ ընթանալոյ արեգականն՝ է 47 աստիճան. և այսպէս ոչ զարևադարձս ոչ երբեք անցանէ արեգակն։

Բևեռային շրջանակք, և Հինգ Գօտիք։

Յարևադարձից մինչև 'ի բևեռս՝ է միջոց ընդար-ձակ. և վայրքն որք յաւէտ մօտաչէն 'ի բևեռս կոյս՝ են յաւէտ ցրտայինք. զորոյ զաստիճանն ստա-նորև ստացուք։ Յայն սակս քարտիսագիրք և աշ-խարհագիրք 'ի բաժանել զօտիս՝ ըստ կամի գծեն այլևս երկու շրջանակս 'ի մէջ բևեռաց և արևա-դարձից՝ փոքրագոյնս քան զարևադարձս. և զուգա-հեռականս 'ի հասարակածէն. որք այնչափ հեռի են 'ի բևեռաց, որչափ արևադարձք 'ի հասարա-կածէն։ Զայսոսիկ երկոսին շրջանակս մատանեն գծել յառանցից կենդանակամարին. որոյ առանցք ըստ ստացուք խոտորի և հեռանայ յառանցից աշխարհի 23 և $\frac{1}{2}$ աստիճան։

Շրջանակն՝ որ մօտաչի 'ի բևեռն հիւսիսային՝ կո-չի Շրջանակ արջային (3). որ հեռի է յարևադարձէ Խեցգետնի 43 աստիճանաւ. և յարջային բևեռէ 23 աստիճանաւ և կիսով։ Իսկ այն՝ որ մօտաչի 'ի բևեռն հարաւային՝ կոչի Շրջանակ հակարջային (4). որ նոյնպէս հեռի է յարևադարձէ այծեղջեր 43 աստիճանաւ. և 'ի հակարջային բևեռէ 23 աստի-ճանաւ և կիսով։ Իսկ միջոց վայրացն՝ որք անկա-

(1) 'Ի տաճկաց կոչի Մէտարի սէրէթան։
(2) 'Ի տաճկաց կոչի Մէտարի ճէտի։
(3) 'Ի տաճկաց, Մէտարի տայիրէի շիմալի։
(4) 'Ի տաճկաց, Մէտարի տայիրէի ճէնուպի։

նին ը մէջ արեւադարձից՝ ը մէջ բեւեռային շրջանակաց՝ և ը մէջ բեւեռաց՝ անուանին Գօտիք․ և են հինգ․ մի անուանեալ Այրեցած, կամ Տօթագին․ երկու Բարեխառն․ և այլևս երկու Ցրտային․ առ է զանուն յեղանակաց տեղեացն ։

Այրեցած, կամ տօթագին գօտի (1) է այն մասն երկրի, որ պարփակի ը մէջ երկուց արեւադարձից․ որոյ լայնութին է 47 աստիճան ։ Եւ կոչի Այրեցած կամ Տօթագին՝ վն սաստկութե տօթոյն՝ որ լինի անդ, 'ի պատճառս գագաթահայեաց շառաւիղաց արեգական, որ երկիցս յամին կայ ուղիղ 'ի վերայ գագաթան բնակչաց նորա․ մինչև զայն օր՝ մարմնոց նց ոչինչ ստուեր ձգել ։

Վն այնորիկ նախնիք զայս մասն երկրի բնաանբնակ համարէին, այլ փորձն զհակառակն ցուցանէ․ վն զի թէ յափրիկէ թէ յամերիկայ և թէ 'ի հարաւային ծայրս ասիոյ, ուր ձգի այրեցած գօտին՝ գտանին բազում ժողովուրդք․ և ոչ այրին 'ի տօթոյ ։ Քանզի յաճախութիւք անձրևաց, և ցօղք գիշերայինք, և զովացուցիչ հողմունք շնչեալք 'ի բեւեռակողմանց՝ որք ցրտագին են քան զհեւրեանց գօտւոյն, մեղմեն զսաստկութե տապոյ նորա ։ Ընդ այսուիկ գօտիս երկու ամառն լինի․ զի յորժամ արեգակն գտանի 'ի գիշերահաւասարսն․ նոյնպէս և երկու ձմեռն, կամ լաւ ևս ասել՝ եր մեղ գարունք․ մայսինքն յորժամ արեգակն է յարեւադարձս․ վն զի յայնժամ արեգակն է 'ի հեռաւորագոյն նկատմամբ այսր գօտւոյ ։

Բարեխառն գօտիք (2), են այն երկու մասունք երկրի՝ որք անկանին ընդ մէջ արեւադարձից, և բեւեռային շրջանակաց․ յորոց մին՝ կոչի Բարեխառն գօտի Հիւսիսային, իսկ միւսն Հարաւային ։ Եւ պատճառն բարեխառն լինելոյ օդոյ 'ի տեղիսն յայսոսիկ՝ է, զի արեգակն ոչ երբէք լինի նց ամենեւին գագաթահայեաց, և ոչ կարի կողմնակաւն․ յայսմ սակս ոչ տապն սաստիկ է, և ոչ ցուրտն, այլ երկոքին ևս միջակաւն ։ Իւրաքանչիւրն 'ի սոցանէ ունի լայնութե 43 աստիճանաց, զի սկսանին 'ի 23 $\frac{1}{2}$ աստիճանէն․ և աւարտին 'ի 66 $\frac{1}{2}$ աստիճանն ։

Տեսք

(1) 'Ի գաղղիացւոց կոչեցեալ մինդադաւր հարրէ ․
(2) 'Ի գաղղիացւոց կոչեցեալ մինդադաւր մոնթէմփրէ ։

Տիւք և գիշերք սոցա անհամաձայն են ըստ յա-ւելու և նուազ մասցելոյ տեղեացն առ բևեռային շրջանակս ։

Չորս եղանակս տարւոյն ողջոյն կատարեն 'ի նո-սա. այս՝ ամառն, ձմեռն, գարուն, և աշուն, բայց յորժամ 'ի հիւսիսային գօտին է ամառն, 'ի հա-րաւայինն է ձմեռն, և անդրադարձեալ. սակս հա-կակայ տարածման նց 'ի հասարակածէն ։ Զուար-ճալի են այս գօտիք և յարմար բնակարանք մար-դոյ ք̃ միւս գօտիս, որք են կամ սաստիկ ջերմ, և կամ սաստիկ ցուրտ. բայց վտանգաւորք երկարու-թե կենաց սակս անդադար փոփոխութե օդոյ 'ի ջերմութենէ 'ի ցրտութի, 'ի ցրտութենէ 'ի ջերմութի. զոր չէք տեսանել այսչափ դիւրափոփոխութի 'ի միւս գօտիս, յայն սակս բազում լսեմք երկարակեացս յայն գօտիս, ք̃ 'ի բարեխառն գօտիս ։

Յիշէ զայսոսիկ Վարդան 'ի մեկն. ծն. ՟Ա. 17. բանիւք Եղիշէի. „Յորժամ 'ի հարաւ շարժի արե-
„ գակն սառնասառոյց պաղին կողմանքս հիւսի-
„ սի, և ձմերային ցրտութի տագնի 'ի միջոցս աշ-
„ խարհի, և աշխարհն հնդկաց ամառնանայ 'ի
„ պտղահասութի. քանզի ծով հրեղէն է հարաւ-
„ բնական ջերմութեն ('ի նոր օրէն. վն խառնական
„ ջերմութեն), և արեգակն ևս տայ նմ օգնակա-
„ նութի, և զմեր բքախառն ձմեռն առնէ նց քա-
„ ջախառնութի. և պտուղք աշխարհին որիշ են 'ի
„ պտղոյ մերոյ աշխարհիս, համով և հոտով և գու-
„ նով. և իւղք և խունկք հոլովագոյն ունին ըղ-
„ մասունս հրոյ, և սևաց մարդ յոլովագոյն է 'ի
„ մարդիկն, վն լինելն իբրև զարջասպնաներկս.
„ և ոչխարք անբրդաբերք՝ ուղտք և գոմէշք լերկք,
„ բայց քանզի հրուտք են՝ առողջաբերք և յերկա-
„ րակեացք են բնակիչքն „ ։

Իսկ Ցրտային գօտիք (1), են այն երկու մասունք երկրի՝ որք անկանին ընդ մէջ բևեռային շրջանա-կաց՝ և բևեռաց, որոց կեդրոնն՝ է կէտն բևեռա-կան ։ Այս գօտիք անուանին Ցրտայինք, վն սաս-տիկ սառնամանեաց որ տիրէ 'ի նս գրեթէ ՟Է ամիս տարւոյն. որոց պատճառն՝ է ամենևին կողմնական հայեցուած շառաւիղաց արեգական. ուստի և

(1) 'Ի տաճկաց կոչին [illegible] պարիսակ ։

գօտւոյն ջերմութեան բաւական 'ի մեղմել զզօրութիւն ցրտութեան օդոյն :

Ցրտային գօտի հակարկտային կամ հարաւային՝ ըստ տեղեկութեանց զոր ունիմք մինչև ցայժմ 'ի Ճանապարհորդաց, առաւելու ցրտութեամբ քան զցրտային գօտի հիւսիսային $22\frac{13}{16}$ աստիճան՝ որպէս գտանէ Ֆորսդէր : Պատճառ այսմ կարծեն գտանել նախ զայն, զի չիք անդէն ցամաք մեծ և լայնածաւալ դէթ մինչև յայն աստիճան՝ յորս առաջին և վերջին Ճանապարհորդք շրջեցան. զի մինչ 'ի 71 աստիճան. արդ՝ ոչ գոլով ցամաք, Ճառագայթք արևուն ոչ կարեն անդրադարձ լինել սաստկութեամբ 'ի ծովու որպէս լինէին 'ի ցամաքի. և այնպէս ոչ կարեն ջերմացուցանել զօդ, որպէս ջերմացուցանեն 'ի ցամաքի. մի այսպիսի սաստկանայ ցուրտն հարաւային կողման : Իսկ այն կղզիք որք գտանին յայնմ հարաւային ծովու, են բազմաթիւք գոլով փոքր, շրջապատեալ յանդնդոց ծովու, դրեթէ ոչինչ ազդէ անդրադարձ լինելում Ճառագայթից արևու որ 'ի նա : Այլ զօտին հակառակին է տեսանել 'ի հիւսիսային բևեռակողմն, ուր մերձ 'ի բևեռն են ցամաքք մեծամեծք, զոր օրինակ 'ի վերին մասն աշխարհի՝ Լապոնիա, Հիւսիսային մասն Ռուսաց որ 'ի Եւրոպիա և յԱսիա, և 'ի կղզեաց՝ Նոր զեմլիա, Իսլանտա, և յայնկոյս ք̃ զնա սպիցպերկ կղզին. Նոյնպէս 'ի նորին մասն աշխարհի 'ի յամերիկա՝ այն ցամաք որ անկանի ղաբրատորիւ յուտսոննեան և պաֆֆինեան : Երկրորդ պատճառ կարծեն յաւելուլ ը̃ Ֆորսդերայ և. զայն՝ զի արեգակն զաւուրս 8 առաւել մնայ 'ի հիւսիսակողմն ք̃ թէ 'ի հարաւակողմն մի տարեկերպունեն. ուստի ձմեռն հարաւակողման 8 աւուրբք առաւելու քան զհիւսիսակողման, և ամառն 8 աւուրբք պակաս ք̃ զհիւսիսակողման : Թէպէտ և յամենայն հարաւայնոց արևամերձ է երկիր, որով պարտ էր առաւելուլ տօթոյ նց̃, և բարեխառնութե բևեռին, սակայն 'ի վ̃ր այսր մեծի ոչ է այնպէս :

Եւ սակս այսպիսի բարեխառնութե օդոյ հիւսիսակողման բևեռին, 'ի ցամաքս նր̃ ուրեք ուրեք լինին նաև բերք երկրի, հասուցանեն ցորեան, և այլ պտուղ, 'ի համեմատ ամառան նց̃ օդ. նց̃ ջերմանայ ոչ յոյժ նուազ քան զարևադարձիցն : Իսկ հարաւային կղզիք անբնակ են և անբերք. մինչև Ճանապարհորդք և ոչ իսկ 'ի ծովու անտի կարելք

ան

անկեալ փոյթ ինչ կա՞ տուն ծառայ · խաղաղանշիւր կղզիք փոքրիկ և ամկաւք, և այն մինչ 'ի 60 աստիճան · իսկ անտի յառաջ յառաւել հարաւակողմն ոչ գտին ցամաք ինչ, բայց միայն երկու փոքրիկ անկիւնս 'ի հարաւային ադրանդեան ծովուն: 'Ի յամառայնութիւն յառաւել ջերմ աւուրս՝ յայն խորին աստիճանս հարաւայինն բայնութեն՝ մեզ ընկն ջերմաչափին առ սառուելն 5 աստիճանօք բարձրանայր է զաստիճան սառնամանեաց, 'ի նաւարկութեն գուգայ նորոց ծանուպարհորդի յայն կողմն · և բազում անգամ եհաս 'ի նոյն իսկ աստիճան սառնամանեաց, որպէս վկայէ Փորսդեր ընկեր գուգայ, յորում ժամանակի իջանէր ձիւն, և անձրև սառուցեալ, և ջուրք որ 'ի ամկառս նաւուն սառուցեալ մնային: Արդ՝ եթէ այսպէս է յամառան նց, զինչ լինիցի 'ի ձմեռան: Զայս առաւելուն ցրտութե հարաւակողման է զարմանալի հեւսիսակողման, ուսանիմք պիւֆֆոնէ 'ի Ա հտ · դր · երկրի, այլ յետ ընթերցց զնաւարկութեն գուգայ, ուղղադրէ զնոր կարծիս 'ի Է · հտ · դր · երկրի, որում ուղղագրութե թերևս անտառեղեակ գոլով Փորսդեր, վայրապար 'ի մէջ բերէ զպառաւջին կարծիս պիւֆֆոնի առ 'ի մերժել:

Լայնութե երկրագնդիւր ցրտային գօտւոյն է 23 աստիճան և կէս · ուր կարի անհաւասար են տիւք և գիշերք · զի յաւուրս ինչ ամառայ բնաւ ոչ ծագէ նց արեգակն · որպէս և ընդ հակառակն՝ աւուրս ինչ բնաւ ոչ մտանէ · ուստի և է միշտ տիւ · որպէս յաւ-գոսջնութեն միշտ գիշեր:


Իսկ առ բևեռօք ամիսս վեց տիւ է անընդհատ · և ամիսս վեց գիշեր: Բայց խորին գիշերն հազիւ տևէ ամիսս երկուս · 'ի պատճառս առաւօտեան արշալուսոյն, և երեկոյեան նուաղ լուսոյն · որք երկարաձգին իբրև ամիսս չորս · երկու ամիս յետ մտանելոյ արեգականն յերեկոյց նց, և այլևս երկու ամիս յառաջ քան զծագելն: Այլև լուսինն, և աստեղք, որպէս և ձիւնն, որ հանապազ պատեալ ունի զնոյն զերկիր: Նուազեցուցանեն զխաւարն մթութեան:

Կէտք գագաթան և ստորոտան, կամ Վերնակէտք և Ստորնակէտք:

Այս երկու կէտք յարաբերաբար Զենիթ և Նադիր անուանեալք ոչ գոն իրօք, այլ միայն ըմբռնելին. մի զի է նա տեղիս, ուր և կեցեալք, կարեմք մտածել ուղիղ գիծ. որ 'ի կեդրոնէ երկրի անցեալ է գագաթն մեր, ժամանեսցէ մինչև յերկինս: Արդ կէտն երկնից՝ ուր գիծն այն աւարտի, կոչի Կէտ գագաթան. կամ միով անուամբ Վերնակէտ, և զենիթ (1). և է կեդրոն եղերաց տեղւոյն, կամ յայտնագոյն ասացից, է այն կէտ երկնից՝ յորմէ գիծ ձգեալ, գայ ուղիղ անկանի 'ի մէջ գագաթան ուրուք. որ գոլով բարձրագոյն կէտ երկնից նկատմամբ ուրուք, մերձ 90 աստիճանօք, կամ քառորդաւ բոլորակի հեռի է յինչևիցէ կիտէ եղերաց. ենթադրելով իբրև յայտնի ինչ, թէ աստիճանս իմանան ամենեքին զերեք հարիւր վաթսուներորդ մասն բոլորակի. ուստի և քառորդն, կամ չորրորդ մասն բոլորակին՝ պարունակէ 90 աստիճանս: Այս կէտ միշտ փոփոխի՝ 'ի փոխելն զդիրս և զեղերս տեղւոյ:

Իսկ Կէտն ստորոտան կամ միով անուամբ Ստորնակէտն, կամ Նադիր (2) է կէտն տրամաչափապէս դիմակաց կիտին գագաթան 'ի միւս կողմանէ երկրի. որ 'ի կեդրոնէ երկրի ձգի ընդ հակառակն, և ժամանէ մինչև յերկինս հակակայ կողման. ուստի և հակոտնեից մերոց՝ է կէտ գագաթան, իսկ մեզ՝ ստորոտան. և ուղիղ գայ անկանի ընդ ոտիւք մերովք: Արդ եթէ ըմբռնեսցուք բոլորակ, որ պատեսցէ զերկինս բովանդակ անցեալ է կէտն գագաթան, և է կէտն ստորոտան, յերկուց կողմանց լինին երկու կիսաբոլորակք, երկոքին ևս 180 աստիճանօք, որպիսի են և ամ միջօրէականք: Զայսպիսի կիսաշրջանակս աստեղաբաշխք անուանեն Գագաթայինս. և նովաւ չափեն զբարձրութ աստեղաց. զի ըստ լուսնտոյ՝ բարձրութիւն աստեղ ոչ այլ ինչ է.

(1) 'ի փռանկաց կոչեցեալ Սէմթիրէկս:
(2) 'ի փռանկաց Սեմթիրդատեմ:


30
20
10
10
20
30
40
70
60
50
40
50
60
30
20
10

է, եթէ ոչ տեղին որ 'ի մէջ սառուցն՝ և եղերաց ։

Այսպէս ինչ յաղագս շրջանակաց, զոր գծեն չափաւորք 'ի վ՟ր գնտոյ երկրի. զորոց կարես ուսանել և յառաջիկայ պատկերիդ ։ Այլ բաց 'ի սոցանէ առ ճշգրիտ ծանօթութիւն դրից զանազան տեղեաց, կարեւոր է ունել զծանօթութիւն ինչ և լայնութեան, կամ զբարձրութեան բևեռին, և զերկայնութեան տեղեաց, և զպէսպէս բաժնից, զորոց ասասցուք յառաջիկայդ ։

Լայնութիւն, և Երկայնութիւն տեղեաց.

Երկիրս գոլով բոլորաձև, ոչ կարէ ունել ոչ լայնութիւն, և ոչ երկայնութիւն ճշմարիտ առեալ, սակայն աշխարհագրեալք մուծին զերկոսին ևս, որք կարին պիտանի լինել 'ի գիտել զիրական լայնութիւն և զերկայնութիւն տեղեաց. վ՟ն զի սոքօք մարթ է գտանել զճշգրիտ դիրս նց 'ի ծովու և 'ի ցամաքի, և զչափ տարածութե ։ Այլ գիտել պարտ է, զի զլայնութիւն և զերկայնութիւն տեղեաց յայսմ վայրի ոչ առնումք փոխանակ տարածութեան աշխարհաց, և գաւառաց, զորս սովոր յիշատակել լինի սորա, 'ի բաժանելն մեր զերկիր 'ի զանազան աշխարհս. ուր համեմատեալ եղև զչափ տարածութեան յերկայնութիւն և 'ի լայնութիւն իւրաքանչիւր աշխարհաց դնել առաջի. զոր օրինակ թէ այսպէս է երկայնութիւն կամ լայնութիւն հայաստան աշխարհի, գերմանիոյ, իտալիոյ և այլն. այլ առնումք յաշխարհագրական միտս ։

Արդ լայնութիւն տեղեաց (1) է՝ այսմ՝ առեալ՝ է հեռաւորութիւն տեղւոյ իրիք 'ի հասարակածէ 'ի բևեռս կոյս ։ Եթէ տեղին իցէ 'ի հիւսիսակողմն հասարակածին, միջոցն այն ասի Լայնութիւն հիւսիսային ։ իսկ եթէ իցէ 'ի հարաւակողմն՝ Լայնութիւն հարաւային ։

Զլայնութիւն տեղեաց թուել պարտ է 'ի վերայ միջօրէայ շրջանակին 'ի հասարակածէ 'ի բևեռս կոյս գնալով ։ Եւ զի լայնութիւն տեղւոյ միշտ հաւասար է բարձրութեան բևեռին, յայն սակս 'ի գտանելն զլայնութիւն տեղւոյ իրիք, գտանի Է նմին. և

(1) 'Ի տաճկաց կոչեցեալ Արզ ։

բարձրութիւն բեւեռի նը. զի բարձրաւն բեւեռին ոչ այլ ինչ է՝ բայց եթէ վերամբարձումն բեւեռին 'ի վ՛ր եզերականց անդւոյ երկրի. իսկ զմիջոցն որ 'ի մէջ բարձրացելոյ բեւեռին և եզերականց՝ աշխարհագրական լայնութիւն կոչեն, զի է չափոյ հեռաւորութեան անդւոյ երկրի 'ի հասարակածէն՝ բարձրանալ նմ և բեւեռն ։

Տեղիք անկեալք ընդ հասարակածաւ, ընդ մասամբ, մանկամանեկք, և այլ ամենայն տեղիք աշխարհիս ծովին հնդկաց, և սումատրա, և պորնէոյ կղզեաց, և գվինէա, մինչև ցգրաւեա ամազոնացւոց. և այլ տեղիք չունին բնաւ լայնութիւն, կամ բարձրութիւն բեւեռի. քանզի բեւեռք նը ոչ երեւին 'ի վերայ եզերականց նը, այլ միաձայն է նմ։ Իսկ ընդ հակառակն՝ տեղիք անկեալք ընդ բեւեռօք՝ ունին զմեծագոյն լայնութիւն, և զբարձրութիւն բեւեռի. զի 90 աստիճանաւ հեռանան մինչև ցհասարակածն, որ միացեալ է եզերականց նը. իսկ տեղիք անկեալք ի մէջ հասարակածին և միաւմ 'ի բեւեռաց, որչափ առաւել մերձ են 'ի բեւեռս կամ, այնչափ առաւել է լայնութիւն նը, և բարձրութիւն բեւեռին։ Զոր օրինակ տեղւոյ լայնութիւն կամ բարձրաւն բեւեռի մոլուքայ ցամաքն կղզւոյն՝ է 2 աստիճան, կալկաթայ քաղաքի անգղիացւոց 'ի պանկալա 25. Սպահանայ արքայանիստ քաղաքի պարսից 32. Կարնոյ քաղաքի 'ի մեծն հայաստան 40. Կոստանդնուպօլսոյ 41. Վենետիկոյ 45. Պերլինոյ արքայանիստ քաղաքի պրուսիոյ 52 և կէս. Ս. Պետերբուրգոյ արքայանիստ քաղաքի մոսկովաց 60. Վարտհուսայ 'ի լապոնիա 70։ Այսպէս են յաւէտ և նուազ հեռաւորութեան 'ի հասարակածէն, և մերձելոյ 'ի բեւեռն հիւսիսային՝ յաւէտ և նուազ լայնութիւն ունին։ Զայսպիսի լայնութիւն չափելոյ ունիս զոր առաջարկ գլ. Ե. յօդ. Ե. Թէ զիարդ կարող ես կարգել փոքրկանանն 'ի մերձեալն 'ի բեւեռս կամ։ Լայնութիւն չափանակիք բազում են, զասն կոչեն Զապանէտոնական։

Իսկ երկայնութիւն (1) է տարածութեան յառաջնոյ միջօրէէ մինչև ցյառաջնոյեալ տեղին. Թուելով զաստիճանս մէջ 'ի վ՛ր հասարակածին յարեւմտից յարեւելս գնալով. կամ առաջարկեալ Միջօրէականն գիծ, կամ Միջօրէական շրջանակ, ստէս ցուցանէ

Ըղ-

(1) 'Ի տաճկաց Պոռուշ կոչեցեալ։

զմիջօրէս տեղեաց ։ Արդ՝ ըստ հասարակաց դրութեան առաջին միջօրէն դրեալ ՚ի մէջ Երկաթի կղզւոյն, որչափ հեռաւորութեան են տեղիք ինչ յառաջնոյն միջօրէէ անտի՝ և մինչև յարևելս, այնչափ աստիճան է երկայնութիւն նց ։ Այս երկայնութիւն Վենետկոյ է 30 աստիճան. Պեռլինոյ 31. Կոստանդնուպօլսոյ 46. Կարնոյ քաղաքին 59. Սպահանայ 70. զի այսչափ աստիճանօք հեռի են այդր յառաջնոյն միջօրէէ. իսկ Երկաթի կղզին չունի բնաւ երկայնութիւն, զի է անմիջապէս ՚ի ներքոյ առաջնոյ միջօրէի ։

Իսկ երկայնութիւն մասնաւոր տեղեաց բաղդատութ̃բ միմեանց է աղեղն հասարակածին որ ընդ մէջ երկուց միջօրէից նց. կամ հեռաւորութիւն նց ՚ի միմեանց յարևմտից յարևելս ։ Զոր կամեցեալ գտանել՝ պարտ է զթիւ աստիճանաց հեռաւորութեան նց յառաջնոյ միջօրէէն՝ հանել ՚ի միմեանց. և յաւելուածն ցուցանէ զթիւ աստիճանաց երկայնութեան նց. կամ զհեռաւորութեան միջօրէից նց ՚ի միմեանց ։ Զոր օրինակ ՚ի 46 աստիճանէ երկայնութեան Կոստանդնուպօլսոյ հանելով զ30 աստիճան երկայնութեան Վենետկոյ, յաւելուածն 16 աստիճանք. որ ցուցանէ թէ Կոստանդնուպօլիս 16 աստիճանաւ է յառաջ յարևելս՝ քան զՎենետիկ. ուստի և միով ժամու և 4 վայրկենիւք վաղագոյն ժամանէ արեգակն ՚ի միջօրէական գիծ Կոստանդնուպօլսոյ՝ քան Վենետկոյ ։ Եւ ՚ի Սպահան, որ 24 աստիճանաւ է առաւել յարևելս քան զԿոստանդնուպօլիս, միով ժամու և գրեթէ երկու քառորդաւ վաղագոյն ժամանէ ՚ի միջօրէն Սպահանու քան ՚ի Կոստանդնուպօլիս ։ Նոյնպէս և այլ տեղիք որչափ առաւել մօտ են յարևելս, նոյնչափ առաւել կանուխ է միջօրէն նց ։

Քանզի արեգակն օրական շարժմամբ իւրով յիւրաքանչիւր ժամու անցանէ 15 աստիճանս. որով ՚ի միջոցի 24 ժամուց կատարէ զբոլոր շրջանակ 360 աստիճանաց, որ է չափ շրջանակի կենդանակամարին, և օրական շրջանի արեգականն ։ Նմին իրի յայնս տեղիս՝ որք հնգետասան աստիճանաւ առաջակայքն ՚ի միմեանց յարևմտից յարևելս, միշտ միով միով ժամու վաղագոյն ծագէ նց արեգակն, նոյնպէս և վաղագոյն ժամանէ ՚ի միջօրէական գիծ նց ։ Եւ յայսմանէ է՝ զի ՚ի նմին ժամու յորս ինչ տեղիս՝ է առաւօտ, յայլում՝ օր հասարակ. իսկ յայլում՝ երեկոյ. և այլ՝ ասելս. քաղաքական

ձևոյ գնտոյ երկրի . որ և 'ի վերոյ անդր նշանակեցաք 'ի ձևոյ ձևոյ հողմանկարայս մերոյ :

Այլ թէ առ խնդիր այս տարբերակութեան որ յարևմտից յարևելս երկայնութիւն կոչի . խակ տարբերակութիւնն 'ի հասարակոյ ընդ հիւսիս լայնութիւն , գիտել պարտ է , զի նախնի աշխարհագրագէտք՝ որք միայն զերկրին կիսագունտն մեր գիտէին , ընդարձակագոյն տարածութիւն ծանեան յարևմտից յարևելս , քան 'ի հասարակոյ ընդ հիւսիս . զի առ Ժամանակօք պտղոմէոսի մինչ 'ի 180 աստիճան ծանեան յարևմտից յարևելս . խակ 'ի կողմն հիւսիսոյ մինչ 'ի 63 . կամ 'ի 65 աստիճանն եւեթ . բայց 'ի հասարակածէն նոտիոսի մինչ 'ի 15 : Զոր նշանակէ և միոյ խորհրդոցն յամանն յիշատակ աշխարհագրութեան : « Երկայնութիւն
» յարևմտից սկիզբն առարկեալ , որ է ծով անծա-
» նօթ ովկիանոս , 'ի ծայրէ 'ի ստանձին աշխարհէ ,
» մինչև յարևելս յեզր անծանօթ աշխարհին ան-
» ծանօթ երկրի՝ մասունս Ճծ : Այսպէս և լայնու-
» թիւն սկիզբն առարկեալ յայրեցեալ գօտւոյն , շա-
» րունակ զհիւսիսի ցանծանօթ ծով և երկիր , մա-
» սունս կա : Եւ զարձեալ յայրեալ գօտւոյն 'ի
» հարաւ կոյս շարունակ յանծանօթ երկիր , մասունս
» ժե . որպ զի լինել է ամ լայնութեան մասունս ձ :
» Եւ առաւել յարտաքս կոյս քան զայս , ոչ ուրուք
» զերկիր առնուլ , և կամ գիտացեալ . որպէս ասէ
» պտղոմէոս » :

Յայտ առնէ զտարածութիւն յարևմտից ընդ արևելս երկայնութեան անուանեցին , խակ 'ի հասարակոյ ընդ հիւսիս՝ լայնութիւն : Եւ թէպէտ յետոյ յերկրի 'ի յայտնեցին և զայլն կիսագունտն , և այնպէս ընդարձակ տարածութիւնք երկրի 'ի վերին կիսագունտ մեր , երկու այս տարածութիւնք գրեթէ հաւասարեցան , սակայն կամեցաւ աշխարհագրաց զայսպիսի անուանս նախնեաց անփոփոխ պահել :

Արդ՝ թէպէտ երկայնութիւն երկրի կոչի յարևմտից յարևելս , լայնութիւն երկրի կոչի 'ի հիւսիսոյ 'ի հարաւ , սակայն գիծքն որք ձգին 'ի յաշխարհացուցս 'ի հիւսիսոյ 'ի հարաւ , կոչին գիծք կամ շրջանակք երկայնութեան . մինչ զի ցուցանեն կամ հաւասարեն զաստիճանս երկայնութեան երկրի . գիծքն՝ որք ձգին յարևմտից յարևելս , կոչին գիծք կամ շրջանակք լայնութեան , մինչ զի հաւասարեն կամ ցուցանեն զաստիճանս լայնութեան երկրի : Աստիճանք երկայնութեան որք 'ի

վերոյ ասացաք, նշանակին 'ի վ՟ր շրջանակաց լայ֊նութեան, զոր համատարած աշխարհացոյցք միայն 'ի հասարակածն նշանակեն, որ է մեծագոյն շրջա֊նակ լայնութեան. իսկ աստիճանք լայնութեան՝ նշանա֊կեն 'ի վ՟ր շրջանակաց երկայնութեան. զոր համատա֊րած աշխարհացոյցք շուրջանակի զեզերօքն նշա֊նակեն: Այս ա՟մ ծանօթութեն երկայնութեան և լայ֊նութեան տեղեաց պիտանի է յոյժ առ 'ի տեղեկութիւն աշխարհագրական սկզբանց, և ևս զի նովաւ մարթ է անվրէպ գտանել զբնիկ դիրս նց:

Զոր օրինակ կամեցեալ գտանել զբնիկ դիրս կոս֊տանդնուպօլսոյ 'ի վ՟ր աշխարհացուցի, պարտ է ձգել գիծ մի 'ի 46 և կէս աստիճանէ հասարակա֊ծին ընդ հիւսիս, և այլ գիծ մի 'ի քառասներորդ֊առաջներորդ աստիճանէ առաջնոյ մէջօրէի յարև֊մտից յարեւելս. տեղին՝ ուր երկու այս գիծք հա֊տանեն զմիմեանս, անդ է բնիկ դիրք կոստանդ֊նուպօլսոյ:

Եւ ահա այս իսկ է պատճառն, զի այնչափ փոյթ տանին աշխարհագիրք 'ի գտանել զերկայնութիւն և զլայնութիւն գծեան գլխաւոր տեղեաց. որում առա֊ւել պէտս ունին նոքա՝ որք նաւեն ընդ ծով, առ 'ի խուսել 'ի վտանգաւոր տեղեաց. մանաւանդ յոր֊ժամ վարին 'ի մրրկաց 'ի մէջ լայնածաւալ ծովուն ովկիանոսի: Այլ 'ի գտանել գործեօք զլայնութիւն չունին ինչ դժուարութիւն, յորժամ երևի նց արե֊գակն, կամ հաստատուն աստղ ինչ ծանուցեալ նց. այլ դժուարութեան մեծ կրեն 'ի գտանել զերկայնութիւն 'ի ծովու: Ազգին իրի անգղիացիք, և հոլանտացիք, և գաղղիացիք 'ի բազմ ժամանակաց հետէ պարգև բազում խոստացան այնմ, որ հնարեսցէ հնարս ինչ, կամ գործիս, որով դիւրաւ և անվրէպ գտցի ճշգրիտ երկայնութիւն տեղւոյ 'ի ծովու: Խորհրդա֊րանն անգղիացւոց արժան համարեցաւ խոստանալ 'ի պարգև 10000 ըսդեռլին այնմ՝ որ գտցէ զեր֊կայնութիւն գծեալ ըստ միոյ աստիճանի մեծագոյն շրջա֊նակի, կամ ըստ չափու 60 աշխարհագրական մղոնաց: Եւ 15000 ըսդեռլին այնմ՝ որ գտցէ զնոյն ըստ 40 մղոնաց: Իսկ 20000 ըսդեռլին այնմ՝ որ գտցէ զնոյն ըստ կէս աստիճանի, կամ 30 աշխարհագրա֊կան մղոնաց:

Եւ բազումք բազում կանոնս և եղանակս հնա֊րեցին, բայց չև ևս ժամանեցին 'ի ճշդուն, և 'ի կա֊

տա֊

տարբերալ անվրիպութիւն ։ Որոյ գլխաւոր պատճառն է՝ զի 'ի ծովու չէ մարթ յաճողապէս և անշարժ 'ի գործ ածել զերկրայինաձիր գործիս, որք պիտանին լին 'ի գնտութիւն երկնային լուսաւորաց՝ առ 'ի ցուցմունս ։ որով լինէր անվրէպ գտանել զճշգրիտ երկայնութեան տեղեաց որչափ ինչ մարթ էր, մինչ զի և 'ի ցամաքի ևս բազում անհամեմատութիւն գտանի 'ի մէջ հատկանաբերաց զերկայնութեան տեղեաց ։

Այլ սա 'ի զուարճութեան աստուածաբանութեանց, միանգամայն և 'ի գիտութեան զատուցելոյ 'ի մէջ աշխարհացուցից զգենիկ գիրս տեղեաց, կարեւոր վարկաւ կարգել աստանօր զաստեղծեկայ աղիւսակ երկայնութեան և լայնութեան գլխաւոր տեղեաց, զերկայնութիւն կալեալ 'ի միջօրէէն երկաթի կղզւոյն ։

Ցուցակ երկայնութեան և լայնութեան գլխաւոր քաղաքաց երկրի ։

Անուանք քաղաքաց ։	Երկայնութիւն ։		Լայնութիւն ։	
	Աստիճան ։	Մանրամասն ։	Աստիճան ։	Մանրամասն ։
Ազորեան կղզիք .	350. և 354.		39. և 40.	
Աժտերխան . . .	68.	5.	46.	12.
Ալիկուռնա . կամ Լէվոռնա	27.	54.	43.	33.
Աիւրիդա . . .	61.	50.	41.	32.
Ակբարաբադ . կամ Ակրա 'ի Հնդկաց	94.	18.	26.	43.
Աղեքսանդրիա .	47.	51.	31.	11.
Ամստերդամ . .	22.	25.	52.	22.
Անվերսա . կամ Անդվերբիա .	21.	58.	51.	13.
Անկոնա	31.	15.	43.	37.
Արելադ . կամ Արլէս .	22.	12.	43.	40.
Արխանգել . . .	56.	29.	64.	34.
Աւենիոն . . .	22.	23.	43.	57.
Բառմա	28.	27.	44.	50.
Բադուա . . .	29.	30.	45.	22.
Բեդերբուրգ . .	47.	54.	59.	56.
Բիաչէնցա . . .	27.	18.	45.	5.

Անուանք քաղաքաց.	Երկայնութիւն.		Լայնութիւն.	
	Աստի.	Մանր.	Աստի.	Մանր.
Բիզա	27.	56.	43.	43.
Բրակա	32.	20.	50.	6.
Գոփենհայկ	30.	19.	55.	40.
Գրագովիա	37.	24.	50.	10.
Դէվրէզ	65.	18.	38.	6.
Դուրին	25.	18.	44.	54.
Դրնավիա 'ի մա- ճառս	35.	30.	48.	23.
Դրապօլուս	30.	39.	32.	53.
Դօլօսա 'ի գաղղիա	19.	0.	43.	35.
Եաշ	45.	8.	47.	9.
Եէտօ	157.	50.	36.	0.
Երևան	63.	6.	40.	8.
Երուսաղէմ	52.	54.	31.	50.
Էնկիւրի	51.	6.	39.	43.
Էջմիածին	62.	45.	40.	8.
Էախմապուրկ 'ի մա- ճառս	14.	29.	55.	58.
Էրզրում	59.	5.	39.	55.
Թէֆլիզ	64.	25.	41.	55.
Թօխաթ	54.	50.	39.	8.
Թունուզ	28.	15.	36.	40.
Իզմիր	44.	54.	38.	28.
Իլվով 'ի լէհաստան	42.	43.	49.	52.
Լիմա 'ի բերու	300.	44.	12.	1.
Լիսպօն	8.	25.	38.	42.
Լիփցիա	29.	54.	51.	19.
Լիօն 'ի գաղղիա	22.	24.	45.	45.
Լօնտրա	17.	29.	51.	31.
Կալկաթա	105.	0.	25.	15.
Կէրէտ	42.	45.	37.	17.
Կզղի երկաթի	0.	0.	27.	47.
Կօա 'ի հնդիկս	91.	19.	15.	31.
Կոստանդնուպօլիս	46.	30.	41.	1.
Կրաց	33.	24.	47.	4.
Կռէնօպլ	23.	18.	45.	11.
Հալէպ	54.	54.	35.	45.
Հռոմ	30.	3.	41.	53.
Հրուանդան բարեյու- սոյ	35.	58.	33.	55.

Հռու-

Անուանք քաղաքաց։	Երկայնութի։		Լայնութի։	
	Աստի.	Մանր.	Աստի.	Մանր.
Հոլանդական գաւառքն.	0.	24.	14.	43.
Հոլանդական հիւսիսոյ 'ի լաբբանիա.	43.	30.	71.	10.
Հոլանդական նոր երկիր	8.	20.	42.	56.
Ղայիսերի . . .	53.	27.	38.	31.
Ճեզայիր . . .	21.	28.	36.	40.
Ճենօվա	26.	24.	44.	25.
Ճինեվրա . . .	23.	58.	46.	12.
Մալագա . . .	119.	39.	2.	12.
Մալթա	32.	4.	35.	54.
Մակօնյա . . .	25.	54.	49.	54.
Մանիլա	138.	25.	14.	36.
Մաշկաթ . . .	76.	0.	23.	20.
Մատրաս . . .	98.	0.	13.	30.
Մարսիլիա . . .	22.	26.	43.	17.
Մետինա . . .	55.	13.	24.	50.
Մեքքե	56.	55.	21.	55.
Մասրր	40.	10.	30.	0.
Միլան	26.	44.	45.	28.
Մօնաքօ	29.	15.	48.	3.
Մօտէնա	28.	26.	44.	34.
Մոսգվիա . . .	55.	20.	55.	45.
Մուսուլ . . .	60.	54.	36.	8.
Նաբօլի	31.	46.	40.	50.
Նառպօնա . . .	20.	34.	43.	11.
Շամախի	68.	20.	40.	45.
Շիրազ	69.	10.	29.	10.
Որմզ	64.	8.	37.	8.
Ուրհա	56.	50.	36.	27.
Պայազիտ . . .	62.	25.	39.	35.
Պաղտատ . . .	62.	15.	33.	20.
Պանսիլվա . . .	25.	9.	47.	42.
Պասրա	65.	18.	30.	26.
Պիթլիս	60.	45.	37.	30.
Պեռլին	31.	0.	52.	31.
Պօլօնիա	28.	55.	44.	29.
Պուխարա . . .	83.	0.	39.	5.
Պուքրէշ	43.	6.	44.	49.
Պուռսա	46.	40.	39.	53.

Պրագա

Անուանք քաղաքաց։	Երկայնութիւն ։		Լայնութիւն ։	
	Աստ.	Մանր.	Աստ.	Մանր.
Պադուա	34.	42.	51.	3.
Սիամ	118.	24.	14.	18.
Սթոքոլմ	35.	37.	59.	20.
Սեւիլլիա	40.	42.	40.	41.
Սիոյին	41.	50.	46.	5.
Սր̃ կարապետս	59.	40.	38.	37.
Սուրաթ	89.	54.	21.	10.
Սպահան	70.	24.	32.	25.
Վան	62.	27.	37.	40.
Վարշավ	38.	34.	52.	14.
Վենետիկ	29.	59.	45.	27.
Վերոնա	28.	35.	45.	26.
Վիեննա աւստրիոյ	34.	32.	48.	10.
Վիրգինեմպերգ 'ի սաքսոնիա	30.	30.	51.	53.
Վուրցպուրգ	27.	48.	49.	46.
Տանցքա	36.	5.	54.	22.
Տարսոն	52.	28.	37.	1.
Տաքքա	106.	50.	23.	30.
Տիարպեքիր	57.	55.	37.	33.
Տրապիզոն	57.	13.	41.	0.
Փարէզ	19.	54.	48.	50.
Փէքին	134.	3.	39.	54.
Փաննթիչէրի	97.	30.	11.	56.
Քէֆէ	54.	5.	44.	43.
Օքսֆորդ	16.	19.	51.	44.

Արդ՝ թէպէտ աստիճանք երկայնութեան 60 մղոն են 'ի գիծն հասարակածին՝ բայց որչափ հեռանան յայնմանէ և մերձենան 'ի բևեռսն՝ այնչափ անձկանան մինչոց նց. վա այն թէ ոք կամիցի 'ի վր̃ հաշուել ուղիղ չափոյ նց, կարէ ուսանել յաղիւսակին երկայնութեան զոր եդաք 'ի վերոյ (Թղթ. 62). զի ոնց տասցաք անդ՝ թէ նուազելոյ շրջանակաց լայնութեան, նուազի և չափ աստիճանաց երկայնութեան։

Այսչափ ինչ յաղ̃ս երկայնութեան և լայնութեան տեղեաց, և բարձրութեան բևեռին. զոր ծանուցեալ. մարթ էր դիւրաւ գտանել և զժամերս այլևայլ տեղեաց. զի ժամերք չափին ըստ լայնութեան աստիճանաց. բայց, զեն աւելնեքեն այսմ բաւականս.

յայն

յայն ամիս է պայքաց աշխարհագրաց զինի՝ առանձնացուցած յառաջինսն զ՛բանվեհ մասնաւոր ծանօթութիւս և յաղագս բաժնից։

Բաժին. այն է՝ Կշիռ.

Կշիռ անուամբ յանուանեն, կամ է հինգերորդ նշԳուշմա, 'ի մէջ բարբառ Թարգմանիչ նոյնանք. զոր ասաց" տառադարձեալ կոչեցին Իգուէմ։ Մեր Խորենացին յիւրում հասարակախօսութեան աշխարհագրութեան փոխանակ կշռոյ անուան՝ 'ի կէր առնու զբուն Թարգմանութեան Դրախտանք։ Բայց վարդան պատմագիր մի մեկնէ զյունական անուանս Կշիռ, զանուամբ Բաժին 'ի վերայ արկանէ ասելով։ „Եւ որք ասեն իմաստունք ժամ Կշիռ է աշխարհս, այսինքն Բաժին"։

Զայս անուն յարմար դատելով և յոհաննէս Երզնկացւոյն՝ զնոյն 'ի կէր առնու 'ի բանն որ յաղագս երկնից՝ ասելով։ „Բոլոր երկինքն է երկոտասան Բաժին ... իմաստունք զերկիր երկոտասան Բաժին են տրամադրեալ։ Եւ այլուր 'ի նմին բանի։ „Եւ արարեն իմաստունք զաշխարհս ժամ Բաժին. և մէջ աշխարհի զինքեանն հնդիկք ասեն. և հնդուստանն որ է 'ի կողմն հարաւոյ. եւթն Բաժին աշխարհիս այն է՝ որ անմարդաբնակ է և անշէն, զի սաստիկ ջերմ է. և հրաշխառն օդ. վասն այրեցեալ գօտի ասեն։ Եւ 'ի հնդուստանայ դէպ 'ի հիւսիս Է Բաժին. այս միջոցս է բարեխառն և առողջ"։

Ըստ այսմ և մատենագրին կիր Թարգմանչէին՝ որ գրեաց զկլիմայից, զնոյն զայս Բաժին անուն յարմար դատելով, զնոյն 'ի կէր առնու դնելով խորագիր. „Յաղագս Է Բաժնի աշխարհիս"։ Այլա առաւել զնկարագրիչներոյ մի առ մի ձեռն մերս հայկական անուանիս Բաժին անուանելով։

Արդ՝ Թէպէտ յընտրութեն բառից՝ մեր պարտ է առաւել հնագոյն հեղինակաց զհետ երթալ. բայց քանզի 'ի քաղաքական դաւանագրութեն այսր մերում աշխարհագրութեն՝ հարկ է մեզ զանուանս Դրախտանք 'ի գործ ածել, յայսմ մասնենի՝ զի մի շփոթութեն առացուք ընթերցողաց, թողեալ զանունս Դրախտանք 'ի վերայ արկեալ 'ի Խորենացւոյն, զերկրորդ անուանս Բաժին 'ի գործ ածեմք փոխանակ

Կշ

կղզեացն . մերձ երասանցի համեմատեալ զգործածութե-
նացն նորանց անուանն՝ է զյունականութիւն :

Բաժանեալք են գօտիք կամ միջօրէք երկրի պարզա-
կեալք ի մէջ երկուց բեւեռաց զուգահեռակա-
նաց. ՚ի հասարակածէն ՚ի բեւեռս կոյս ըստ երկայ-
նութեան տիւք կէս ժամու մի է զմի առաւելուն :

Աշխարհագրեալք եղեն 24 բաժինս, ՚ի հասարա-
կածէն մինչև ցբեւեռային շրջանակս . մի զի նոյն-
չափ կիսաժամու զանազան երկայնութիւն է առա-
ւելեան առաւելոյն եղելոց ի մէջ երկուց առաջնոյ
շրջանակաց : Քանզի ընդ հասարակածաւ մեծա
երկարաւորութ ժամ է տուն . իսկ ի բեւեռային շրջա-
նակսն երկայնագոյն տիւն է 24 ժամ . ուստի յայնմ
միջոցի ուր ութեք կէս ժամու առաւելու երկայ-
նութիւն առանձնեան, զնի մի բաժին .

Բայց գիտել արժան է, զի բաժինք չեն հաւա-
սար միմեանց ի լայնութիւն . այլ որչափ առաւել
հեռի են ՚ի հասարակածէն՝ և մերձ ՚ի բեւեռս,
այնչափ նեղ են միջոցք նց : Եւ պատճառն է, զի
որչափ առաւել հեռանայ տեղի ինչ ՚ի հասարա-
կածէն, այնչափ առաւել արագապէս ուղղա-
հայեաց լինի առ կեդրոն հասարակածին . որով և
եղերօք այնր տեղւոյ առաւել խոտորեալ յուղղա-
հայեցութենէ հասարակածին . փութով մեծագոյն
աւելորդ համանէ ՚ի զուգահեռականաց հասարակա-
ծին՝ որք են յերկրում կողմանն . նմին իրի և տակա-
ւագոյն անհրապուրութեամբ լինի վաղվաղակի տար-
բերութիւն կիսաժամուն, ուստի և բաժինն : Վն
այնուհետև չէր հնար յառաջանալ հաւասար տարբե-
րութեան ժամուց ՚ի մէջ բաժնից եթէ իւրաքանչիւր
բաժնի առաւել լինէր հաւասար լայնութիւն, և նոյն-
չափ-թիւ աստիճանաց : Վն զի յայնժամ երկայնա-
գոյն տիւն բաժնին՝ որ հեռի է ՚ի հասարակածէն .
առաւել է զկէս ժամ զանցանէր զերկայնագոյն
տունջեան իւրոյ նախընթաց բաժնին : Զայս ամ
մարթ է տեսանել յառաջիկայ ախտակից . որոյ
առաջին գաւառական ցուցանէ զթիւ բաժնից . երկ-
րորդն զաստիճան լայնութեան . իսկ երրորդն զեր-
կարութիւն տունջեան, կամ զթիւ ժամուց երկայնա-
գոյն տունջեան իւրաքանչիւր բաժնի :

Բաժին.	Լայնութիւն.		Երկայնագոյն Տիւ.	
	Աստիճ.	Մանր.	Ժամ.	Վայրկ.
0.	0.	0.	12.	0.
Ա.	8.	25.	12.	30.
Բ.	16.	25.	13.	0.
Գ.	23.	50.	13.	30.
Դ.	30.	20.	14.	0.
Ե.	36.	28.	14.	30.
Զ.	41.	22.	15.	0.
Է.	45.	29.	15.	30.
Ը.	49.	1.	16.	0.
Թ.	51.	58.	16.	30.
Ժ.	54.	27.	17.	0.
ԺԱ.	56.	37.	17.	30.
ԺԲ.	58.	29.	18.	0.
ԺԳ.	59.	58.	18.	30.
ԺԴ.	61.	18.	19.	0.
ԺԵ.	62.	25.	19.	30.
ԺԶ.	63.	22.	20.	0.
ԺԷ.	64.	6.	20.	30.
ԺԸ.	64.	49.	21.	0.
ԺԹ.	65.	21.	21.	30.
Ի.	65.	47.	22.	0.
ԻԱ.	66.	6.	22.	30.
ԻԲ.	66.	20.	23.	0.
ԻԳ.	66.	28.	23.	30.
ԻԴ.	66.	31.	24.	0.

Այս քսան և չորք բաժինքս համօրէն պարփակեն 'ի մէջ հասարակածին և բևեռային շրջանակի լա-բածու 66 աստիճանաց և կիսոյ։ Իսկ 'ի բևեռային շրջանակաց մինչև ցբևեռն՝ թէպէտ ետրապակս բաժինս ոչ գտնեն․ սակայն զայն միջոց բաժանեն 'ի վեց գօտիս․ որք ոչ եթէ կէս ժամու միջոցն

պէ

զմի աստիճանն, այլ ամսովք․ վասն զի առ 90 աստիճանաւ մի տիւն է վեց ամիս․ և ամն ողջոյն մի տիւ և մի գիշեր․ զոր մարթ է տեսանել 'ի յառաջիկայ աղիւսակդ։

Բաժինք․	Լայնութիւն․		Երկայնագոյն Տիւ․
	Աստ․	Մանր․	Ամիս։
Ա․	67․	30․	1․
Բ․	69․	30․	2․
Գ․	73․	20․	3․
Դ․	78․	20․	4․
Ե․	84․	0․	5․
Զ․	90․	0․	6․

Տես զի այսր և 'ի քառակուսի պատկերի հաստատեալ աշխարհացուցին։ Նախնիք ոչ դնէին այսչափ բաժինս, այլ եօթն ևեթ․ զառաջինն դնէին 'ի Մերովէ քաղաք առ Նեղոսիւ․ զերկրորդն 'ի Սիենէ, այժմ Ասուան քաղաք Եգիպտոսի․ զերրորդն յԱղեքսանդրիա Եգիպտոսի․ զչորրորդն 'ի Հռոդոս կղզին․ զհինգերորդն 'ի Հռովմ․ զվեցերորդն 'ի սեաւ ծովն․ իսկ զեօթներորդն 'ի դուռն Բորիսթենեայ․ զորս ըստ կարգի առաջիկայ աղիւսակդ ցուցանէ։

Բաժինք․	Տեղի․	Լայնութիւն․		Երկայնութիւն աւուրց․	
		Աստ․	Մանր․	Ժամ․	Վայրկ․
Ա․	Մերովէ․	16․	43․	13․	0․
Բ․	Սիենէ․	23․	30․	13․	30․
Գ․	Աղեքսանդրիա․	30․	47․	14․	0․
Դ․	Հռոդոս․	36․	30․	14․	30․
Ե․	Հռովմ․	41․	22․	15․	0․
Զ․	Սեաւ ծով․	44․	29․	15․	30․
Է․	Դուռն Բորիս"․	49․	1․	16․	0․

Ստրաբոն յաւելու այլեւս երկուս բաժինս․ զութերորդն, և զիններորդն․ և ասէ թէ ութերորդն անցանէր ընդ միջասիս ծովակին․ բայց վասն յետներորդ բաժնին ինչ ոչ գրէ, թէ ուր անցանէր։ Զայս դասաւորութիւն եօթնեակ բաժնից յիշատակէ և Մովսէս Խորենացին, որպէս է տեսանել 'ի [illegible]

սու-

տուն նորին աշխարհագրութեան. ուր ասէ. „ Քանզի
„ որ յեօթն Նահանգին (այն է՝ բաժին,) միոյն գաւ-
„ առուցեալ է ըստ հարաւակողմն միջօրէական գծին
„ (որ արեւադարձի խեցգետնի) եւ այլ մեծն ՚ի
„ նմանէ յարեւմտեան կոյս։ Այսմիկ երկու ըստ սեւ-
„ նիս, ժամս առնելով ժը եւ կէս. իսկ երկրորդ ըստ
„ աղէքսանդրիա, կլիմաժամու յառաւել միաւուցեալ
„ ոչ անհնարին. չորս ըստ պտողոս (որ ըստ հա-
„ գոս). եւ է միջին նահանգացն, կարեւոր ՚ի հա-
„ մաչափութ ըստ գնդականն յայտնուենցն. հինգ ըստ
„ հռոմ. վեց ըստ կոստանդնուպօլիս. եօթն ըստ
„ սկիւթիա. եւ նմ աշխարհքը, որ ըստ դոցին դա-
„ սուցն „։

Յայս բան խորհնոյցուցին՝ գիրք բաժնեաց Թուոյն ըստ երաց ինչ տարբերել ՚ի նախընթաց աղխուակէ, բայց ըստ երին նոյն են ըստ այնմ. անուանքն եւ եթ ուղեցն գանագանի։ Զի սկսանին աստեղով, ոչ խմբնոյ զմեր սփռեալ աշխարհ, այլ զաթենն յառաջ. որ յանծայրածից մեր դրի Սահեն. ոչ ունին ցա-ցանել ՚ի ծառ աւիրնեալ։ Նորինա եւ պատողոն՝ է հարգաս կղզին. եւ փոխանակ սեաւ ծովուն՝ դնէ զկոստանդնուպօլիս. ըստ որում է դինուպօլ աւելի սեաւ ծովու։ Իսկ անուանեալս սկիւթիա՝ խմբնոյ զմիայն թաթարստան, ուր բարբառեցինն այն է՝ նիկեբեր գետն չեհասանեալ՝ մինչեւ ՚ի սեաւ ծովն։

Արդ նախինեաց միայն եօթն բաժինս դնէին. որ թուէին զկլիմաժամս սկսեալ յարեւատանաւորաց ժամէ՝ մինչեւ զմերշտատանն, որ 349 աստիճանն եւ եթ հիւսիսայլին լայնութ. զի անդր մինչեւ ՚ի բեւեռն չունէին ինչ ծանօթութ. եւ անհնարին անդրենակ համար բերէին զայն մասն հաղորդնոյս մերոյ։ Այլ զկնի ժամանակաց ծանուցան եթէ անդր եւ ըստ 469 աստիճանն զատանի բնակութ մարդկան. յայն սակս յաւելին զթիւ բաժնեաց մինչեւ ՚ի քսան եւ չորս. զորմէ ասեն թէ նախ պտղոմէոս արար, եւ այլք զկնի նր։

Բայց եթէ ով կամեսցի գիտել, թէ այս ինչ տեղի ըստ որում բաժնի էցէ, կենդանի կարէ գտանել զայն։ Մի՝ ՚ի ձեռն աստիճանաց լայնութեն. քանզի գիտելով զաստիճան լայնութ նր, գտանէ ՚ի նախընթաց աղխաանկն զեթիւ բաժնի նր նշել ՚ի դա-

ւաղայ

ւաքանի անդ բաժնից : Զոր օրինակ · առնես Կոստանդնուպօլիս է ընդ 41 աստիճանաւ լայնութեան, և հանդէպ այսմ աստիճանի 'ի գաւազանի անդ բաժնից եդեալ կայ Զ · որ ցուցանէ թէ Կոստանդնուպօլիս է ընդ վեցերորդ բաժնիւ : Այլ գիտելի է զի յաղիւսակի անդ թիւք աստիճանաց ոչ գնին կարգաւ միառմի, այլ ընդոստ, որպէս 8 · 16 · 23 · ևն · արդ՝ այն միջոց՝ որ ընդ մէջ երկուց թուոց, ցուցանէ զտարածութիւն բաժնից · զի 'ի 8 աստիճանէ և 25 մանրամասանց մինչև 'ի 16 աստիճան, և 'ի 25 մանրամասնէ մի բաժին · և ամ տեղիք՝ որք են յայնմ միջոցի, զնոյն բաժին ունին, թէպէտ և փոփոխութիւն լինի վայրկենիւք ինչ ըստ չափոյ մերձենալոյ տեղեացն 'ի յաջորդ ընթացակայութեան բաժինն :

Երկրորդ՝ մարթ է գտանել զբաժինն 'ի ձեռն քանակութեան ժամուց երկայնագոյն աւուր յատկացեալ տեղւոյն : Քանզի հանել զթիւն 12 'ի թուոյ ժամուց · և կրկնապատկեալ զմնացեալն, գտանի բաժինն : Զոր օրինակ, երկայնագոյն օր Կոստանդնուպօլսոյ է 15 ժամ · արդ հանել 'ի հնգետասանէն զթիւն 12 · մնայ 3 · և կրկնել զմնացեալս զայս թիւ, լինի 6 · որ է թիւ բաժնին Կոստանդնուպօլսոյ : Եւ ընդ հակառակն եթէ 'ի ձեռին ունիցիմք զթիւ բաժնին և խնդրիցեմք զորքանութիւն ժամուցն, կիսել պարտ է զթիւ բաժնին, և զկէսն զայն յաւելուլ 'ի 12 · և գումարն է չափ ժամուց : Զոր օրինակ գիտելով զթիւ բաժնին Կոստանդնուպօլսոյ 6, զկէսն 3 յաւելլուլ 'ի 12, գտանեմք 15 լինել զժամս երկայնագոյն տունջեան նր :

Բայց գիտել պարտ է, զի երկայնութիւն տունջեան չափի 'ի հիւսիսային ծագմանէ արեգական, մինչև 'ի հիւսիսային մուտ նր · վնյ որչափոյս առաւօտեան՝ և նուազ լոյս երեկոյեան՝ որ զկնի մտից արեգական, ոչ համարին մասունք տունջեան : Այլ առ հեշտաւ գտանելոյ ըստ կարի զչափ երկայնագոյն տունջեան տեղեաց ընդ իւրաքանչիւր աստիճանօք եղելոց, դիցուք զառաջիկայ աղիւսակդ · յորում սկիզբն և մէջ և վերջ իւրաքանչիւր բաժնի եդեալ կան, սկսեալ 'ի հասարակածէն մինչև 'ի բևեռն հիւսիսային · և տարբերութիւն ժամուց և վայրկենից համեմատ նր · իսկ զայլոց միջանկեալ զուգահեռականացն կամ զաստիճանացն ժամս դիւրին է մերձաւորապէս խնդրել յեղելոցդ : Եւ գիտե-

լի

որ է զի վերջ իւրաքանչիւր բաժնի նշանակեալ յաղիւսակի տառ՝ է և սկիզբն յաջորդին. նմին կրի զանց առնելոց գնել միայն սկիզբն ։

Ընդարձակագոյն աղիւսակ բաժնից.

Բաժինք	Զուգահեռականք	Երկայնագոյն օրեր	Լայնութիւն բեւեռոյ
Ա	Սկիզբն Մէջ Վերջ	12. 0 12. 15 12. 30	0 0 4. 15 8. 25
Բ	Մէջ Վերջ	12. 45 13. 0	12. 3 16. 25
Գ	Մ Վ	13. 15 13. 30	20. 15 23. 50
Դ	Մ Վ	13. 45 14. 0	27. 40 30. 20
Ե	Մ Վ	14. 15 14. 30	33. 40 36. 28
Զ	Մ Վ	14. 45 15. 0	39. 2 41. 22
Է	Մ Վ	15. 15 15. 30	43. 32 45. 29
Ը	Մ Վ	15. 45 16. 0	47. 20 49. 1
Թ	Մ Վ	16. 15 16. 30	50. 33 51. 58
Ժ	Մ Վ	16. 45 17. 0	53. 17 54. 27
ԺԱ	Մ Վ	17. 15 17. 30	55. 34 56. 37
ԺԲ	Մ Վ	17. 45 18. 0	57. 32 58. 29
ԺԳ	Մ Վ	18. 15 18. 30	59. 14 59. 58
ԺԴ	Մ Վ	18. 45 19. 0	66. 40 61. 18

Բաժինք	Զուգահեռականք	Երկայնագոյն ժամք	Լայնութիւն բեւեռոյ
ԺԵ	Մ Վ	19. 15 19. 30	61. 55 62. 25
ԺԶ	Մ Վ	19. 45 20. 0	62. 54 63. 22
ԺԷ	Մ Վ	20. 15 20. 30	63. 40 64. 6
ԺԸ	Մ Վ	20. 45 21. 0	64. 30 64. 49
ԺԹ	Մ Վ	21. 15 21. 30	65. 6 65. 21
Ի	Մ Վ	21. 45 22. 0	65. 35 65. 47
ԻԱ	Մ Վ	22. 15 22. 30	65. 57 66. 6
ԻԲ	Մ Վ	22. 45 23. 0	66. 14 66. 20
ԻԳ	Մ Վ	23. 15 23. 30	66. 25 66. 28
ԻԴ	Մ Վ	23. 45 24. 0	66. 30 66. 31
ԻԵ		Մէ ամս	67. 30
ԻԶ		2	69. 30
ԻԷ		3	73. 20
ԻԸ		4	78. 20
ԻԹ		5	84. 0
Լ		6	90. 0

Այսչափ ինչ յաղագս բաժնից և այլոց չորրո րդական երկրի՝ շատ լիցի. արդ ասասցուք ինչ ինչ և յաղագս պէսպէս գծից գնտոյ երկրի, որք մեծապէս նպաստեն 'ի մեկնել զայլևայլ երևոյթս արեգականն ըստ ծագման, և ըստ մտից նր. ըստ երկարութեան աւուրց, և ըստ յաւելու և նուազ ջերմութեան:

Պէսպէս դիրք գնտոյ Երկրի:

Երրեակ դիրս գնտոյ երկրի զանազանեն աշխարհագիրք նկատմամբ բնակչաց նր, զորս և կոչեն Գունդ ուղիղ. Գունդ խոտորնակ. և Գունդ շրջան կամ զուգահեռական:

Գունդն ուղիղ է այնոցիկ, որք զհասարակածն ունին 'ի գագաթան. իսկ զբևեռս յեզերս: Եւ այս դիրք է նց՝ որք ընդ հասարակածաւ բնակեն. որոց ամ աստեղք ծագեն. և ընդ ժամս երկոտասան մնան 'ի վր հորիզոնից նոցա. և նոյնչափ ժամս 'ի ներքոյ. և ընդ ամն ողջոյն տիւ և գիշեր հաւասար են նց. վն զի երկբևեռք նց հատանեն զհասարակածն, և զերկուս արևադարձս, ոմ և զայլ ամ զուգահեռական շրջանակս 'ի հաւասար կէսս, և յայն սակս թէ 'ի հասարակածն իցէ արեգակն, և թէ յարևադարձս, հարկ է նոյնչափ մնալ 'ի վր հորիզոնից նց, որչափ 'ի ներքոյ:

Եւ մա յամին երկիցս անցանէ արեգակն ընդ կէտ գագաթան նց. մի՝ 'ի մարտի 21. և երկրորդ՝ 'ի սեպտեմբերի 22 կամ 23. ուստի և երկու ամառն ունին, և երկու գարուն. իսկ ձմեռն յատկապէս ոչ երբեք: Յայն երկու աւուրս մարմինք նց զմիջաւուրբ ընաւ ստուեր ոչ ձգեն, սակս ուղիղ 'ի գագաթանց անկանելոյ զարեգականն: Զայս ևս ունին մասնաւոր յիշատակաց արժանի, զի 'ի մարտի քսաներն մինչև ցքսան և մի սեպտեմբերին արեգակն է 'ի հիւսիսակողմն. իսկ ստուեր մարմնոց 'ի հարաւ. և յայլ վեց ամիսս՝ ընդ հակառակն՝ արեգակն է 'ի հարաւ, իսկ ստուերն ընդ հիւսիս:

Գունդն խոտորնակ է նկատմամբ այնց տեղեաց և բնակչաց, որք ոչ ընդ բևեռօք են՝ և ոչ ընդ հասարակածաւ. այլ ընդ մէջ բևեռաց և հասարակածին նց է 'ի բարեխառն գօտիս. ուր հասարակածն՝ ոմ և բոլոր կենդանակամարն խոտորնակի ձևէ զերկրաւ. և ամ զուգահեռական շրջանակք, ան

հաւ

հաւասարագծէ ժամանակին 'ի նմանէ: Ցայն ամիս մասն ինչ երկնից և աստեղաց հաստատութեան ոչ երբեք երևի նոցա · և մասն ինչ միշտ երևելի է · և Զ ամիս ողջոյն տիւ և գիշեր միշտ անհաւասար են նոցա, բայց յերկուց գիշերահաւասարից · յորոց մինն է 'ի 21 մարտի · իսկ միւսն 'ի 22 կամ 'ի 23 սեպտեմբերի:

'Ի հիւսիսային կողմանս եւրոպիոյ ասիոյ և ամերիկոյ տիւքն երկայնագոյն են քան զգիշերս, յորժամ արեգակն գտանի յառաջին վեց կենդանակերպս · այս 'ի խոյն, 'ի ցուլն, յերկուորն, 'ի խեցգետինն, յառիւծն, և 'ի կոյսն · վասն զի ընդ այն ժամանակս խոտորումն արեգական է 'ի հիւսիսակողմն:

Եւ Է հակառակն՝ 'ի հարաւային կողմանս ասիոյ ափրիկոյ, և ամերիկոյ՝ տիւքն երկայնագոյն են, յորժամ արեգակն գտանի յայլ վեց կենդանակերպս · այս 'ի կշիռն, 'ի կարիճն, յաղեղնաւորն, յայծեղջիւրն, 'ի ջրհոսն, և 'ի ձուկն · զի յայնժամ Է հարաւայնոց խոտորումն արեգական է 'ի հարաւակողմն:

Իսկ Փոքունքն շրջան, կամ զուգահեռականն է նկատմամբ այնց տեղեաց որք անմիջապէս Է բևեռաց անկանելին · վասն մին 'ի բևեռաց է 'ի զագաթան նոցա, իսկ միւսն Է ստորև · իսկ հասարակածն՝ և ամ զուգահեռականն շրջանակք առ երկրաւ նոցա: Եւ յայն տեղս այս դիրք կոչի գունտ զուգահեռական: Այս մի և նոյն կէս երկնից և աստեղաց միշտ է 'ի վերոյ քան զհորիզոնս, ուստի և միշտ երևելի · իսկ միւս կէսն՝ միշտ 'ի ներքոյ · վասն աստեղքն՝ որք են 'ի ներքոյ հասարակածին, ոչ երբեք երևին նոցա: Եւ ամիս ողջոյն է մի միայն տիւ, և մի միայն գիշեր · իւրաքանչիւրն ընդ ամիս վեց յերկարաձգեալ:

Քանզի ցորչափ արեգակն գտանի 'ի հիւսիսային կենդանակերպս, հիւսիսային բևեռն միշտ է լուսաւոր առանց ինչ ընդհատութեան · զի ամ զուգահեռական շրջանակք՝ ընդ որս ընթանայ արեգակն, 'ի հասարակածէն մինչև յարևադարձն խեցգետնի, և յարևադարձէ անտի մինչև 'ի հասարակածն՝ 'ի վերոյ են քան զհորիզոնս նոր, և զուգահեռականք նոր: Այլ զկնի աշնանային գիշերահաւասարի, յորժամ արեգակն մտանէ 'ի կենդանա-

Կատարեալ հարաւայինս, ոչ եւս երեւի բնակչայն. Եւ զեղոյց ընդ հիւսիսային բեւեռաւ (ուր թէ հաւանա-կան կարծեաց աշխարհագրաց չիք բնակութիւն մարդ-կան)։ զի զուգահեռական շրջանակք՝ զոր ըն-թանայ արեգակն, բոլորովին են 'ի սառոյցն կե-ռադարձն անդր, վեց եւ անձրեւոյթ, որով եւ իբր ամիսս վեց մինչ գիշեր է անդ։ Բայց խոր գիշերն է միայն երկու ամիս եւ կէս, կամ երկու. զի իբրեւ ամիսս երկուս, կամ աւուրս յիսուն եւ երկու զկնի մինչ արեւու ընդ եզերանելք, եւ նոյնչափ աւուրս յառաջ քան զերեւել մարմնոյ արեգական 'ի վերոյ քան զեզերաս, է անդ նուազ իմն լոյս. նման մերում լուսոյ վաղորդայնոյ, եւ երեկորեայ։ Եւ յերկուս ամիսս խոր գիշերոյն իբրեւ 30 աւուրբք չափ լուսա-ւորեալ է նց գիշերն, եւ ոչ անձեռնեալ աղջամղջին։ Զի աւուրս իբրեւ 15 'ի վերին մասին ծրի խա-ւարման կայ լուսնին յետ շրջանս իւր, եւ այնպէս երեւելի է նց։

Զայս եւս գիտել արժան է. զի գտանի փոքր իմն տարբերութիւն 'ի մէջ հիւսիսային բեւեռին եւ հարաւայնոյն՝ նկատմամբ ընթացից արեգական. քան զի առ հիւսիսային բեւեռաւ ութ աւուրբք առաւելու քան զառ հարաւայնովն. քանզի 'ի պատճառս արտակեդրոնի պարունակին երկրի՝ արեգակն աւուրս ութ առաւել մնայ 'ի կենդա-նատեսակս հիւսիսականացն, քան հարաւայնոյն։

Յաղագս բաժանմանց բնակչաց երկրի՝ ըստ դրից ստուերաց մարմնոց նոցա, եւ ըստ բոլորակին ձեւոյ երկրի։

Պէտականք բաժնեալ, զօտեաց, եւ դրից զնոյ երկրի 'ի մէջ բերեն եւ զայլ եւս աշխարհագրական բաժանումն բնակչաց երկրի. կալեալ 'ի դրից ստուերաց մարմնոց նց, ('ի լինել արեգական 'ի միջօրէին նց)։ եւ 'ի բոլորականն ձեւոյ երկրի։

Առ բնակիչք երկրի Ը. սկզբնակիցութեն ստուե-րաց մարմնոց նց, սկսանեն անուանք անուանին. Ա Անստուերք. Երկստուերք. Միաստուերք. եւ Շրջաստուերք։

Անստուերք։ Են նք որք բնակեն ընդ այրեցած զօտեաւ, յարեւադարձէ յարեւադարձ. զաւուրս

իւ

Ծաւալիւք հարաւայինս ; ոչ եւս երկնի բնակչացն. և գեղոց ընդ հիւսիսային բեւեռաւ (ուր ըստ հաւատական կարծեաց աշխարհագրաց չիք բնակութ մարդկան)· զի զուգահեռական շրջանակք՝ ի որս ընթանայ արեգակն, բոլորովին են 'ի սորին հետագօտեա անդր, վասն և անհերեւոյթ., որով և իւր ամիսս վեց միշտ գիշեր է անդ: Բայց խոր գիշերն է միայն երկու ամիս և կէս, կամ երիս · զի իբրև ամիսս երկուս, կամ աւուրս յիսուն և երկու զկնի մտից արեւու ընդ եղերաւնիւք, և նոյնչափ աւուրս յառաջ քան զերեւիլ մարմնոյ արեգական 'ի վերայ քան զեղերաս, է անդ նսեմ լոյս · նման մթութեան լուսոյ վաղորդայնոյ, և երեկոյնոյ: Եւ յերկուս ամիսս խոր գիշերոյն իբրև 30 աւուրք չափ լուսնակոյ է նց գիշերն, և ոչ ամենեւին աղջամղջին: Զի աւուրս իբրև 15 'ի վերին մասին ծրի խաւարման կայ լուսինն յամ շրջանս իւր, և այնպէս երեւելի է նց:

Զայս եւս գիտել արժան է· զի գտանին փոքր ինչ տարբերութիւնք 'ի մէջ հիւսիսային բեւեռին և հարաւայնոյն՝ նկատմամբ ընթացից արեգական· քան զի առ հիւսիսային բեւեռաւ ութ աւուրբք առաւելու քան զառ հարաւայնովն · քանզի 'ի պատճառս արտակեդրոնի պարունակին երկրի՝ արեգակն աւուրս ութ առաւել մնայ 'ի կենդանատիպս հիւսիսակողմանն, քան հարաւայնոյն:


Վասն այլ բաժանմանց բնակչաց երկրի՝ ըստ դրից ստուերաց մարմնոց նոցա, և ըստ բոլորակին ձևոյ երկրի:

Պէսպիսութիւնք բաժնից, գօտեաց, և դրից գնդոյ երկրի 'ի մէջ բերեն և զայլ ինչ աշխարհագրական բաժանումն բնակչաց երկրի· կախեալ 'ի դրից ստուերաց մարմնոց նց, ('ի լինել արեգական 'ի միջօրէին նց)· և 'ի բոլորակին ձևոյ երկրի·

Արդ բնակիչք երկրի ը. պէսպիսութի ստուերաց մարմնոց նց, պէսպէս անուամբք անուանին· զի Անստուերք· Երկստուերք· Միստուերք· և Շրջաստուերք:

Անստուերք: Են նք որք բնակեն ընդ այրեցած գօտեաւ, յարեւադարձէն յարեւադարձ· զաւուրս

ինչ


գօտի
գօտի հարաւային
Ցրտային
գօտի:

ինչ 'ի տարբերոց ոչ ըստ ձգեն ստուերս։ Բնակիչք 'ի միջոցի այրեցած գօտւոյն՝ երկիցս անգամ 'ի տարբերոց ոչ ձգեն ստուերս. իսկ բնակիչքն ընդ արեւադարձիւք (որք են երկու ծայրք այրեցած գօտւոյն), միանգամ միայն 'ի տարբերոց ոչ ձգեն ստուերս. այս և անստուերքն են երկին։ Երկստուերք անստուերք. և Միաստուերք անստուերք։

Երկստուերք։ Են նք՝ որոց միջօրէական ստուերք մարմնոց՝ յերկուս կողմանս ևս փոփոխին. զամենայն ինչ է հարաւոյ ձգեն յորժամ արեգակն է 'ի հիւսիսակողմն. զամենայն ինչ ընդ հիւսիս ձգեն, յորժամ արեգակն է 'ի հարաւակողմն. այսպիսի են բնակիչք ի այրեցած գօտւոյ։ Սոքա կոչին նաև Անստուերք, Երկստուերք որք տարացայք 'ի վերոյ. մինչ զի մարմինք նց երկիցս յամին ոչ ձգեն ստուերս. 'ի լինել արեգական ուղիղ գագաթնահայեաց 'ի վերայ գլխոց նց երկիցս ամեն զոր գրեցաք (Թղթ 76.) զայրեցած գօտւոյ։

Միաստուերք։ Են նք որոց մարմինք 'ի լինել արեգական 'ի միջօրէին նց՝ 'ի մի կողմն միայն ձգեն ստուերս. այսպիսի են բնակիչք ի երկին արեւադարձիւք։ Բնակիչքն ի արեւադարձին խեցգետնի՝ ընդ հիւսիսակողմն միայն ձգեն. իսկ բնակիչքն ի արեւադարձին այծեղջերի՝ ի հարաւակողմն միայն։ Սոքա կոչին նաև Անստուերք միաստուերք. մինչ զի մարմինք նց մի օր յամին ոչ ձգեն ստուերս 'ի լինել միանգամ արեգական ուղիղ գագաթնահայեաց 'ի վերայ գլխոց նց։ Բնակիչք բարեխառն գօտեաց ևս կոչին միաստուերք. ի որոց միջօրէական ստուերք նց 'ի մի կողմն միայն ձգին. կամ 'ի հիւսիս, և կամ 'ի հարաւ։

Շրջաստուերք։ Են նք՝ որոց ստուերք շրջանանակ զմարմինովք նց ընդ ամ կողմանս երկարին 'ի քսանեւչորս ժամս։ Այսպիսի են բնակիչք ցրտային գօտեաց՝ որոց աւուրս կամ ամիս ինչ ոչ մտանէ արեգակն. այլ միշտ պտտելով առ եզերականք նց, այս և ստուերաց մարմնոց նց շրջան առնուլ զնոքօք։

Իսկ ի բոլորական ձևոյ երկրի՝ բնակիչք նց ստեպ այլևայլ դրից՝ զոր ունին 'ի նմ համեմատութը միմեանց՝ կոչին Շրջաբնակք. Հակաբնակք և Հակոտնեայք։

Շրջաբնակք։ Են նք՝ որք բնակեն 'ի մի և 'ի նոյն

զուգահեռականաց շրջանակի լայնութեան. և 'ի նոյն կողմն հասարակածին ընդ հիւսիս կամ ը հարաւ. բայց 'ի հակակայ կէտս. որ ընդ հակակայ միջօրէիւք: Այս յորժամ բնակչաց միոյն, որ եղելոց է 180 աստիճանաւ երկայնութեան ընդ արևելս՝ է օր հասարակ, միւսոյն որ է 1 աստիճանաւ՝ է կէս գիշեր: Այլ են ընդ նոյն գօտեաւ. և ունին զնոյն բարձրն, զնոյն եղանակս, և զհաւասար երկարութիւն աւուրց. զի որ ունին զնոյն բևեռ, որ միապէս բարձրացեալ է առ երկոսեան հաւասարապէս և զնոյն չափ երկնից տեսանեն:

Բայց զժամս աւուրց խաւարեալ բոլորովին ընդ հակառակն թուին. իբր զի յորժամ 'ի միում տեղւոջ են 12 ժամք հասարակ աւուր, 'ի միւսումն են 12 ժամք կէս գիշերոյ: Եթէ 'ի միումն են երեք ժամք զկնի միջօրէի, 'ի միւսն են երեք ժամք առաւօտեան. և յորժամ 'ի միումն ծագէ արեգակն, 'ի միւսն մտանէ:

Բայց գիտել պարտ է, զի յորժամ արեգակն է 'ի կողմն բևեռի ինչ, զոր օրինակ 'ի գարնան և յամարայնի, ծագէ միոյն՝ յառաջ քան զմտանել միւսոյն. ստոյգ և յայնժամ երկոքին են չորանակք միանգամայն տեսանեն զարեգակն, բայց յայլևայլ ժամս. մին ընդ առաւօտն, իսկ միւսն ընդ երեկս: Եւ ընդ հակառակն՝ յաշնան և 'ի ձմեռան երկոքին են 'ի ժամս ինչ ոչ տեսանեն զարեգակն: Այլ 'ի չորրորդին գօտիս ընդ այս տարբերութիւն աւուր և գիշերոյ. զի որ ունիք միայն աւուրն 'ի վերայ երկոտասանց ժամս 24. կամ ևս աւելի:

Հակոտնեայք. կամ Հանդիպոտնեայք: Են նք՝ որք բնակեն ընդ նոյն միջօրէիւ, այլ 'ի հակակայ զուգահեռականս շրջանակս լայնութեան. և միապէս տարաբակացեալս 'ի հասարակածէն, մին 'ի հիւսիսային լայնութեան, իսկ միւսն 'ի հարաւայինն: Այլ ունին զնոյն բարձրութիւն այլևայլ բևեռաց. մին զհիւսիսայինոյն, և միւսն զհարաւայինոյն, և 'ի նոյն վայրկենի ունին զմիջօրէ, և զկէս գիշեր, և զայլ ժամս աւուր:

Բայց ոչ նոյնպէս և զեղանակս տարւոյն. զի յորժամ միոյն է ամառն, միւսոյն ձմեռն. և յորժամ 'ի մին է գարուն, 'ի միւսն աշուն. և յորժամ միոյն աւուրք աճեն, միւսոյն նուազին. ստուեր և

տիւ.

տիւ միայն հաւասար է գիշերոյ միւսոյն . և այս-
տեղիք , որք երկուքն են միայն , ոչ երբէք երևին միւ-
սոյն , և 'ի հայելն ընդ աստեղաւքն 'ի միջօրէի .
զերեսս խաւարանց դարձուցանեն զեմ Է զեմ մի-
մեանց . եթէ աստեղաւքն չիցէ հեռի 'ի հասարա-
կածէ քան զլայնութիւն նոցա :

Հակոտնեայք . զորս անուանէս չափակացին Ընթեր-
ցումս ... կոչէ : Են բնակիչք երկրի՝
տրամագծաբար հակադրեալք միմեանց ըստ հե-
ռաւորութեան կիսոյ շրջանակի հողագնտոյս . որ է
180 աստիճան : Քան զի որպ բաղ անցամ ասացաք՝
թէ բոլոր շրջանակն է 360 աստիճան . ուստի և հե-
ռաւորութիւն նոյ այսչափ է , քան զոր առաւել չէ
հնար լինել 'ի վր երկրի . զի կան 'ի ծայրս ու-
ղիղ գծի անցելոյ Ը կեդրոն երկրի . որ է ասել 'ի
ծայրս տրամագծի գնտոյն : Վս որոյ խնդրել թէ ո՞ք
իցեն հակոտնեայք առաւելոյ իրք , ոչ այլ ինչ է . եթէ
թէ խնդրել թէ ո՞ր տեղի 'ի վր երկրի իցէ հե-
ռագոյն 'ի տեղւոջէ մնալ :

Այսք նոք կոչեցան հակոտնեայք , վս զի առք նոյ
զեմ ընդդեմ միմեանց կան 'ի վր երկրի , նաև մի-
ջօրեայք նոցա , և զուգահեռական շրջանակք հակա-
կայք են միմեանց . զի եթէ տեղի ինչ իցէ յայսկոյս հա-
սարակածին լայնութեան , հակոտնէին նր է ուղղակի
'ի հակակայ հիւսիսային լայնութեան : Նմին իրի
յորժամ միոյն է տիւ , միւսոյն է գիշեր . յորժամ
միոյն ծագէ արեգակն , միւսոյն մտանէ , և յոր-
ժամ 'ի միոյն է ամառն , 'ի միւսն է ձմեռն են :
Յաղագս ժամանակս ոչ գոյր ծանօթութիւն զհա-
կոտնէից . այն զի առ բազում յառաջագոյն համարեալ
էին բանք ոմանց իմաստասիրաց , որք կեղծաւորս
բանիւք հաստատէին գոյանիլ հակոտնէից . բայց
այժմ քաջ յայտնի եղև թէ արդարև գոյանին հա-
կոտնեայք , մինչև չիմացեալ եւս բնաւ տեղի երկուա-
նաց . որպէս խօսեսցուք ընդ լինել 'ի նկարագրութեան նո-
րոյ աշխարհին ամերիկոյ 'ի թղթահամարն 36 :

Սակայն բազմաց զժուարին իմն երևի այս . զի
թուի նոցա՝ թէ հակոտնեայք մեր շրջելն , կամ
գլխի 'ի վայր շրջին , և թօթափին յերկրէ : Անձ-
այս է վրիպակ երևակայութեան , քան զի որպէս մեք՝
նոյնպէս և նոք ուղիղ կան 'ի վր երկրի . զի ամ
մարմինք՝ որք են 'ի վր կողմնթեաց երկրի , բնա-
ւորական ծանրութբ իւրեանց ձգին 'ի կեդրոն .

կամ 'ի միջնակէտ երկրի։ Յայն սակս յոր կողմն և իցեն, միշտ ուղիղ կան 'ի վր երկրի, ունելով 'ի գագաթանց զերկինս, որ յամ կողմանց շուրջ պատանալ պաշարէ զնոսա ըստ դիտողութեան զայս մեր։

Այլ եթէ գոյր ծերպ ընդ մէջ երկրի ծակեալ 'ի ծայր, մինչև երևել երկնից 'ի միւս կողմանէ, եթէ արկանիցեմք քար ընդ այն ծերպ, քարն այն թէպէտ ծանր է, սակայն ոչ անկանէր 'ի բաց ի յանդիմանակաց ծերպն. այլ դիմեալ առնոյր 'ի մէջակէտ անդր երկրի, եւր յեւր համաձայնական մնայցէ։ Այսպէս թէ 'ի բաց իսկ ելանէր անտի սաստկութիւն բնական ծանրութեան առաջնորդելոյ 'ի նմ, ոչ եթէ 'ի սառը անկանելն է այն, այլ յերկ-կրիս կոյս բանի 'ի վեր ելանելն ընդ որ զի յերկնիս 'ի վեր քարանձիւղ ընկնիցի։ Այսպէս և այլ մարմինք՝ եթէ թօթափեսցին յերկրէ, ընկեր նոցա իւրաքն 'ի վեր յերկինս ելանել զօրէն ծխոյ կամ հողոյ, որ և յայտ է. Թէպէտ անուանց երևակայութեն զար-ուսպատ կարէ ընկենել զայս։

Իսկ սոյսպէս բաղմերկնակ դրից բնակչաց երկրի՝ արևգակն երբեմն սաւ ընթանալ յարևմտի, և երբեմն 'ի ձախմէ. ուստի և միջօրէից ձգեալ բառ-աւերս յաջմէ և յաՀեկէ. առ բազումս խելամտութ ընկերայ ադեամ, միջամդ-աւամոյն և դրոց նախնեաց, որք զայսպիսեաց սաստ խօսին, դիւրաւ պարզ է, զի աշխարհագիրք նոյնպէս և մեք զարևելս ունիմք յաջակողմն, և զարևմուտս 'ի ձախմէ. իսկ առ-անդրապարջիւք ընդ հակառակն՝ զարևելս ունին 'ի ձախակողմն, և զարևմուտս յաջակողմն։ Քուրմք հեթանոսաց՝ և ամենեքեան որք զոհս մատուցա-նէին՝ զդէմսն ունէին 'ի ձախակողմն, իսկ զհա-րաւ 'ի յաջակողմն։ Բանաստեղծք և հակառակն՝ զդէմս 'ի յաջակողմն, և զհարաւ 'ի ձախակողմն։

Այսչափ ինչ յաղագս գնտոյ երկրի առ-հասարակ. և մանր աչալէս չափանակաց նորա շատ լիցի։ Աշխարհագիրք համեմատել առ տառաւոր դիտմանօս ծա-նօթութիւն ինչ աշխարհագրոյց պատկերաց, որք պիտանի են յայժ առ ուսումն աշխարհագրութե. և առաջ զնորանակէն յօժինելոյ զայնմանէ աշխար-հացոյցս. յետոյ զարուեստականս գնտոյ, զոր կողմն շափարեալք, յերևեցուցանել նմանն երկրա-կան հողագնտոյս մեր. և զնորին գործածութէ, որ զուարճալի է յոյժ՝ և պիտանի։

ՅՕԴ. Ե.

Աշխարհացոյցք ։

Աշխարհացոյցն՝ կամ պատկերն աշխարհագրական է ձև իւր մակարդակ՝ կամ տափարակ՝ յորում ստորագրեալ կան կողմանք երկրի, ուստի և յանդիման առնէ կամ զբովանդակ մակերևոյթ երկրի, և կամ զմասունս, մեծամեծս՝ և մանունս. ցուցանելով զզանազան նահանգս, և զգլխաւոր տեղիս նոցա ։ Մերձակայսն և զծով և զգետս, զլերինս և զկղզիս, զիւրաքանչիւրն ըստ իւրում բնական դրից. և ՚ի մէջ նշանագրիս սահմանաց իւրոց պարփակեալ՝ ըստ չորից գլխաւոր կողմանց աշխարհի, ՚ի Հիւսիսոյ, հարաւոյ, արևելից, և արևմտից ։ Որք ստորագրեալ նշանակին ՚ի չորեքկուսի աշխարհագրացուցից առաջին կարգաւ ։ Արևելք ՚ի յաջակողմն ։ Արևմուտք հանդէպ նորա ՚ի ձախակողմն ։ Հիւսիս ՚ի վերին կողմն ։ Իսկ Հարաւ ՚ի ստորինն ։ Զորս հարկաւոր է ՚ի միտ առնուլ առ ՚ի դասաւորել զբնական դիրս տեղեաց ։

Յայտնանէ յայս է թէ աշխարհացոյցք կամ Ընդհանուր են, և կամ Մասնաւոր ։ Ընդհանուրն դարձեալ կրկին են. որ Ընդհանրագոյն, և Պարզ ընդհանուր ։ Ընդհանրագոյնն է այն՝ որ զբոլոր մակերևոյթ երկրի յանդիման երևեցուցանէ, որպիսի է գունտ երկրի նկարեալ ՚ի մակարդակի. բայց այնպիսի իւր արուեստիւ ստորագրեալ, զի ՚ի մակարդակի անդ զբաւականին երևեցուցանէ զկորնթարդ ձև երկրակամարանմանոյս մերոյ ։ Զայսպիսի ընդհանրագոյն աշխարհացոյցս կոչեմք Համատարած աշխարհացոյց. մարթ էր կոչել և Համաշխարհացոյց ։

Իսկ պարզ ընդհանուրն է այն՝ որ զմեծագոյն մասն իմն երկրի յանդիման առնէ. զոր օրինակ զԱսիա, կամ զԱփրիկէ, և կամ զԱմերիկա ։ Եւ ևս զմեծամեծ մասունս նոցա. կամ զաշխարհս, զորս զանազան ազգք, և լեզուք, և թագաւորութիւնք բաժանեալ են ։ Զորօրինակ զԱսիա՝ չինումաչինք, Ճաբանք, Թաթարք, Հնդիկք, պարսիկք, հայք, արաբացիք են ։ Զեւրոպիա՝ սպանիացիք, գաղղիացիք, գերմանացիք, իտալացիք, մոսկովք են ։ Զափրիկէ՝ եգիպտացիք, Թունուզք, Ճեզայիրք, Ֆէսք.

հայերէնք, եթովպացիք, և այլ զանազան ազգք:

Նշխարք և մնացուածք աշխարհագրացւոց կրկին են. մի Ընդհանուր մասնաւոր. և Պարզ մասնաւոր: Ընդհանուր մասնաւորք են այնք՝ որք զնահանգս՝ և զմեծամեծ գաւառս երևեցուցանեն. որպիսի են ուղղահայեացն. տարերք. և այլ մեծամեծ գաւառք ու մնացեալ աւերակն. բարձր. Հայք, չորրորդ Հայք, աղձնիք և այլ նահանգք Հայոց. և Գիլան. Փայտակարան. Մազանդարան են նահանգք Պարսից: Իսկ Պարզ մասնաւորք են այնք՝ որք յանդիման առնեն զմասնաւոր գաւառ, կամ միջակ միոյ գիւղաւոր քաղաքի. որ և կոչի անդրագրութիւն, զոր օրինակ գարթմանադրեաց գաւառն՝ ի բարձր Հայս. շրջակայ մեծակ նորշէնս քաղաքի. շրջակայ միջակ կատարի դիենուպոլսոյ, Նոքքէնէք են:

Հասարակաց այսպիսի ընդհանուր և մասնաւոր աշխարհագրացւոց պատմիչաց, կարգեալ 'ի մատկան, Ադրիա անուանի. յանուն Աշխարհագրութեան մայրաքաղաքին, որ ժամանակագրին կարծի ընդհէր մինչ աւելի. և ըստ գիտողաց ամենեցունց՝ նոյ զաւառ ընդ ձեռացն աշխարհ տեսեալ: Եւ յայսմանէ եւ տատարկին նախնեաց. Թէ տեղաւ 'ի մի տեղոյ խորոց բարձրաւ անձն զերկիրս, և Թէ յետոյ փոխեցաւ 'ի լեառն, որ է յաւիտենից 'ի մասնաւորս. և մինչև ցայսօր յանուն նորա կոչի Ադրիա. և անկեալ որ առ նախա՝ ծով Ադրիատիկեան:

Զհամառօտաբար աշխարհագրացն՝ կամ գծագրեալ երկիրն՝ սովորաբար առաւելագոյնքն յերկաւ կերպագծեալ բաժանեալ. որ երևեցուցանելոյ զամենայն մերուս հողոյ. յորում զաւակն Ջենս, և զբազմաշխարհական շրջանակս ք կանանց ընդհանրացուցաւ գծագրեալ 'ի մէջ անձկագոյն և մանրոյ, իսկ յերկրէս բազմաղաց. զորս գծեալ կառուցն առաւել ուժ 'ի գաւառն: Զի մէջ նոր առաւել աշխարհաց երկիր՝ բան գծագրոց. սակս կարևորագոյն ընկալեալ գիտողին. Թէպէտ բաց երկիր ամ գծագրեալ այսպիսի հասարակ են յերկրական գաւառն:

Աշխարհագրական երբեմն բաժանեալ գծագրեալ երկիր 'ի նկարելն. զի կամ յառաջեալ միջօրէական շրջանակէ, կամ 'ի հասարակածէ, և կամ առ և զերբառ: Այլ 'ի մէջ երևցելոյ ընդարձակագոյն է բաժանումն յառաջելոյ միջօրէէ. մի զի երկայնութիւն լեռնագրութեան գծեալ ըստ բնութեան յանդիմանեն

կա-

կացուցանէ զմի յերկնից մասանց գնտոյ երկրի, որ զշինեն, և զնորին. և բաժանմունք ծովու և ցամաքի, և ցամաքին զարձեալ յայլեայլ աշխարհս լաւ են՝ և հեշտաւ՝ և նշանագրին. առանձնապէս 'ի նմ. յայս սակս զայսպիսի կիսագնդեան մարթ է կոչել Համառօտութիւն կամ Բովանդակութիւն աշխարհագրութեան. զի համօրէն մասունք աշխարհին զատանին 'ի նմ համառօտաբար առանձնապէս:

Յայսպիսի աշխարհացոյցս բաց 'ի սահմանագրութենէ ցամաքաց, ծովուց, գետոց, կղզեաց, գաւառաց և երկրի քաղաքաց նոցա, գտանին և զանազան շրջանակք և գիծք ուղիղք և կամարաձևք, որոց ծանօթութիւն կարի հարկաւոր է. այնոցիկ՝ որք կամին 'ի գործ ածել զաշխարհացոյցս:

Արդ՝ առաջին մեծ կամարն՝ որ պարունակէ շուրջանակի զբոլոր գունտն՝ է առաջին միջօրէական շրջանակին, բաժանեալ 'ի չորս մասունս 'ի հասարակածէն 'ի բևեռս՝ յերկուց կողմանց: Մերձաւոր և ստոր նշանն 'ի նմ՝ են աստիճանք. յհասարակածէն մինչև 90 աստիճանք. սակայն և թիւ բոլորեցուն ընդ բովանդակ շրջանակին՝ է 360. մի զի չորեքս 90 նոյն չափ է. որք և բաժանեալ կան 'ի սառսն առսն 'ի ձեռն զուգահեռականն գծից 'ի հասարակածէ մինչև ցբևեռս: Այս զուգահեռ զատանիշեան լայնութիւն տեղեաց. որ զհեռաւորութիւն նոյ 'ի հասարակածէ, կամ զբարձրութիւն բևեռի նոցա՝ յերկուց կողմանց հասարակածին. որ 'ի հիւսիսոյ՝ և 'ի հարաւոյ. ուստի երկ մասին մասն կոչի լայնութիւն հիւսիսային, իսկ առաջինն լայնութիւն հարաւային:

Գիծն կամ շրջանակն խոյանախարհ յարևմտից յարևելս ուղիղ ձգեալ է մէջ երկուց կիսագնդէոց՝ է հասարակածն, կամ գծերբահաւասարն. մի զի 'ի ժամանել անդ արեգակն, առւ և գիշեր հաւասար են ընդ ամ տեղիս: Այս կամար ցուցանէ զերկայնութիւն երկրի. իսկ նշանք տեղեաց և ստոր՝ են աստիճանք երկայնութեան թուով 360. որք նոյնպէս բաժանեալ են 'ի սառն ասան՝ յարևմտից յարևելս, 'ի ձեռն միջօրէականաց կամ երկայնութեան գծից, որք 'ի հարաւոյ ձգին ընդ հիւսիս. և 'ի բևեռսն առաջանն 'ի մի կէտ. առ 'ի ցուցանել զբոլորականն ձև գնտոյ երկրի:

Բայց գիտելի է, զի այս առանձնակ բաժանումն

նումն՝ ոչ մի այլ ինչ պատճառ գտնի, բայց եթէ առ գերագոյն թագաւորս զաստիճանս, առաւել յէ արձակագոյն աշխարհագրացս՝ հինգ առ հինգ բաժանին. իսկ ՚ի միասնաւորս՝ նաև մի առ մի. այլ յայսմիկ բովանդակ աշխարհագրացս չէ մարթ այնպէս առնել, ապա թէ ոչ լինի գիծքն ընդէքն զգալոր աշխարհագրացն :

Բայց ՚ի միջօրէական գծէն՝ և ՚ի հասարակածէն՝ և ՚ի զուգահեռականաց՝ են նկարեալ և այլ չորք շրջանակք. երկուք առ հասարակածաւ աստի և անտի 23 աստիճանօք և կէսիւ հեռի ՚ի նմանէ՝ որք անուանեալ կոչին արևադարձք. և են սահմանք խոտորման արեգական ՚ի հասարակածէն ըստ ամենայն ընթացից իւրոց. զոր կատարէ ընդ խաւարածիր կամարաձև շրջանակն. որ կիսով չափ խոտորի, կամ կարծեաց ՚ի հիւսիսականն. և կէս մասն չափ ՚ի հարաւ հասարակածին. և միջոց երկուց արևադարձից 47 աստիճան. իսկ այլ երկուք ՚ի չորից ասացեալ շրջանակաց ձգին առ բևեռօք, նոյնպէս 23 աստիճանօք և կէսիւ հեռի միաբանելովք բևեռաց. որք և կոչին բևեռային շրջանակք :

Այս չորք շրջանակք սահմանեն զհինգ գօտիս. արևադարձքն պարագրեն զայրեցեալն. և զարձեալ նոյն արևադարձք ընդ բևեռային շրջանակաց պարագրեն զերկու բարեխառն գօտիս զհիւսիսայինն և զհարաւայինն, իսկ բևեռային շրջանակք պարագրեն զցրտային գօտիս :

Այսչափ ինչ համառօտիւ շատ լիցի մի այսց շրջանակաց. զորոց լիով խօսեցաք ՚ի նախընթացս յօդուածին, յորում մարթ է ըստ բաւականին ստանալ զամ հանդամանս նոցա. նաև հայելով ՚ի պատկերս աշխարհագրացն՝ զոր գնեալք յառաջիկայք :

Այսպէս համառօտ աշխարհագրացս ստորագրութեան մեջ են, մի այնորիկ միայն. զլխաւոր մասունք երկրի, և առաւել նշանաւոր քաղաքք, և գետք նոցա նշանակին ՚ի նմ. Այլ առ լաւ են և որպէս և առաւել մանրամասն յանդգնեան կացուցանել զմասունս երկրի, յօրինեն պէսպէս մասնաւոր աշխարհագրացս. որք ամ ՚ի մեծոյ ասացեալ ընդհանրապէս կոչին են. զի Ընդհանուր ծանուցանէ, որք զերկնելի մասունս աշխարհի յանդգնեան առ.

տոմսեն . Ցր դրախտ, զետաղաղխն են . և Պարզ ճանա_ պարհ, որք նաւահանգս, գաւառս, և մանաւանդ զի_ ծանկս ցուցանեն :

Արդ՝ այսպիսի աշխարհացոյցք սովորաբար նկա_ րեն քառանկունի, կամ երկայնաձև. և յաճախա_ գոյն ևս՝ ը. ձևոյ գաւառացն, զոր ցուցանեն . և են պարագրեալ 'ի չորից կողմանց 'ի մէջ չորից գծից . յորս նշանակեալ կան աստիճանք լայնու_ և երկայնութեան : Այլ գիտելի է, զի դասանքն մաս_ նաւոր աշխարհացոյցք, զորօրինակ միոյ գաւառի, յորս միայն աստիճանք լայնութեան նշանակեալ կան, է որով անկանի գաւառն այն :

Աստիճանք լայնութեան նշանակեալ յերկուսին կող_ մանս աշխարհացուցին Ցր յարևմտից և 'ի հիւսիսոյ . կամ յարևելեան, և յարևմտեան կողմանս : Իսկ աս_ տիճանք երկայնութեան նշանակեալ 'ի վերին և 'ի ստո_ րին կողմանս աշխարհացուցին . Ցր 'ի հիւսիսայինն և 'ի հարաւային կողմանս . որք որչափ հեռանան 'ի հասարակածէ, և մանաւանդ կամ 'ի հիւսիս և կամ 'ի հարաւ այնչափ անձկանան : Նոյնպէս և սահմա_ նութիւնս երկրի՝ զոր դրսևէ աշխարհին կամ նա_ հանգին յաշխարհացոյց անդր՝ ամփոփել, կամ ընդ_ արձակել ըստ համեմատական ամփոփման, կամ ըստ լայնման զուգահեռականս շրջանակի՝ ընդ որով անկանին : Այն զի ոմն ասացաք՝ աստիճանքն միշտ մեծագոյն են 'ի հասարակածն, որ աւարտէ զհա_ րաւային մասն աշխարհացուցին . քան զոր են 'ի կողմն՝ որ աւարտէ զհիւսիսային մասն աշխարհա_ ցուցին :

Բայց զայս պարտ է իմանալ զաշխարհացոյց պատկերաց՝ որք յանդիման առնեն զաշխարհ ինչ, որ է 'ի հիւսիսային կիսագունտն անդր : Իսկ յաշ_ խարհացոյցս որք ցուցանեն զաշխարհ ինչ հարա_ ւային կիսագնտոյն, ընդհակառակն է . տեսանել, զի անդ աստիճանք երկայնութեան մեծագոյն են 'ի գծի անդ, որ 'ի վեր կամ 'ի հիւսիսակողմն աւարտէ զաշխարհացոյցն, (որ նոյն է եթէ ասել՝ 'ի հա_ սարակածն,) քան զոր են 'ի ստորին գծին, կամ 'ի հարաւայինն . (որ է ասել 'ի կողմն հակա_ ջային բևեռի) : Քանզի սակս բոլորակեան ձևոյ երկրի՝ աստիճանքն որչափ հեռանան 'ի հասարա_ կածէ՝ այնչափ անձկանան . ոչ միայն ընդ հիւսիս . այլև ընդ հարաւ, զի նոյն բան է երկուց կողմանց ևս

Յաշ_

Յաշխարհացոյցս՝ յորս ամենայն մասունք երկրի, և յորս մեծամեծ աշխարհք այնց գծեալ մասանց նկարին, զոր օրինակ Հնդկաստան, Թաթարաստան, չինաստանեայք են. աստիճանքն մի առ մի նշանակին միայն, և սովորակ. և սովորաբար հինգ հինգ գծանս: Եւ թէպէտ աստիճանք լայնութեան, նոյն և երկայնութեան՝ բաժանին 'ի 60. մասունս, որք կոչին մանր բաժանմունք, կամ մասունք. բայց ոչ նշանակին այսպիսիք յընդհանուր աշխարհացոյցս, այլ միայն 'ի մասնաւորս, յորս աստիճանքն նշանակին մեծապէս ստուերք. իսկ մանրաբաժանմունք մանր թուագրովք և հինգ հինգ գծանս:

Իսկ յաշխարհացոյցս մասնաւոր գաւառաց՝ որք զծիր լինի ոչ երկնցանեն, բայց միայն զքաղաքս և զեղեկելս տեղիս այնը գաւառի, աստիճանքն նոյնպէս նշանակին մեծապէս թուագրովք. իսկ մանրաբաժանմունքն՝ փոքրագունիւք. որք և առանձին 'ի տասն գծանս. և խորագանչեցեալն պարունակէ երկու երկու մանրաբաժանմունս և կէս յայնպիսի աշխարհացոյցս:

Եւ յաշխարհացոյցս առաւել ընդհանուրս. զոր օրինակ յաշխարհացոյցն Հայաստանեայց, պարսկաց, գաղղիոյ, սպանիոյ են, աստիճանքն իւր 'ի բազում բաժանին 'ի վեց մասունս. յորոց խորագանչեցեալն պարունակէ տասն մանրաբաժանս, թէպէտ չեն նշանակեալ անդէն ներգործութեամբ. զի թիւ մանրամասանց յայնպիսի աշխարհացոյցս նախ նշանակի ներգործութեամբ. յորս աստիճանք ունին այնչափ տարածութիւն, որ բաւական է 'ի նշանակել առ նոքօք մի առ մի զթիւ մանրամասանց:

Յայտնական մասնաւոր աշխարհացոյցս նշանակել կան և շաւիղք միջօրեայ, կամ միջօրէականութիւնք բաժանելով մանր 'ի քառորդս և 'ի ժամս. զոր լաւանորէն Սփռլու տանի, որ առ մեզ Սանսոնեան Թարգմանի. իսկ զի լաւ իմնք մերկ զնմանութիւն սանդըխոց. որ և է շաւի միջօրեայ, բաց որոց գծագրեալ են այն աշխարհացոյցք. մի զի ոչ ամենայն աշխարհացոյցք բաց շաւիղս աշխարհագրական միջօրեայ գծագրին. այլ սովորաբար խորագանչեցեալ առց ի խաչեւան միջօրէականութեանց. մինչ այլազգ՝ է գաղղիացւոց, այլազգ՝ գերմանացւոց, նոյնպէս տանելի է մեր այլոց ազգաց:

Յոր սակս 'ի շաւիղն գտանես 'ի մէջ այնպիսի

առ...

աշխարհացուցից. հարկաւոր է գիտել՝ թէ ըստ որոյ մղոնաչափութեան յօրինեալ են. և թէ որչափ է տարածութիւն այնց մղոնաց համեմատութեամբ աշխարհագրականաց մղոնաց. զոր ճշգրտիւ ցուցանեն քերթ. աղիւսակք չափուց ոտից. և մղոնաց. կարգեսցես 'ի վեր անդր 'ի չորրորդ գլուխն, ուր խօսեցաք վասն չափուց այլևայլ ազգաց. զոր բարւոք 'ի միտ առեալ, դիւրաւ մարթ է չափել 'ի ձեռն մղոնաչափութեան իւրաքանչիւր աշխարհացուցի զհեռաւորութիւն տեղեաց 'ի միմեանց: Զի բացեալ զկարկինն, մինչև ծայրք նր. հասցեն 'ի մի երկուց տեղեաց, զորոց զհեռաւորութիւն 'ի միմեանց խնդրեմք. և ապա նոյնչափ բացութեամբ եդեալ 'ի մի մղոնաչափութեան, կամ՝ սանդղաց, առանց այլ ինչ հաշուի, նոյն հետայն երևեսցի, թէ քանի՛ մղոնաւ հեռի են այն տեղիք 'ի միմեանց:

Բայց այս չափ ոչ է այնքան յապահով՝ և ոչ այնչափ ճշգրտ՝ մանաւանդ յընդհանուր աշխարհացոյցս, որք զգլխաւոր մասունս երկրի յանդիմանեն առնեն. զորօրինակ զասիա. զեւրոպիա ևն. ուրեմն և ոչ իսկ զնոյն յայնպիսի աշխարհացոյցս այս մղոնաչափութիւնք. զի 'ի նո առաւել յապահով են և ճշգրտ չափմունք 'ի ձեռն երկայնութեան և լայնութեան տեղեաց, զոր մարթ է առնել ըստ հետագայ օրինակացդ:

Եթէ տեղիք զորոց զհեռաւորութիւն 'ի միմեանց գիտել խնդրես՝ իցեն ընդ նովին զուգահեռական շրջանակաւ, կամ ընդ նովին լայնութեամբ, չափեսցես կարկինաւ զաստիճանս երկայնութեան որ 'ի մէջ երկուց տեղեացն: Ապա տես յաղիւսակին որքանութեան աստիճանաց (թղթ. 62.) թէ մի աստիճան յայնմ լայնութեան քանի՛ մղոն է, և վերածեալ զաստիճանս 'ի մղոնս. բազմապատկեա նոքօք զաստիճանս, որք են 'ի մէջ տեղեացն, և արտադրեալն ցուցցէ քեզ զհեռաւորութիւն նց:

Զոր օրինակ. Նահա կոստանդնուպօլիս, և տրապիզոն են ընդ նովին զուգահեռական շրջանակաւ. զի երկոքեան ևս անկանին ընդ 41 աստիճանաւ լայնութեան, և մինչ հեռաւորութիւն նոցա 'ի միմեանց՝ է 10 աստիճան, և 43 մանրամասն. Իսկ մի աստիճանն ընդ 41 աստիճանաւ լայնութեան է 45 մղոն, և 255 ձող. առնել զձողն ոչ փոխանակ առանձին վերջնաչափ տարածութեան, այլ փոքր մի

այս-

պակաս. ըստ որոյ 951 ժողն առնէ մի մանրամասն կամ մի մղոն։ Արդ զ10 աստիճանս և զ43 մանրամասն բազմապատկեալ 45 մղոնաւ, և 255 ժողով, արտադրեալն լինի 485 մղոն, և 117 ժող և կէս։ Եւ ահա այսչափ է հեռաւորութիւն Կոստանդնուպօլսոյ 'ի Տրապիզոնէ։

Զայս մարթ է առնել և այլազգ. բայց 'ի նոյն յանկի։ Չափեալ զերկայնութիւն երկաքանչիւր տեղեաց. զի զհեռաւորութիւն նոցա յառաջնոյ միջօրէէ. (ենթադրեալ թէ երկոքին ևս իցեն ընդ նոյն զուգահեռական շրջանակաւ, որպ 'ի վերոյ ասացաք). և տարբերութիւն աստիճանաց հեռաւորութեան նոցա յառաջնոյ միջօրէէ անտի վերածեալ 'ի մղոնս՝ ըստ վերոյիշատակեալ աղիւսակին՝ ցուցցէ քեզ զհեռաւորութիւն տեղեացն՝ զոր խնդրես։

Զոր օրինակ. ահա Աժտերխան, և Ճինեվրա են ընդ նոյն զուգահեռական շրջանակաւ. զի երկոքին ևս են ընդ 46 աստիճանաւ և 12 մանրամասամբ լայնութեան. իսկ երկայնութիւն կամ հեռաւորութիւն Աժտերխանի՝ յառաջնոյ միջօրէէ անտի է 68 աստիճան, և 5 մանրամասն. իսկ Ճինեվրայի 23 աստիճան, և 58 մանրամասն. յորմէ յայտ է թէ տարբերութիւն հեռաւորութեան նոցա յառաջնոյ միջօրէէ՝ է 44 աստիճան և 7 մանրամասն, իսկ մի աստիճանն երկայնութեան առ 46 աստիճանաւ լայնութեան՝ է 41 մղոն, և 636 ժող։ Արդ զ44 աստիճանն և զ5 մանրամասն՝ բազմապատկեալ 41 մղոնաւ, և 636 ժողով, արտադրեալն լինի 1836 մղոն. և 854 ժող և մի չորրորդական։ Որ է չափ հեռաւորութեան Աժտերխանի 'ի Ճինեվրայէ։

Իսկ եթէ կամիցիս չափել զհեռաւորութիւն տեղեաց, որք խոտորնակի իցեն միմեանց. զոր օրինակ մին ընդ արեւելեան հիւսիս, և միւսն ընդ հարաւային արեւմուտս, նախ չափեսցես կարկինաւ 'ի վր աշխարհացուցի զհեռաւորութիւն նոցա 'ի միմեանց. ապա տարեալ զկարկինն նոյնչափ բացուածով 'ի վր միջօրէին, որ է յաջմէ և յահեկէ աշխարհացուցին յորում նշանակեալ կան աստիճանք, տես թէ քանի՞ աստիճանք, և քանի՞ մանրամասունք պարփակին 'ի մէջ երկուց ծայրից կարկնոյն. զոր բազմապատկեալ 60 մղոնաւ, արտադրեալն ցուցցէ քեզ զհեռաւորութիւն տեղեացն՝ զոր խնդրես։ Որպէս ահա Կոստանդնուպօլիս և Հօլլէնդ համեմատութե

մբ

միլիոնից խառնարանակ դիրս ունին. զի կուտակեցեալ ընդու- նոյնեա է յաջորդականութեան հետևի, իսկ հարկեալ յաջորդեցեալ հարիւր. իսկ մինչ հասարակութեան նոցա 'ի միլիոնից 'ի մի աշխարհագրութեան է 8 աստիճան. զոր բազմապատկելով 60 միլիոնիւ, արտադրեալն լինի 480 միլոն. Իսկ ցուցանէ թէ այսչափ միլիոնահեալ է կատարելագործեալս 'ի հայկեալս:

Գ-ծնագրութիւն աշխարհականաց Լեզուաց:

Որովհետև մարդիկ գտանողիս է երկիր, չիք ինչ յարմարագոյն քան զգուշանալ 'ի ձևացուցանել զայն: Բայց քանզի գծուագրելով իւր է ստորոյս զարմանալութիւն, և անհնարին է կազմել մեծագունդ մինչև կարող լինելոյ պատմելոյն ինչ մանրամասնութեան նշանակել 'ի նմա, հարկաւորին ունամանակամբ այլ և այլ եղանակս հնարել առ 'ի ձևացուցանելոյ 'ի մանկարգաւորի զնորագոյնն մասն երկրի, այլև զերկիրն ինքնին զամենայն: Արդէն են այս եղանակք, յեղափոխութեան և կողմնակայութեան. առաջինն հետևեալ 'ի կանոնս ընդարձակութեան, իսկ երկրորդն ստոյգ անձինէ:

Իսկ քանզի զերկիր և սոյն երկրի մարթ է առնաներ առ մի նուազ քան զնախաձևութիւն, հարկ է ապա երկրաւոր զնոս յերկրաւ կիսագնդաւոր. Աշխարհագիրք մասանց զերկիրն արանեալ հասանել կամ 'ի հաստատականէն կամ 'ի միջօրէէ և կամ յելևերանց, եղեալ զանձն անհրաժեշտ յաւելուած առաւելագոյն այսց շինուածոց: Արդի յարաւ նեղին երկրաւոր փոփոխութիւն, հիւսիսային, արևելեան կամ արևմտեան, և նոյնք զանձին: Ցերկիր ձևաբերութիւն յայլապէս ապա է սրբել և երկրագունդաց այսոց համաձայնութեան աշխարհագրաց: Մարթ է այսպէս կամ կամ յանկարծ զաշ զանազանութիւն և կամ 'ի ծովերկրաւոր տեղ փոխոյ: Ցնաեղանակս ուսոյ ձևափոխութեան առաջարկեն, յերկրորդագունդն փոփոխութեան հասարակագոյն:

Ցուցագրացն ձևաբերութեան տարբեր մասունքն ուր դնեմ, որը երկիր յմիջագոյնաւոր կեանց կողմնակալութիւն մանկերկութեան առաւելագոյն անձնաւոր ազգաւորութեանց 'ի մանկարգաւոր ձևաբերութեան: Այս գիծք են և մասն անհրաժեշտ շառաւիղաց, որք յանձնարարութեան ամենայն տարբերութեան համեմատ զազգաւոր առանձին միջնաց. Ով ուրեմն ինչ կէտ զազգա- հեռա-

[illegible]

[illegible]

[illegible]

լեան, յարկեմանեան եւ յեղեկրասական կերպարանաւ միջօրէայք եւ զուգահեռականք (որպէս 'ի շրջանա- կաց ուղղահայեցից առ մակարդակն,) են մասն շրջապատոյ բոլորակի․ զի յայտնի է թէ մակար- դակն ձեւարկութեան զիւրաքանչիւր կէտս անուեթեն հաւասարէ զուգահեռաբար [illegible] խաղաղականն, որ է շրջանակին ձեւարկութեան․ մին եւ խոստորնակի հաւասա- րին, 'ի մակարդակէ անտի միջօրէականքն եւ զուգա- հեռականքն։ Եւ քանզի հաւասարին միջօրէից եւ զուգահեռականաց ուղղանկիւնք է 'ի գունտն, նոյն- պէս ուղղանկիւնք լինին եւ 'ի ձեւարկութեան, 'ի պատ- ճառս զուգահեռաբար եւ խոստորնակի հաւասարին եր- կարանիշարդն եւ։

Աշխարհագիրք մասամբն զերկրագունդն եւ երկի- նային տարածանաց զհասարակածն եւ շրջափող եւ [illegible] զծիրս զամենայն շրջանակս, եւ պարզեն զգլանն, լինի քառանկիւնի ինքն մակարդակ մա- կերեւոյթ, եւ երանէ անուանեալն վերադիր աշխար- հացոյց։ Յայսմ՝ ակն ենթադրի 'ի կեդրոն երկրի․ մինչ տեսողական շառաւիղքն՝ որոց հատանեն զգունդն երթան անկանին 'ի մակերեւոյթ գլանին, զծեն անդ զմիջօրէայս եւ զզուգահեռականս ուղիղ գծիւք, որք հատանեն զիրեարս ուղիղ անկեամբք։ Բայց քան տարածայութեան զուգահեռականացն 'ի հա- սարակածէն՝ աճելով համեմատութեան շօշափողաց նոցա, որք եւ են գիծք կամ շրջանակք լայնութեան․ անհնարին մեծանան զանազան մասունք երկրի․ մանաւանդ մերձաւոր զուգահեռաց բեւեռին։ Այսն եւս աշխարհագիրք 'ի ձեւս առնուն զհասարակածն զծիրս շօշափողացն կամ զուգահեռականաց, առ 'ի զծե- լոյ զզուգահեռականսն․ ըստ համեմատութեան ամ- փոփելոյ նոցա 'ի հասարակածէն մինչ 'ի բեւեռս․ առա որ օգնէ եւ [illegible] [illegible] [illegible] երկայնութեան, (յերես 62.) զի [illegible] [illegible] մինչ առ [illegible] երկայնութեան [illegible] [illegible] [illegible] լայ- նութեան։ Որք առհասարակ [illegible] լայնութեան [illegible] զուգահեռականսն կրկին մեծ է քան զմի առ [illegible] լայնութեան [illegible] հասարակածաւ․ [illegible] զի եւ մի [illegible] [illegible] զուգահեռականսն է կէս [illegible] հասարակածին․ [illegible] այս [illegible] ձեւարկութեան ոչ [illegible] [illegible] [illegible] զայս համեմատութեան, եւ [illegible] հասարակ [illegible] [illegible]։ Սա [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] զու-

զու

զանհետականն զօգնելով ըստ իւրում հաստատութեան աստիճանին մերձաւորին, նոյն համեմատութեան զառանց որ կայ 'ի գետն։ Այսպէս քառավեցուսի աշխարհացուցի զերկիրն. է կիսաուրութիւն և գծագրութիւն, մանաւանդ յետ 'ի մեր ասպարէզ զլեռնադաշտ կանոնս ձեւաւորութեանց, և զոր ցոյց մեզ տեսակար զնմա կարգես տեսանել 'ի պատկեր նորուն, (յերես 93)։

Այս են հիմունք աշխարհագծութեան արուեստի. յոր մի բազում բազմօրինակ աշխատեցան, այլ և այլ մտածութեամբ եղանակաւ ու զգուշութեամբ համաձայնելով. որպէս և դորանք 'ի 1707 հնարեցաւ զննել զանն 'ի միակերպութեան երկրի ի ձախոյ առ բարելաւութեան ծոցոյ 45 աստիճանաց. և 'ի նմ մեջտեղայք. և զուգահեռականք մեան են թերասաց։ Բայց խոստովանելի է միշտ զանհնարութեան ամենայն անվրէպ ճշգրտութեան 'ի ձեւաւորութիւն. քան զի խնդիր մեծ է ընդ բոլորակ միակերպեան և ընդ հարթարգանի։


Աշխ արդ ամենայնեւ յաւաջիկայիս դնդագնական կանոնս գծագրութեան համօրէն երկրագնտի կամ համաշխարհացուցի, մասնացուցի՝ որ առեւս կամ եւրոպայոյ են, գաւառացուցի և տեղացուցի։

Բնական յիշատակէ գծագրել զնկարագրական երկիր 'ի մակարդակի, երկաւ զայն 'ի ծածկոյ հակադրելով կե սագծորդին, այսէ՝ 'ի նոյն աստանօրէն երկիր կիսագրագծագրական երկիր հետի 'ի մակարդակի յիշատակութեան։

Զն 1.

ա. 'Ի Գ. կեդրոնէ ղեկորդ և իջէ միջոցաւ գծեսն բոլորակ Ա Դ Բ Ե, որ և է միակարգակ ձեւաւորութեան. և շրջապատն է համաչափականն. զի գծել կայ մեզ առաջի զկիսագրութեան բևեռականն, յորոյ 'ի կեդրոնին է բևեռն։

բ. 'Ի նմին կեդրոնէ գծեա այլ իմն բոլորակ համակեդրոն առաջինին մի և եթ հեռի յառաջնոյն. և զծիրն այնուհետև՝ որ ձեւանայ յեղերս մակարդակին՝ բաժանեա յաստիճանս 360. զիւրաքանչիւր քառորդ յիւն կամ յութևտասն մասն համարելով, և զանցուցիր մասն 'ի 10 կամ 'ի 5 աստիճանս։



130
140
150
160
170
180
190
360
350
10
20
30

Դ. Որովհետեւ բոլորակք որք են աշխարհացոյց կան 'ի նմին մակարդակի՝ ուղիղ գիծ երեւին, եւ ամենայն միջօրեայք ընդ բեւեռն անցանեն. ապա ահն՝ է գտանել ըստ նմանութեան 'ի հասարակաց կիսոյ ընդ բեւեռին, կայ 'ի նմին մակարդակի ընդ ամենայն միջօրէից. վասն զի ընդ կեդրոնն Գ, եւ ընդ տասնեակ աստիճանս հասարակածին (կամ եթէ մեծ լիցի մակարդակն ձեւարկութեան ընդ հնգեակս ընդ մի մի խուրաքանչիւր) ձգեալ զուղիղ գիծս այն ԱԲ, 10 Գ 190, 20 Գ 280 եւն. եթէ յորոշեալ անուղի ինչ կամիցիս դնել զառաջին միջօրեայ, նախ անտի սկսիր գծել փոքր մի հաստատագոյն առնելով զայն քան զայլսն, որ լիցի ԱԲ:

Ե. Եգեալ զքանոնդ 'ի կէտն Ե եւ առ տասն աստիճանս ԱԴ քառորդին, (կամ եթէ մեծ լիցէ մակարդակ ձեւարկութեան առ հինգ հինգ կամ առ մէն մի;) նշանակեա 'ի վր. ԱԳ միջօրէին զկէտսն հատմանն 10, 20, 30 եւն, եւ 'ի Գ կեդրոնէ գծեա ընդ այն կէտս զհամակեդրոն բոլորակսն, որք են զուգահեռականքն կամ լայնութեան շրջանակքն, նմին համեմատութեամբ ընդ տասն տասն աստիճանս լայնութեան ձգեալքն ըստ բաժանման քառորդի հասարակածին, զոր շրջեցուցեր զքանոնդ: Արդ 'ի նոյն կէտս հատմանն զուգահեռականացն 'ի վր. քառորդի առաջին միջօրէին կարես նշանակել զաստիճանս լայնութեան ըստ բաժանման հասարակածին, 10, 20, 30 եւն: Ընդ 23 $\frac{1}{2}$ եւ ընդ 66 $\frac{1}{2}$ աստիճանս առաջին միջօրէին ձգեալ 'ի նոյն Գ կեդրոնէ եւ այլ երկուս համակեդրոնս փոքր մի տարտամագոյն քան զայլսն, եւ ցուցցեն զարեւադարձի եւ զբեւեռային շրջանակս:

Զ. Արեւադարձի շրջանակն 'ի Հ կէտսն հատման Գ Ե ուղղահայեցին առ ԱԲ ցուցանէ քեզ զխառտորութիւն ծրի խաւարման, ապա ընդ երիս Ա Հ Բ կէտս (Երկրաչափ. 78, 79.) ձգեալ զկիսաշրջանակն Բ Հ Ա, եւ այն է կէս ծրին խաւարման, եւ թագուցեալ զհամաստութիւնս 'ի Բ եւ Ա կէտս հասարակածին. եթէ այլուր նշանակեսցես յայտնի է զինչ պարտ իցէ առնել:

Է. Զանեղիան զօրաց պարտիս գիտել զերկայնութիւն եւ զլայնութիւն որ 105 եւ 60, գծագրեսցես այսպէս: Զլայնութիւն թուեա 'ի հասարակածին

ԱԴ

Ա Գ Բ Ե, և երկեալ դարձեալ յայն 60 աստի-ճանն. և 'ի կէտն Ե, 'ի կէտն համեմատ ա գծեալ զհամանկերպութեան մի 'ի Գ կերպարանէ. այսպէս 'ի նոյն Գ կերպարանէ ձգեալ գիծ ինչ առ 105 աստիճան երկայնութեան. Բ կէտն համեմատ այսր գծի և համանկերպութեան է խնդրեալ անկիւն։

Այս է մի կիսագունդ. ըստ այսմ գործեսցես և զմիւս կիսագունդն։

Գծել զկիսագունդ երկրի 'ի ճակատագրի, երկեալ զոր 'ի ճակատագրի հասարակածին՝ կիսագծագործ երկիր հե-ռի 'ի ճակատագրի յետագայութեան։


Ձև 2.

ա. Գծեալ և բաժանեալ որպէս 'ի վերոյ ասացաք զշրջանն Ա Գ Բ Ե, որ է առաջին աստիճան միջօրէից և միաժամանակ ճակատագրի ձևաւորութեան. անկ հաստատեալ զլինել 'ի բևեռի այսր առաջին միջօրէի, որ է առեալ 'ի ճակատագրի հասարակածին։

բ. Ձգեալ զուղիղ գիծն Ա Բ որ ցուցանէ զհասարակածն. ձգեա և զմիւսն Ե Գ ուղղահայեաց, որ ցուցանէ զմի 'ի միջօրէից՝ յորոյ ճակատագրի կայ ակնն. Ա անցք ակնդէտ հասարակածին, Ե և Գ բևեռք։

գ. 'Ի Ե կէտէն (որպէս և 'ի վերոյ ասացաք) առ իւրաքանչիւր աստն կամ հինգ կամ մէն մի աստիճանս Ա Գ Բ կիսաշրջանակին ձգեալ ուղիղ գիծս և նշանակեալ ըստ կէտսն համեմատ 10, 20, 30 և այլն. ընդ կէտս ընդ այսոսիկ և ընդ բևեռն Ե և Գ գծեալ զաղեղսն, Գ 10 Ե, Գ 20 Ե, Գ 30 Ե և այլն. ըստ միջօրէականաց երկրագործականն տարբ. և լինին միջօրէականք։ Եթէ զիւրաքանչիւրս կամեսցես, երկայնեալ արտաքոյ զծայրսն Ա և Բ, և 'ի Ե կէտէ շարունակեալ զբաժանումն հասարակածին 'ի վերայ յաւելուածոց, յետ 10 և 170 աստիճանաց առ քառն քառն կամ առ աստն աստն աստիճանս Ա Ե Բ կիսաշրջանակին ձգեալ գիծս. և նշանակեալ զկէտս համեմատ 'ի վերայ յաւելուածոց Ա Բ գծին. անկ նոյն կէտք համեմատ հասարակածին երկու երկու կերպարանք աղեղանցն Գ 10 Ե, Գ 20 Ե և այլն։ Գ 100 Ե, Գ 110 Ե և այլն։

դ. Նշանակեա 'ի Բ կէտէ առ աստն կամ առ. հինգ.


130
140
150
160
170
180
20
10
150
160
170

Հինգ աստիճանս Դ. ԱԵ կիսաշրջանակի ձգեալ ուղիղ գիծս և ընդ կէտս համեման նց 'ի Դ Ե և Է խուրսքանչիւր համեմատական աստիճանս միջօրէից առաջնոյ ձգեալ աղեղունս և լինին զուգահեռականքն : Կամ զբաժանեալ մասունս հասարակածին փոխադրեալ կարգաւ 'ի ԴԵ միջօրեայն բևեռէ 'ի բևեռ գնալով. զի վախճանն է զ'Դ Ե միջօրեայն բաժանել յաստիճանս համեմատականս առաջնոյ միջօրէին և հասարակածին : Եւ քանզի աղեղունք միջօրէին Ա 10, Ա 20, Ա 30 են համեմատ են փոխադրման զուգահեռականացն, յայտ է թէ ամէն կանոնաւ գծին և արևադարձի և բևեռական շրջանակին, քանզի և սոքին են զուգահեռականք հասարակածին :

Ե. Եթէ ծիրն խաւարման համարեսցի հասանել զհասարակածն անդ ուր կայ անին ՃՓ 'ի Գ, լինի անին 'ի մեկնագրական ծրին խաւարման, ուստի և ծիրն խաւարման լինի ուղիղ գիծ ԽՇ : Իսկ եթէ 'ի կէտսն Ա և Բ, յայնժամ ընդ կէտն ; ուր արևադարձն հասանէ զմիջօրեայն Դ Ե, և ընդ նոյն Ա և Բ կէտս ձգեսցի աղեղն Ճ, Մ, և այն է ծիր խաւարման :

Զ. Զանեղիսն 'նշանեսցես այսպէս : 'Ի կիսաշրջանակի առաջնոյ միջօրէին Ա Դ Բ թուեա զերկայնութիւն որ 130, և ընդ Ե և ընդ 130 ձգեալ ուղիղ գիծ՝ գծեա զկէտն Հ. ապա Է երիս, Դ, Հ, Ե կէտս գծեա զմիջօրեայն ԵՀԴ. 'Ի ԱԴ քառորդին թուեա զլայնութիւն որ 10, և ընդ 10 և ընդ Բ ձգեալ ուղիղ գիծ՝ գծեա զկէտն Ն. ապա Է երիս 10, Ն, 170 կէտս գծեա զզուգահեռականն 170 Ն 10. Ն հասարակ կէտն համեման զուգահեռականին և միջօրէին է խնդրեալ տեղին :

Զայսօրինակ կատարեսցես և զայլս կիսագունդ : Լինի ևս մեկնագրութիւն կիսագնդոյ՝ յորում միջօրեայք են աղեղն Թերգոտի. բայց զանց առնեմք, զի չէ սովորական :

Գտնէ՛ զմանաւոյց, որ զաշխարհացոյց ուրէց մասանց Եւ-կլիդի, որ Ասիոյ կամ Եւրոպիոյ ։

Զև. Յ.


Մասնաւորեալն է մասն ինչ ընդարձակ համաշ-խարհագրութեան, որպէս 'ի նմանէ համեալ. վասն զի 'ի գծել զսա պարտ է առնել դրեթէ զնոյն գործո-ղութիւս զոր ստորագրեցաքն միջօրէական կիսագնդե-ան, որպէս այն թէ զայնպիսի ինն կիսագունդս համեմատեալ իցեմք գծել. միայն թէ ընդ մէջ կէ-տագնային 'ի մանկարդական հասարակածին զնելի է միջօրէայն որ անկանի ընդ մէջ խնդրելոյ գծելի մասին ։ Զամենայն մասունս համաշխարհագրութեան պարտ է ուղղուագրել և նթ., և միայն զխնդրելոյ մասինն անցթերն և Զուգահեռս գծագրել. զոր այսպէս համառօտ քննութեան շրջանակաւ յարմարէ ստորինա-նել յոր ստորինան և կամք իցեն, զդասաւանդութիւն ստորինեանց համաշխարհագրութեան առնել պարտ է 'ի վ՛ր այնը քննութեան շրջանակի, որ առդէն հա-սանի և բաժանի 'ի միջօրէիցն և 'ի զուգահեռա-կանաց ։ Վայրին մի խորհրդածութիւն և անուածութիւն պատկերի լուսաստղերսցէ զաստացեալս ։

'Ի մասնաւորեալս զուգահեռականք ստորագրեալք ա-ղեղնաձև լինին. իսկ միջօրէայքն ուղիղ են՝ եթէ մասունն չիցէ մեծ յոյժ և ընդարձակ, և չառնիցին անցանել զհասարակածաւ. զի յայնժամ այլազգ-անհնարին է ցուցանել զամենայն ստորինանց եր-կայնութիւն որ յայն կոյս հասարակածին ։ Բայց ընդհանուր կանոն ուղղութիւն և կորութիւն գծից է գիտել ուշադիր յարուած եռնդապրէ՝ և զորութիւն ստորինանցն, որ յայտ է և 'ի նախակարգեալ ընդհանուր անուանէց ։


Քաղաքի մասնաւորեալն է մասն ինչ համաշխարհա-գրութեան ընդարձակեալ, մանաւանդ է գիտութեամբ եւ գծագրել զայն այսպէս ։ Զև. Յ.

, Ա. Զգեամ զմիջօրէայ անդուոյն Ա Բ, յորոյ մա-կարդակին կացեալ եռնդապրէ ակն. և 'ի համաշ-խարհագրութեան փոխադրեամ 'ի վ՛ր այսր միջօրէի զտարակայութիւն զուգահեռականաց քանի ստոր-ինանց և կամք են՝ կրկին, եռապատիկ, քառա-պատիկ առաւելութեամբ ըստ մեծութեան խնդրելոյ մասնաւորութեանց, որ են Ճ, Մ, Յ, Ն ։

 Է.



110
60
50
40
30



125
130
30
30
10
10
120
125

Գ. Արդէն, եռապատիկ, քառապատիկ են մեծութիւնք շրջանակաց նոյն զուգահեռականաց համաշխարհացուցին ընդ նշանակեալ կէտս միջօրէին գծեալ զուգահեռականաց 60 և 60, 50 և 50 են, որ ի խաչաքանչիւր կամ առ հիւսիս կամ առ հարաւ աստիճանս լայնութեան ըստ մեծութեան նոցա: Այսպէս արասցես և զայլ զուգահեռականն շրջանակս:

Դ. Նոյնպէս զանհաւասարութիւն միջօրէականաց համաշխարհացուցին ըստ համեմատութեան մեծութեան մասանցուցին փոխադրեալ 'ի վ͞ր զուգահեռականացն, երկուց՝ եթէ ուղղագիծս կամիցես զմիջօրէականսն, և երից՝ եթէ աղեղնաձեւս. և ընդ որոշեալ կէտսն ձգեալ ուղիղս կամ աղեղնաձեւս զմիջօրէականսն:

Ե. Զտեղիսն այլ ուսանիցեսցուք մի համաշխարհացուցին նշանակս առորագրեսցես և առ 'ի կէտս համեմատն միջօրէին և զուգահեռականին:

Զ. Զօրօրինակ ձեւն ընդ քանի աստիճանս երկայնութեան և լայնութեան կայցէ իցէն հատցես քառակուսի շրջանակաւ Գ Դ Թ Ը. և զհատուածս նորա 'ի միջօրէիցն և 'ի զուգահեռականաց բաժանեսցես 'ի մասունս ըստ մասանց համաշխարհացուցին:

Գծագրել զաշխարհացոյց:

Ձև 4.

Ի սմա զուգահեռականքն և մանաւանդ միջօրէականքն առհասարակ ուղղագիծ ձգին. զմի,

ա. Ձևացի ուղղանկիւն զուգահեռագիծ Գ Դ Զ Ե ըստ մեծութեան խնդրելոյ զաշխարհացուցին:

բ. Զլայնութիւն ԵԳ, ԶԴ բաժանեալ 'ի մասունս հաւասարս ըստ չափոյ աստիճանաց լայնութեան խնդրելոյ աշխարհին, և ձգեալ կողմանէ 'ի կողմն զզուգահեռականսն ուղղագիծս: Զի որովհետև աստիճանք լայնութեան են աստիճանք միջօրէականին կամ մեծագոյն շրջանակի, ամենեքեան հաւասարք են միմեանց: Իսկ լայնութիւն աշխարհի ուղիղ գիծ համարի, եթէ զի քանի մի աստիճանաց աղեղն է որոյ կորութիւն մանաւանդ ըստ մեծութեան քաղաքականին ոչինչ է: Զնոյն իմա՛ և զմի ուղղութիւն զուգահեռականաց:

Է. Զմի մասն լայնութեան ևս գծեալ առանձինն ի Լ, բաժանեսցի զայն յատորինս հաւասար բաժանմանցն որ 'ի լայնութեան անդ, և գրեսցի զնոյն նշանագիրն 'ի վր նք Ը. ողորմութեան ատորինանցն :

Ը. Զգծեալ զմիջին միջօրէկայ անդուոյն ԱԲ. և ատորի և անտի սորա 'ի վր Գ Դ և Ե Զ զուգա- հեռականաց նշանակեալ զատորինսն երկայնութեան, որք չեն հաւասար ատորինանց լայնութե. և այլ են 'ի Գ Դ, այլ 'ի Ե Զ. վա զանազան յարաբերականին (և րես 62.) զգանկիօնան ատորինանց այնց զուգահեռականաց, այնչափ մեղուներ ունցեր 'ի մղոնաչա- փին, և զայնս նշանակեսցես աստի և անտի ԱԲ միջօրէին. կամ 'ի Գ և 'ի Ե ծայրս 'ի Դ և 'ի Զ. բայց յայնժամ չէ պարտ ձգել նախ զմիջօրէայն ԱԲ :

Թ. Ըստ նշանակելոյ ատորինանս երկայնութե հա- մեմատաբար ձգեսցես ուղիղ գիծս և լինիցին մի- ջօրէայքն : Եթէ 'ի Ե Զ բաղում կայցէ բաժանմունք երկայնեաց և զԳ Դ ըստ երկուս ծայրսն, և չա- փաւորեալ զբաժանմունսն նը, առ որպէսզի գիտես համեմատականս բաղմապատիկ բաժանմանց Ե Զ զուգահեռականին :

Ժ. Զանեղեալս որոց յայտնի են երկայնութիւնք և լայնութիւնք, գտցես սոյն 'ի համաչափ հաւասարութիւն 'ի կիտի համանման միջօրէին և զուգահեռականին :

Յատուցեալս զայսմանէ մանաւանդ 'ի գծագրու- թէ զատարածութեան գիտցես է խնամոյ և զանեղա- ցուցին, յորում անհնարին գիծք ուղիղ են. զի որ- չափ և մեծագոյն իցէ հեղեղն մի ատորինան պա- րունակէ, և անհորդութիւն ատորինանց երկայնու- թեան ունի է : Տես վր այսր և յերկրաչափութե. 'ի համարս 667 :

Այսչափ լինի յաղագս երկրի աշխարհակերպ- գարէմուցմունք զայս յերկրագունդն :

Ստուերագրելի գունդ երկրի, և կոր ձևութեան նը :

Ստուերագրելի գունդ երկրի է մնացեալն կաղ- մեալ ուղղորդէ, յորոյ 'ի կորնթես մակերևս գծեալ կայ մակերևոյթն բնական հողագնտոյս մի- րոյ. որ ցամաքն, ծովքն, և գլխաւոր բաժանմունք

և գիւղք նոցա՝ ըստ համեմատութեան, զոր կրեն տե-ղին 'ի մէջ երկրի։ Այս բոլորաձև մարմին ան-ուանի Հողագունդ կամ Գունդ հողեղէն, 'ի գլխա-ւոր մասանց իւրոց, որով զանազանի յարուես-տակերտ գնտոյ երկնից. սակայն մեք յիշեսցուք այսր աշխարհագրութեան անուանս վարիլ զանուանս Հողագնտոյ, սակս համառօտութեան։

'Ի մէջ այսր գնտոյ կան, գծագրեալ զանազան գիծք և նշանք իրականք, և կեղծեալք։ Իրականք են՝ որք բնական պատշաճին գնտոյ երկրի, զի կրեն զանունն 'ի նմա. որպիսիք են գիծք, և նշանք, որք ցուցանեն զծով, զցամաք, զգետս, և զքաղաքս։ Իսկ կեղծեալք են՝ որք կրեն ոչ զան, այլ աշխար-հագրացն ընծայեն նմա. յորոց ոմանք ուղիղ են, որք առանցքն, և բևեռք. և ոմանք մանեկաձև, որք միջօրեայ շրջանակին, եզերաց, համասփռականքն, արևա-դարձք, բևեռայինն շրջանակք, և զուգահեռա-կանք. զորոց լինել խօսեցաք 'ի վեր անդր։

Իսկ առ գործածութիւն այսր գնտոյ՝ խնդրին հետևեալ գործիքք. Նախ՝ մարմինն՝ կամ բուն գունդն. Երկրորդ՝ միջօրեայ պղնձի, կամ յայլ նիւթոյ։ Երրորդ՝ քառորդ բարձրութեան, և հեղյս կամ պտուտակ նորա, այն է՝ Պուստումա։ Չորրորդ՝ շրջանակ ժամուց, և ցուցակ նորա, այն է՝ Բոխուս։ Հինգերորդ՝ եզերաց կամ հորիզոն 'ի փայտէ, կամ յայլ նիւթոյ։ Վեցերորդ՝ կիսաշրջանակ պղնձի. որ կոչի կիսաշրջանակ դիրից։ Եօթներորդ՝ կողմնացոյց, այն է՝ Փուսուլայ. զորս յառաջիկայդ մի առ մի բացատրեսցուք։

Գունդն՝ է նոյն իսկ արուեստական գունդ երկրի, յորում մէջ նաւագրեալ կան այսպէս գիծք և շրջանակք տպաւորեալք առ 'ի խելամտութ լինել ե-րաց, զորս երևեցուցանէ գունդն։

Միջօրեայն՝ է այն մեծ շրջանակն, զոր ևս վարպետք շինեն 'ի պղնձոյ, յորում համատարած կայ գունդն առ երկոսեան բևեռացն՝ 'ի ձեռն ա-ռանցից իւրոց, զորով հոլովի, և է բաժանեալ 'ի չորս քառորդս կամ մասունս, յորոց իւրաքանչիւր ունի 90 աստիճանս բաժանեալս առանձնական թուանշանօք, այսինքն 10. 20. 30. 40. են մինչև ց 90։

Քառորդն բարձրութեան կամ լայնութեան որ կո-չի և շրջանակ դարձուածոյն՝ է նեղ և անօսր թի-

թեւըն աղեղնի և գիւղութեւքը, որ անցանէին համեմատ չափ է չորրորդ մասին հասարակածին: Ցայս շրջանակ նշանակեալ կան 90 աստիճանք ըստ չափոյ կամ ըստ հեռաւորութեան աստիճանաց նշանակելոց 'ի հասարակածն:

Շրջանակ ժամուց՝ է փոքրիկ իմն շրջանակ հաստատեալ 'ի միջօրէայն, մանկանայն իւր կեդրոնն զբևեռն, կամ զծայր առանցից գնտոյն: Ցայս շրջանակ նշանակեալ կան հաւասար հեռաւորութեամբ 24 ժամք աւուր բնականի, 12 'ի մի կէս շրջանակին և 12 'ի միւս կէսն. յորոց երկոտասանն՝ որ է 'ի վերին կողմն շրջանակին՝ ցուցանէ զօր հասարակ. իսկ ստորինն՝ որ է յեզերաս կայս՝ զկէս գիշերին: Ամենայն զի յերկոտասանէ յերկոտասանն՝ յարմարելոց կուռ են ժամք 'ի կէս գիշերոյ մինչև ցօր հասարակ. և 'ի վերջին երկոտասանէ մինչև 'ի առաջինն երկոտասանն յարմարելոց կուռ, են ժամք զկնի միջօրէի մինչև 'ի կէս գիշեր: Իսկ ցուցակ կը Բոլոր շրջանակին կայ հաստատեալ 'ի ծայր առանցից 'ի վերայն ընդ գնտոյն. զի 'ի հոլովել գնտոյն զառանցիւք, զոյգ է նմա հոլովի և ցուցակն:

Եզերաքն կամ հորիզոնն՝ է օղամանեակ մեծկար գակ, կամ տափարակ. յորում շարժի միջօրեայն աղեղն՝ անցեալ ընդ երկու խորամատս նորա: 'Ի վերայ այսր օղամանեկի նշանակեալ կան աւուրք երկոտասան ամսոց. և կենդանատեսակք, յորս ամսոյ յամենայն մտանէ արեգակն. և աստիճանք շրջանութեան:

Կիսաշրջանակն գրեց է նոր՝ բայց անուր թեկ թեւըն աղեղն, որ անցանէ ճշդութեամբ համեմատ կիսոյ հասարակածին: 'Ի վերայ այսր շրջանակի նշանակեալ կան 180 աստիճանք հաւասար հեռաւորութեամբ աստիճանաց հասարակածին. զոր մարթ է կոչել և երկնապատկեալ քառորդ բարձրութեան. և է պիտանի 'ի չափել զհեռաւորութիւն 'ի վերայ գնտոյ ոչ միայն երկրի, այլ և երկնից: 'Ի վերայ սորա ամփոփարար յարմարեալ կան նշանակեալ կան աստիճանք:

Իսկ կողմնացոյցն առ եղերակ, ուղիղ հաստատեալ 'ի վերայ պատուանդանի գնտոյն, որ պիտանի է 'ի զետեղել զգեւնդն ուղիղ ընդ հիւսիս, և ընդ հարաւ, առ 'ի լուծանել զակնառու խնդիրս աշխար-

հա

հասարակածս 'ի մէջ արուեստականերս գնտոյ երկրի՝ 'ի ձեռն նախաձայնեալ գործեաց. յորոց զոմանս տեսցուք յառաջիկայդ, առ 'ի մարզումն ուսումնականաց:

Խնդ. Ժ': Ցուցանել զգօտիսն:

Մատուցեալ լուծանել զխնդիրս 'ի մէջ գնտոյն՝ նախ պարտ է յարմարել զգունդն ըստ կանոնաց աշխարհագրութեան, և ապա անցանել 'ի մէջ նորա զառաջադրութիւնս: Արդ՝ դիր զգունդն՝ համեմատ պատուանդանաւ խելով 'ի մէջ հարթհաւասար մակարդակի, այնպէս՝ զի չորեքին կողմանք նորա՝ զի արևելք, արևմուտք, հիւսիս, և հարաւ՝ որք նշանակեալ կան 'ի մէջ հորիզոնին, համեմատեսցին չորից ծագաց երկնից: Եւ վերացուցեալ զբևեռն 'ի վերայ քան զեզերս ըստ լայնութեան յառաջադիր տեղւոյն, հաստատեսցի զքառորդն բարձրութեան 'ի վերնակէտն կամ 'ի զենիթն, որ է կէտ գագաթան, և զմիջօրեայն պղնձի ուղղեալ անկեալ ընդ հիւսիս և ընդ հարաւ 'ի ձեռն կողմնացուցին, որ մի պայտուլիկ հաստատեալ կայ 'ի մէջ պատուանդանին: Եւ ապա այսպէս ուղիղ յարմարեալ լինի գունդն:

Խնդ. Ի': Գտանել զերկայնութիւն և զլայնութիւն տեղւոյ երկրի:

Հոլովեա՛ զգունդն, մինչև տեղին՝ զորոյ զերկայնութիւն և զլայնութիւն խնդրես, եկեսցէ ընդ պղնձի միջօրէիւ. և ընդ որ աստիճան հասարակածին անցանէ յայնժամ միջօրէն, առա այն աստիճան է երկայնութիւն տեղւոյն. իսկ լայնութիւն՝ է այն աստիճան միջօրէին՝ յորում կայ տեղին: Այլ եթէ գիտիցես զերկայնութիւն և զլայնութիւն տեղւոյն և խնդրիցես զտեղին, գիր զմիջօրէական երկայնութեան, և ապա թէ լայնութիւն 'ի պղնձի միջօրէին յոր կէտ այնր միջօրէի երկայնութեան տեղւոյն անկանի, և այն կէտ է խնդրեալ տեղին: Զոր օրինակ կամեցեալ գտանել 'ի մէջ գնտոյն զսպահան մայրաքաղաք պարսից. երկայնութիւն նորա է 70 աստիճան և 10 մանրամասնունք. իսկ լայնութիւն 32 աստիճան, և 25 մանրամասնունք. արդ պարտ է հոլովել զգունդն մինչև միջօրէն շօշափեսցէ զհասարակածն 'ի 70

աստիճանին. այսպէս խնդրել ՚ի վերայ միջօրէին զ32 աստիճանն և զ25 մանրամասնն, և առեալ ՚ի անդուստ անդր զքառորդն՝ անկանելով ընդ այնմ աստիճանա- միջօրէին է տպագրեալ քաղաքն:

Խնդիր Գ: Գտանել ՚ի վերայ գնդոյն զհեռաւորութիւն երկուց տեղեաց ՚ի միմեանց. որ երկրաչափաց և կողմնակ գծապագրաց:

Որպէս զի ծայր կարկինի ՚ի կէտս անդր գնդոյն՝ ուր նշանակեալ կայ երկրորդ, և բաց զկարկինն մինչև միւս ծայրն անկցի ՚ի վերայ կառատարութեան. ապա եդեալ զկարկինն ՚ի վերայ հասարակածին նոյնչափ բացուածք, թուեսցես զաստիճանս պարփակեալս ՚ի մէջ երկուց ծայրից կարկինին ՚ի հասարակած անդր. որք են աստիճանք $9\frac{1}{2}$. և զիւրաքանչիւր աստիճանս բազմապատկեա 60 ով, որ է թիւ մղոնեացն, և եղեալ թիւն 570 ցուցանէ թէ 570 մղոնաւ հեռի են այս երկու քաղաքք ՚ի միմեանց: Մարթ է զայս գտանել և ՚ի ձեռն քառորդի բարձրութեան առանց կարկինի այսպէս: Զ քառորդին դիր ՚ի վերայ երկրորդ և կառատարութեան. և անս թէ ՚ի մէջ երկուց քաղաքացս քանի՞ աստիճանք նշանակեալ կան ՚ի վերայ քառորդին, և զայնս նոյնչափ՝ որչափ ՚ի վերայ հասարակածին գտեր ՚ի ձեռն կարկինի:

Իսկ եթէ կամիս հեռի եղեն ՚ի միմեանց նշանակեալ տեղեացն, մինչև ոչ ժամանել ծայրից կարկինի ՚ի նոսա, յայնժամ պարտ է առնուլ կարկնաւ զմի- ջոց տասն աստիճանաց ՚ի հասարակածէն, կամ ՚ի միջօրէական շրջանակէ. և ձգել զիծ՝ կամ թել ՚ի միոյ տեղւոյ ցմիւսն. ապա չափել զգիծն կրկնե- լով ՚ի վերայ զկարկինն նոյնչափ բացուածովք. և զիւ- րաքանչիւր քայլ կարկինին տասն տասն թուելով. այսպէս 10. 20. 30. ևն. և եթէ ՚ի վերջոյ յաւելու- ցու միջոց փոքր քան զբացուածս կարկինին, զայն ևս չափել պարտ է կարկնաւ. և բերեալ ՚ի հասարա- կածն՝ տեսանել թէ միջոցն այն քանի՞ աստիճանս պարունակէ. զոր յաւելեալ ՚ի վերայ առաջնոյն, և բանէ անկանելով թիւ աստիճանաց, որով բացա- յայտի յառաջագոյն տեղիք ՚ի միմեանց:

Բայց գիտել պարտ է, զի յառնուլն զմիջոց տասն

տասն

տասն աստիճանաց, յանուն պարտ է 'ի հասարա-կածէն, և ոչ յայլ ինչ զուգահեռական շրջանակէ, որ 'ի մի կամ 'ի միւս բևեռ մերձի. վասն զի բաժա-նեալ այնք 'ի 360 աստիճանս բաժանմանս, որք և հա-սարակածն, այլ զոլով փոքրագոյն շրջանակք քան զշրջանակ հասարակածին, աստիճանք նոցա ևս ըստ նմին համեմատութեան փոքրագոյն են. որք ցուցանեն նախայիշատակեալն աղիւսակն մեծութիւն աստիճա-նաց իւրաքանչիւր զուգահեռական շրջանակաց։

Խնդ. Դ։ Ենթադրելով զլայնութիւն տեղւոյ իրիք, գտա-նել թէ մինչ 'ի տեղեաց համօրէն երկրի՝ զնոյն լայ-նութիւն ունիցին։

Որոշեալ զենթադրեալ լայնութիւն տեղւոյն զոր կամիս՝ 'ի մի միջօրէական շրջանակի, համեմատ զգունդն շուրջանակի. և անդ այն աստիճանս տե-ղիք՝ որք անկանին ընդ աստիճանաւ այնր լայնութեան 'ի միջօրէայն, զնոյն լայնութիւն ունին ընդ միմեանս։ Սոյն կանոնաւ մարթ է գտանել թէ ո՞յք 'ի տե-ղեաց համօրէն երկրի զնոյն երկայնութիւն ունիցին։ Բեր 'ի միջօրեայն զերկայնութիւն տեղւոյն՝ որ է 'ի վերայ հասարակածին. և անդ այն աստիճանս տեղիք՝ որք անկանին յայսմ ընդ կիսաշրջանակաւ մի-ջօրէին, զնոյն երկայնութիւն ունին։

Խնդ. Ե։ Գտանել զտեղին արեգական 'ի կենդանատեսակն 'ի 21 մարտի ըստ նոր տոմարին, կամ յայլ աւուրս զինչ և իցէ ամսոյ։

Խնդրեա զ21 օր մարտի յեզերս 'ի պտուտա-նակին ամսոց, և գտցես հանդէպ նորա՝ 'ի կա-մարն կենդանատեսակաց զնշանն աստի-ճանն խոյոյ. ապա խնդրեա զայն աստիճան խոյոյ 'ի ծիրն խաւարման 'ի վերայ գնդոյն՝ որ է 'ի նմին տեղւոջ. ուր ծիր խաւարման հատանէ զհասա-րակածն. և անդ այն է տեղի արեգական 'ի 21 մարտի։ Այսպէս արա և յայլ աւուրս զինչ և իցէ ամսոյ. բայց 'ի նախահանգն ամսեան փոխանակ քան և ... աւուր փոխարկաւոր, խնդրել պարտ է զ... օր մարտի։

Խնդ. ԺԲ: Գտանել թէ յորժամ աստղ զիարդ առնիցի 'ի միջօրէի՝ նախ գործածականացն ժամանակաւ իւր ընթացս յայտնելով գունդն:

Դնել զերդ ձողաստաձեւ զանձին ինչ ընդ այլբերան զանուածս, թ զհասայ՝ որ է ընդ 16 աստիճանաւ հիւսիսային լայնութեան. նշանակեսցես զլայնութիւն զայս 'ի միջօրէական աղեղն. ապա հոլովեա զգունդն. եւ տես թէ որ նշանի կենդանակերպին անցանիցէ ընդ այնպիսի լայնութեամբ միջօրէկին. եւ գտցես զնիշս, որք շօշափեն զխաւարածրագրեալ աստիճան միջօրէկին. թ զարեգակնատանաւորքն ցուցն. եւ զետեղեա զնշանակեալ աստիճանն: Ապա հայեցեալ զե- զերրորդն. եւ գտցես նոյն զաստուածն, որք համեմատին այնց աստիճանաց. թ զտարեգրութեան օր մայիսի. եւ զհետեւելոյն օգոստոսի, ըստ նոյն աստուծոյ:

Խնդ. ԺԳ: Գտանել զժամն, եւ զօր, եւ զամիս աստուծոյ, գտանել 'ի մէջ գծերոյն զայն տեղիս, յորս աւելի գտանի յայտնեալ 'ի միջօրէական գիծ նոյնա, կամ որոց է յայտնեալ օր հասարակ:

Նախ հաստատեա զգնդակն ըստ լայնութեան յատուկ տեղւոյ, զորոյ զմիջօրէկն խնդրես. եւ ապա զանեցես զայն առ միջօրէին աղեղն. գիծ զդարձուցանել շրջանակ ժամանց 'ի վերայ ժամացուցի այնր տեղւոյ: Ապա հոլովեա զգունդն՝ մինչեւ ցուցակն եկեսցէ 'ի վերայ ժամին 12 թուոյն. զայս արարեալ, թող զգունդն յայն դիրս, եւ տես թէ մինչ 'ի տեղեաց անդրելոյ զտանիլն ընդ վերին կիսագնդանակաւ ազնձի միջօրէկին. ահա նոքա ունին յայնժամ զարեգակն 'ի միջօրէին իւրեանց. կամ է նոցա օր հասարակ:

Խնդ. ԺԴ: Գտանել թէ յայս ինչ ասուր՝ եւ յայս ինչ ժամու, որ տեղիք աշխարհի 'ի նմին ժամու 'ի գագաթան ունին զարեգակն:

Գտանեալ զաստղն արեգականն այնր աւուր 'ի ծիրն խաւարածուն, ընդ զայն 'ի ներքոյ միջօրէկին. եւ գիր անդ 'ի վերայ միջօրէկին զնշան ինչ. ապա ընդ նոյն ակէս 'ի ներքոյ միջօրէկին զայն յամենայն տեղիս, յորս յայնժամ արեգակն է 'ի միջօրէական գիծն. եւ

է հոլովեալ զգլուխոյն. ահա այն ամենայն տեղիք, որք անկանին 'ի ներքոյ նշանին, զոր եդեալ 'ի վր գլոբի միջօրէական շրջանակի, ունին զարեգակն 'ի գագաթանց 'ի նմին ժամու:

Խնդ. Է: Գտանել զերկայնութիւն տունջեան և գիշերոյ տեղւոյ երկրի՝ յորում և իցէ աւուր:

Մեծացո զգլոբդ ըստ լայնութեան տեղւոյն, զօրոյ զերկարութիւն աւուրն խնդրես. և խնդրեալ զտեղի արեգական 'ի ծիրն խաւարման 'ի նմին աւուր և տարեալ զայն յարևելս կողմ առ եզերբն, դիր զցուցակ ժամացուցի 'ի վր վերին 12 թուոյն. ապա հոլովեալ զգլուխն մինչև նշանակեալ տեղին գծին խաւարման, ուր է յայնժամ արեգակն՝ շօշափեսցէ զարևմտեան եզերբն, թուեա զժամս, զորս կամ ցուցանէ ժամացուցի ակնեալ 'ի վերոգրեալ 12 թուոյն. և ահա այնչափ է երկայնութիւն տունջեան նշանակեալ տեղւոյն. իսկ յաւելեալ թիւն մինչև 24 ցուցանէ զերկայնութիւն գիշերոյ: Զոր օրինակ. կամեցեալ գիտել որչափ է տիւն 'ի Կոստանդնուպօլիս 'ի 15 Մայիսի ըստ Նոր տումարի: Մեծացո զգլոբդ 'ի 41 աստիճան բարձրութեան. զի այնչափ է լայնութիւն Կոստանդնուպօլսոյ. և գտեալ զտեղի արեգական 'ի ծիրն խաւարման 'ի 25 աստիճան ցլոյ, զի յայնմ աւուր անդ է արեգակն, բեր և յարմարեա զայն առ եզերբն յարևելեան կողմն եզերացն. և զցուցակն ժամացուցին դիր 'ի վր վերին 12 թուոյն. որպէս ասացաք: Ապա հոլովեալ զգլուխն, մինչև նախասացեալ 25 աստիճան ցլոյն եկեսցէ առ եզերբն յարևմտեան կողմն: Եւ տեսցես զի ցուցակ ժամացուցին անցցէ է. 14 ժամս և 20 րոպէս. և ահա այնչափ է երկայնութիւն տունջեան 'ի Կոստանդնուպօլիս՝ 'ի Մայիսի 15:

Խնդ. Ը: Գտանել 'ի վր գնդոյն զհակոտնեայս և զշրջաբնակս:

Տուր զտեղին՝ զորոյ զհակոտնեայս խնդրես առ միջօրեայն գլոբի. որ եթէ իցէ 'ի հիւսիսային լայնութեան, տես թէ որ տեղի շօշափէ զնոյն աստիճանս հարաւային լայնութեան. և ահա անդ են

հանդիպաբնակք ։ Դարձեալ թէ որպէս անկեալ առ միջօ-րէայնն աղեղնձի ՚ի նոյն զուգահեռականն շրջանակին լայնութեան ․ և այնպէս անկեալն որ շօշափէ զհանդիպակայ կողմն միջօրէին ՚ի նոյն կողմն կիսագնդոյն՝ է ան-կեալն շրջանաբնակաց ։ Կամ յաւել 180 աստիճանս յեր-կայնութեան յառաջագոյն անկելոյն ․ և հաւաքեալ ըզ-գումարն, մինչև աստիճանք երկայնութեան ՚ի վ՟ր հա-ստարակածին շօշափեսցեն զմիջօրէայն ․ և այնպէս ՚ի ներքոյ լայնութեան ՚ի միջօրէն յառաջագոյն անկե-լոյն՝ գտցես զշրջանաբնակս ։ Եւ կամ բերեալ զան-կեալն առ միջօրէայն աղեղնձի, անտ թէ ո՛ր շօշափէ անկեալն այն զմիջօրէայն ․ ապա դի՛ր զցուցակ ժա-մացուցին ՚ի վ՟ր 12 թուոյն ՚ի շրջանակն անդր ժա-մուց, և հոլովեա զգունդն մինչև եկեսցէ ցուցակն ՚ի վ՟ր հակադրակայ 12 թուոյն ․ և այնպէս անկեալն որ շօ-շափէ զնոյն աստիճանս լայնութեան ՚ի միջօրէն, է անկեալ շրջանաբնակաց ։

Խնդ ․ ծժ ։ Գտանել զհակոտնեայս տեղւոյ իւիք ․ եւ Կոստանդնուպօլսոյ ։

Հոլովեա զգունդն յարևելս կամ յարևմուտս, մինչև կոստանդնուպօլիս շօշափեսցէ զեզերս ․ ա-պա թուեա ՚ի վ՟ր եզերացն զաստիճանս՝ որով անկեալ եզերաց, զոր շօշափեաց կոստանդնուպօլիս, առաւելայր ՚ի միջօրէէն ։ Եթէ կոստանդնուպօլիս շօշափէ զեզերս յարևելից կուսէ միջօրէին ՚ի հիւ-սիսակողմն, թուեա զնոյն աստիճանս յարևմտից միջօրէին ՚ի հարաւակողմն ․ և ուր աւարտին անդ են հակոտնեայք կոստանդնուպօլսոյ ։

Կամ այսպէս՝ դարձեալ զլայնութեան տեղւոյն բե-րեալ զայն ՚ի միջօրէայն աղեղնձի, դի՛ր զցուցակ ժամացուցին ՚ի վ՟ր վերին 12 թուոյն ․ և հոլովեա զգունդն, մինչև ցուցակն եկեսցէ ՚ի վ՟ր ստորին 12 թուոյն ․ և անտ թէ ընդ քանիներորդ աստիճա-նաւ հիւսիսային լայնութեան իցէ տեղին ․ այսպէս խնդրեա ՚ի միջօրէայն զնոյն աստիճանս ՚ի հարա-ւային լայնութեան ․ և այնպէս անդ են հակոտնեայք տեղւոյն, զոր խնդրես ։

Բայց և յառաջ այսպիսի գործողութեանց մարթ է գտանել զհակոտնեայս գիւղին իմն եղանակաւ ։ Որգ՝ ․․․ ՚ի վեր մնացորդ ․․․ ; հակոտնեայք են որք ․․․ հակադրեալ ․․․ բառ հե-

ռաւ

ւորութիւն, իսկ զհեռաւորութիւն մերթ է չափել 'ի վր գնտոյն կրկնապատիկ աստիճանօք. զի աստիճանօք հասարակածին կամ երկայնութեան, և աստիճանօք լայնութեան: Վսյ տեղին, որ հեռի է 'ի մէնջ 180 աստիճանօք թէ ըստ երկայնութեան, և թէ ըստ լայնութեան, է ուղղակի մեզ հակոտնեայ. Վն զի չէ հնար գտանել 'ի վր գնտոյ երկրի մեծագոյն հեռաւորութիւն, քան զհեռաւորութիւն 180 աստիճանաց:

Ուստի առ 'ի գտանել զհակոտնեայս տեղւոյ ուրուք, որ փարիզու, չափ է զի գտցես 'ի վր գնտոյն զտեղի, որ 180 աստիճանօք հեռի իցէ 'ի փարիզու ըստ երկայնութեան, և ըստ լայնութե. որ և է տեղի ինչ 'ի ծովու յարևելեան հարաւ Նոր զելանտիոյ ընդ 200 աստիճանօք երկայնութեան, և ի 49 աստիճանօք հարաւային լայնութեան: Սոյին կանոնաւ գտցես, թէ հակոտնեայք փեքին մայրաքաղաքին չինու, որ է ընդ 134 աստիճանօք երկայնութեան, և 40 աստիճանօք լայնութեան, է երկիրն մաճելանեան 'ի հարաւային ամերիկայ մերձ 'ի ծոցն անանկատայ. վն զի 'ի փեքինոյ մինչև ցանդր, են 180 աստիճանք ըստ երկայնութեան, և նոյնչափ ի լայնութեան:

Խնդ. ԺԲ: Գտանել զխոտորութիւն արեգական:

Խոտորութիւն արեգական է հեռաւորութիւն նր 'ի հասարակածէն ի հիւսիս կմ ի հարաւ: Նախ ի մերոյիշատակեալ կանոնաց խնդրեա զտեղի արեգական 'ի ծիրն խաւարման յայնմ աւուր. և զտեղի զնշանն և զաստիճանս այնր աւուր, բեր զնշանն և զաստիճանս առ միջօրէին պղնձի. և ապա տես թէ որք աստիճանք լայնութեան շօշափեն զպղնձին. ահա այնչափ աստիճանօք խոտորեալ է արեգակն 'ի հասարակածէն իւր. հանեալ զխոտորութիւն արեգական 'ի լայնութենէ տեղւոյն, մնացեալն է չափ հեռաւորութեան արեգական 'ի գագաթան կիտէ տեղւոյն 'ի հարաւոյ: Այլ եթէ արեգակն իցէ յայն կողմն հասարակածին յոր եմք մեք, յայնժամ զխոտորութիւն արեգական յաւելուլ պարտ է 'ի վր լայնութեան տեղւոյն. և գումարն երկոցունց ցուցցէ զբացականութիւն արեգական 'ի կիտէ գագաթան տեղւոյն:

Խնդր. ԺԳ: Գտանել ելս Արեւ ծագելոյ եւ մտանելոյ արեգականն ի գետին. որք են ըստ ԱԶ հաստատութեան եւ ի միւս տալին աշխարհաց:

Ի ձմեռնայն զերեւոյթ բարձրութեան տեղւոյս. և ամփոփութեան ի 30 յունիսի բառ Նոր առաւօտքն: Խնդրեալ զանկեալ արեգականն յերկերս բառ Նոմերան յիշատակեալ կանոնաց. և զայնուն յերեւելիքն աստիճանի առեւծուն: Այսպէս բերք զայն տեղի կէն-գանակականացն առ Միջօրէն ագնէ. և գիր զցու-ցանէ ժամացուցին ի մէջ մերին 12 թուոյն. և հո-լովեալ զգունդն յարեւմտից յարեւելս. մինչեւ տեղի կենդանակականացն՝ ուր է արեգակն յայնժամ առաջ, շօշափեսցէ զարեւելեան եզերաս. և անս զժամն՝ զոր ցուցանէ ցուցակ ժամացուցին. որ է ժամ 4. բոպէ 17 առաւօտեան. և այնպա յայնժամ ժամու ծագէ արեգակն յամփոփում ի յունիսի 30: Այսպէս հոլովեալ զգունդն յարեւմուտս կոյս. մինչեւ Նոյն կէտ կենդանակականացն շօշափեսցէ զարեւմտեան եզերաս. և անս զժամն՝ զոր ցուցանէ ցուցակ ժա-մացուցին. որ է ժամ 7. բոպէ 43 երեկոյեան. ասեմ ի նմին ժամու մտանէ արեգակն յամփոփ-ման ի յունիսի 30: Բայց գիտել պարտ է. զի առ թուեալ զժամս յերկարագոյնէ յերկրագունդն ըստ աստեղաբաշխից օրէնի:

Խնդր. ԺԴ: Գտանել զժամ յորում ծագէ եւ մտանէ արե-գակն յա եւ այն գետին:

Գտանելով նախ՝ թէ յորում ժամու ծագէ արե-գակն ի տեղւոջ՝ յորում եմք. ապա անս թէ քա-նիցս անգամ 15 թիւն մտանէ ի թիւ աստիճա-նաց երկայնութեան այսր տեղւոյ, բաղդատութեա տեղւոյ քո: Կամ յայտնագոյն եւս ասել, քանիցս ան-գամ 15 աստիճանօք առաւելուն աստիճանք եր-կայնութեան այնր տեղւոյ. զի որչափ անգամ մտա-նէ 15 թիւն, այնչափ ժամուց տարբերութիւն է ծագման արեգականն:

Զոր օրինակ. գիտելով թէ ի 21 մեծամասնութիւն արեգակն ծագէ ի վենետիկ ի 12 ժամու, եթէ կամիցիս գիտել՝ թէ ի Նմին աւուր յորժամ ժա-մու ծագիցէ յԿոստանդնուպօլիս; խնդրեալ զաստիճանս եր.

երկայնութեան վենետկոյ, որ է իբրև 30 աստ- խնդրեա և զերուսաղէմայն. և գտցես 53: Այդ տարբերութիւն կամ հեռաւորութիւն յերկայնէն զիտաւն և երկր՝ է 23. յորում միանգամ պարա- նակի 15. և յաւելու 8: Այսպէս ուրեմն արեգակն ծա- գէ յերուսաղէմ, մինչ ժամուն և 32 րոպէիւ յառաջ քան 'ի վենետիկ: Եւ զի 'ի սեպտեմբերի 21 'ի վե- նետիկ ծագէ 'ի 12 ժամու. յերուսաղէմ 'ի նմին աւուր ծագէ 'ի 10 ժամու, և 'ի 28 րոպէի քան վենետիկեան ժամացուցի:

Խնդ. ԾԷ: Գտանել զժամն, կամ զերկայնագոյն փո- փոխումն երկարոյ օրի ընդ մէջ հասարակածին և բևեռային շրջանակաց:

Ուրեմն զբևեռն ըստ լայնութեան տեղւոյն, որ փարիզու, եթէ տեղին իցէ 'ի հիւսիսային լայնու- թեան որպէս է փարէզ, երկայնագոյն օրն նորա է, յորժամ արեգակն մտանէ յառաջին աստիճան խեցգետնի. ապա բերեալ զայս աստիճան առ մէջ- օրէին աղեղն, դի՛ր զցուցակ ժամացուցին 'ի վե՛ր մերձի 12 թուոյն. և հոլովեալ զգունտն ընդ արև- ելս, մինչև առաջին աստիճան խեցգետնի շօշափես- ցէ զարևելեան կողմն եզերաց. և անա յայնժամ զժամն զոր ցուցանէ ցուցակն, որ է 4 ժամ. յորում ծագէ արեգակն 'ի փարէզ: Յետոյ մերստին հոլո- վեա զգունտն Ը արևմուտս, մինչև նոյն աստիճան խեցգետնի շօշափեսցէ զարևմտեան եզերս. և յայնժամ ցուցակն ժամացուցին գայ 'ի վե՛ր 8 թը- ւոյն. որ է ժամ մտանելոյ արեգականն յերկայնա- գոյն աւուր փարիզու:

Եւ քանզի 'ի 4 թուոյն մինչև ց12, են 8. և 'ի 12 էն մինչև ց8 են այլևս 8, որք 'ի միասին առ- նեն 16. յայտ է թէ երկայնագոյն օրն փարիզու է 16 ժամ. չորիւք ժամաւ՝ կամ ութ կիսաժամաւ երկայնագոյն քան զօրս այնոցիկ, որք են Ը հա- սարակածաւ. որով և ցուցանի՝ թէ փարէզ է Ը ութերորդ զաւճնին: Այս կանոն զօրէ և նկատ- մամբ այնց տեղեաց՝ որք են ընդ հարաւային լայ- նութեամբ. որոց երկայնագոյն օրն է յայնժամ, յոր- ժամ արեգակն մտանէ յառաջին աստիճան այ- ծեղջեր:

Կամ դիւրագոյն ևս, խնդրեա նախ թէ յորում

աս

աստիճանի լայնութեան եւս աւելին, զորոյ միրկայ-
նագոյն տիւ խնդրես. զոր գտեալ՝ խնդրեա զնոյն
թիւ այնր աստիճանի 'ի մէջ թուանշանաց՝ որք
են 'ի ստորին միջոցի պղնձի միջօրէական շրջանա-
կին. քանզի զայն շրջանակ իբր 'ի բազում բա-
ժանեալ յերիս միջոցս. 'ի ստորինն նշանակեալ կան
աստիճանք լայնութեան, 'ի միջինն ժամք երկայնա-
գոյն աւուրց, իսկ 'ի վերինն բաժինք. և թիւն՝
որ է անմիջապէս 'ի վր̅ նորա, ցուցցէ քեզ զայն՝
զոր խնդրէիր: Զոր օրինակ՝ կամեցեալ գիտել,
թէ քանի ժամ է երկայնագոյն տիւ կամ օրն յե-
րուսաղէմ, որ ընդ 31 աստիճանաւ և 50 րոպէիւ
լայնութեան. խնդրեա զ31 թիւն 'ի ստորին միջոց
անդր մեծի միջօրէական շրջանակի. յորոյ վր̅ ան-
միջապէս գտցես նշանակեալ զթիւն 14. և քանի մի
րոպէ, որ ցուցանէ թէ երկայնագոյն տիւ յերու-
սաղէմ է չորեքտասան ժամ, և քանի մի րոպէ:

Խնդ. ԺԶ: Գտանել թէ ընդ որով բաժնիւ իցէ տեղե-
ին, որ է ընդ մէջ բեւեռային շրջանակաց 'ի
բեւեռաց:

Ըմբռնեա զբեւեռն բառ լայնութեան տեղւոյն. և թէ
69 աստիճան, և 30 մանրամասն հիւսիսային
լայնութեան. և հոլովեա զգունտն, մինչև ծիր խա-
ւարման որ 'ի վր̅ կենդանակամարին շօշափեսցէ
զհիւսիսային վերջին կէտն եզերաց. զի զ90 ե-
րորդ աստիճան լայնութեան, որ նշանակեալ կայ 'ի
վր̅ եզերաց. և անտ զաստիճանան գծին խաւար-
ման, որք շօշափեն զեզերսս. և գտցես՝ զի է ա-
ռաջին աստիճան երկաւորին կամ 30 երրորդ աս-
տիճան խեցգետնին. ապա թուեա թէ քանի աս-
տիճանք են յաստիճանէ անտի մինչև ցառաջին աս-
տիճան խեցգետնի. և գտցես՝ զի են 30, որք
կրկնեալ առնեն 60: Եւ ահա այս է թիւ աւուրց
երկայնագոյն տունջեան այնր տեղւոյ. առանց
բնաւ ինչ տեսանելոյ զգիշեր յամս 60 աւուրսն. ո-
րով իմանամք թէ այն տեղի է եզր, կամ աւարտ
երկրորդ ամսական բաժնին: Ըստ այսմ արա և
զամենայն աստիճանս որք գնան մինչ 'ի բեւեռն:

Խնդ.

Խնդ. ԾԵ: Գիտել թէ քանիերորդ ժամ է աւուր 'ի միում տեղւոջ, յորժամ յայլում է օր հասարակ:

Օր օրինակ կամեցեալ գիտել, թէ քանիերորդ ժամ է աւուր 'ի Կոստանդնուպօլիս, յորժամ 'ի Փարէզ է օր հասարակ: Բեր զՓարէզ առ միջօրէական պղնձի. և եդեալ զցուցակ ժամացուցին 'ի վր. վերին 12 թուոյն, հոլովեա զգունդն յարեւելից յարեւմուտս. (վր. զի Կոստանդնուպօլիս է ընդ արեւելս Ը. գծից Փարիզու.) մինչև Կոստանդնուպօլիս շօշափեսցէ զմիջօրէական պղնձի. և ապա տես զժամն յորոյ վր. է ցուցակն. և գտցես զի է 1 ժամ և 46 վայրկեան զկնի հասարակ աւուր: Ահա այս ժամ է 'ի Կոստանդնուպօլիս, յորժամ 'ի Փարէզ է ժամ 12 կամ օր հասարակ. վ. զի Կոստանդնուպօլիս 26 աստիճանօք և 24 մասամբք ընդ արեւելս է քան զՓարէզ. վ. և 1 ժամաւ և 46 վայրկենօք կանխէ միջօրէն նորա քան զՓարիզու:

Խնդ. ԾԶ: Գիտելով զժամ աւուր միոյ տեղւոյ, գտանել թէ զինչ ժամ է յայնժամ ընդ ամենայն տեղիս:

Օր օրինակ կամեցեալ գիտել, թէ յորժամ առաւօտեան տասներորդ ժամ է աւուրն 'ի Փարէզ, ո՛ր ժամ իցէ յայնժամ ընդ ամենայն տեղիս երկրի: Բեր զՓարէզ առ միջօրէական պղնձի. և դի՛ր զցուցակ ժամացուցին 'ի վր. առաւօտեան 10 թուոյ. ապա հոլովեա զգունդն բովանդակ. և յայնժամ ցուցակն ժամացուցին ցուցցէ զժամ իւրաքանչիւր տեղւոյ, որ անցանէ ընդ միջօրէիւ:

Եթէ հոլովեսցես զգունդն ընդ արեւմուտս, տեսցես, զի յորժամ 10 ժամ է առաւօտեան 'ի Փարէզ, 11 ժամ, 46 վայրկեան է 'ի Կոստանդնուպօլիս. 1 ժամ 22 վայրկեան 'ի Սպահան զկնի միջօրէի. 4½ 'ի Սիամ զկնի միջօրէի. 6 ժմ 48 վայրկեան 'ի Պէքինօ երկրէլի քաղաք Չինաստանեայ զկնի միջօրէի: Իսկ եթէ հոլովեսցես ընդ արեւելս, տեսցես; զի յորժամ տասներորդ ժամ է առաւօտեան 'ի Փարէզ, 'ի Լիսպոնա մայրաքաղաք Փորթուգալու է 9¼. յամերիկա 'ի Քէպէկ 5. 'ի Կարթագինէ

գիծն ․ որ յանկերծիւ · $4\frac{3}{4}$ · 'ի քառակուսեաց որ 'ի-միջաւերան $2\frac{2}{3}$ ։

Խնդ․ ԺԸ ։ Գտանել զտեւողութիւն և զսկիզբն տեւ-ողութեան արշալուսոյն, և երեկոյեան նուաղ լուսոյ տեղւոյ իւրէ՝ ըստ ամի ողջոյն ։

Արշալուսոյն տեւողութիւն լինի յորժամ քան զծագ-ումն արեւու, կամ երեկոյեանն զկնի մտից արեւու ։ Յորժամ արեգակն ընդ հասարակն 18 աստիճանաւ է ընդ եզերականաւ ուղիղ, սկսանի արշալոյսն․ և յորժամ 18 աստիճանաւ է ուղիղ ընդ եզերականաւ զկնի մտից իւրոց, աւարտի երեկոյեան նուաղ լոյսն ։ Ըստ ուղիղ գծից գնդոյն արշալուսոյն տեւ-ողութեան, և նուաղ լուսոյն երեկոյեան առ հասարա-կաճառ սահման ունին․ զի զի յայնժամ արեգակն գնայ ընդ եզերականաւ ուղիղ գծիւ ։ Բայց ըստ խո-տորնակ գծից գնդոյն՝ արշալուսոյն տեւողութեան, որ և երեկոյեանն երկար ունին ։ Եւ քան զայս ևս երկայնագոյն է ըստ շրջանն՝ կամ զուգահեռական գծից գնդոյն ։

Զոր օրինակ կամեցեալ գիտել, թէ երբ սկսա-նի և աւարտի արշալուսոյն տեւողութեան, և նուաղ լուսոյն երեկոյեան յանմիջապէս 'ի 5 հոկտեմբերի ։ Ամբարձ զբեւեռն ԽԲ լայնութեան տեղւոյն․ և խնդ-րեա զտեղի արեգական յայնմ աւուր, ըստ նախ-յիշատակեալ կանոնաց․ որ է 12 աստիճան կշռոյն․ բեր զայն աստիճան առ միջօրէն․ և զնիշ ցուցակին 'ի վր̅ 12 թուոյն հասարակ աւուր․ ապա հոլովեա զգունդն ընդ արեւելս, մինչև եր-կոտասաներորդ աստիճանն խոյոյ՝ որ տրամաչափա-կիս է 'ի հակակայ կողմն տեղւոյն, ուր յայնժամ գտանի արեգակն՝ բարձրասցի 18 աստիճանաւ 'ի վերոյ քան զարեւմտեան կէս եզերականց ։ Զայս ա-րարեալ՝ տեսցես, նշանն՝ զի տեղի արեգական 18 աստիճանաւ է 'ի ներքոյ արեւելեան եզերականց ։ Երկրորդ՝ զի ցուցակն ցուցանէ զժամ 4․ բայց 26 զկնի կէս գիշերոյ, որ է ժամ սկզբնաւորութեան տեւողութեան արշալուսոյն ։ Ապա հոլովեա զգ-գունդն, մինչև երկոտասաներորդ աստիճան խոյոյ ամբարձցի 18 աստիճանաւ 'ի վերոյ քան զարեւե-լեան եզերաց․ և զայս բարձրութիւն մարթ է գտա-նել

նել 'ի ձեռն քառորդին բարձրութե. և յայնժամ ցուցակն ժամացուցին ցուցցէ զժամ 7, և բայց 37 վայրկ հաստատուն աւուր. որ է աւարտ երեկոյեան նուազ լուսոյն:

Խնդ. Ի. Գտանել զտեղիս, ուր ամբողջ գիշերն զնուազ լոյս ըստ երևոյթ գիշերին յայս կամ յայն աւուր:

Նշանակեա՛ ըստ նախընթացս կանոնաց զխոտորումն արեգականն յայնմ աւուր, առաջ բարձրացո՛ զբևեռն 'ի վերայ քան զհորիզոնս նոյնչափ աստիճանս՝ որչափ է խոտորումն արեգականն 'ի հասարակածէն: Եւ ապա աստիճանքն շրջանակին լայնութե, որք ոչ են 18 աստիճանօք 'ի ներքոյ քան զհորիզոնս, է բոլոր գիշերին ունին զնուազ լոյս:

Խնդ. ԻԱ: Գիտելով զլայնութիւն տեղւոյ իւրոյ՝ և զբարձրութիւն արեգականն, գտանել 'ի ձեռն Երկնագնդոյ զժամ աւուրն:

Ամբարձեալ զբևեռն ըստ լայնութե տեղւոյն, հաստատեսցես զքառորդն բարձրութե 'ի կէտ գագաթան գլխոյն. և գտեալ զբարձրութիւն արեգական միջօր. գիտողութ., նշանակեսցես 'ի քառորդն զաստիճան բարձրութե արեգականն: Ապա նշանակեալ և զտեղի արեգականն առաջնորդեալ աւուրն 'ի վերայ գծին խաւարման բեր զայն առ միջօրէին գիծն. և դիր զցուցակ ժամացուցին 'ի վերայ միջօրէին կամ 'ի վերայ վերին 12 թուոյն: Եւ ապա հոլովեսցես զգունդն բերելով առ միմեանս զտեղի արեգականն զնշանակեալն 'ի ծիրն խաւարման, և զաստիճանն բարձրութե, նշանակեալ 'ի վերայ քառորդին բարձրութե, մինչև երկոքին կէտքն շօշափեսցեն զմիմեանս, կամ եկեսցեն 'ի մի վայր. և ապա յայնժամ զժամն զոր ցուցանիցէ ցուցակն. և ահա այն է ժամ աւուրն զոր խնդրէիր:

Խնդ. ԻԲ: Երևեալ զամիսն և զօրն, գտանել 'ի ձեռն Գնդոյն զտեղիս հիւսիսային ցրտային գօտւոյ, յորս անընդհատ լուսաւորէ արեգակն առանց մտանելոյ: Նոյնպէս և զտեղիս հարաւային ցրտային գօտւոյ, յորում յայնժամ ոչ կանի արեգակն հեռանալ:

Նշանակեսցես զտեղի արեգականն 'ի ծիրն խաւարման, և բեր զայն 'ի միջօրէին գիծն. ապա թե-ւեալ

ժամուն այնչափ աստիճանս 'ի մէջ միջօրէկին 'ի հիւսիսային բևեռէն մինչև ցհասարակածն, որչափ են աստիճանք 'ի տեղւոջէ արեգական 'ի ծիրն խաւարածին մինչև ցհասարակածն. յետոյ հոլովեա զգունդն. և ուր հասանիցէ տեղիքն՝ որք [illegible] զասացեալ աստիճանս միջօրէկին, անտի [illegible] լինել ամենայն [illegible]:

Խնդ. ԻԶ: Երևեալ գտեալ ինչ 'ի հիւսիսային [illegible] երկրի, գտանել 'ի յետ [illegible] զթիւ աւուրց, յորս արեգակն [illegible] երևելի է անդ. և [illegible], յորս ծածկեալ է: Ուսանիմ զաւուրս և զժամս որ [illegible] արեգական:

Նախ զատուցեալ տեղին առ միջօրէկն. և թէ ըստ նուաղէ նորա [illegible] [illegible]. և թուեալ 'ի մէջ միջօրէկին այնչափ աստիճանս յերկուց կողմանց հասարակածին, որչափ աստիճանօք տեղին այն հեռի է 'ի բևեռէ. և եդեալ նշան 'ի տեղւոջ, ուր աւարտի թիւ ասացեալ աստիճանաց, հոլովեա զգունդն, և տես թէ որ աստիճանք գծին խաւարածին անցանեն ընդ [illegible] 'ի ներքոյ երկուց կէտից նշանակելոց 'ի միջօրէկն. և հիւսիսային աղեղն ծրին խաւարածին հատեալ 'ի հիւսիսայնոյ [illegible] աստիճանէ միջօրէկին [illegible] 'ի ժամանակ, ցուցցէ քեզ զթիւ աւուրց, յորս արեգակն անընդհատ երևելի է 'ի տեղւոջ անդ՝ սկսեալ 'ի [illegible]: Իսկ հակառակ աղեղն ծրի խաւարածին՝ հատեալ 'ի հարաւային աստիճանէ միջօրէկին՝ ցուցցէ զթիւ աւուրց, յորս ամենևին ծածկեալ է 'ի տեղւոջէ անտի արեգակն:

Եւ [illegible] թուեսցէ զգծեալն 'ի նոյն բարձրութեան, ընդ [illegible] աստիճան [illegible] առ միջօրէկն. և տես զերկուս կէտսն գծին խաւարածին, որք յայնժամ հասանեն [illegible]: Այսպէս խնդրեա 'ի մէջ [illegible], թէ որք են աւուրք, յորս արեգակն [illegible] աստիճանս գծին խաւարածին: Եւ [illegible] այն [illegible] են [illegible] երևելոյ, կամ ծածկելոյ արեգական 'ի տեղւոջէ անտի:

Այսպէս ինչ յաղագս աշխարհագրական խնդրոց՝ զորս մարթ է լուծանել 'ի ձեռն արուեստական գնտոյն՝ չափ լիցի: Այլ կարգեսցուք յառաջիկայ յօդուածին աշխարհագրական սկզբունս.

զուգահեռ իցէ ընդ միւսում ծանուցելոյս․ այսպէս ծանօթու-
թիւն կարեւոր է այնոցիկ, որք զայս մակացութիւն ուսանել կամին ։

ՅՕԴ. Զ.

Աշխարհագրական սկզբունք ։

Աշխարհագրական սկզբունքս թէպէտ բազում են․ այլ գլխաւորքն են հետեւեալքս ։

ա․ Լայնութիւն աշխարհի տեղւոյ միշտ հաւասար է բարձրութեան բեւեռի նորա․ նոյնպէս բարձրութիւն բեւեռին՝ լայնութեան, զի են նոյն ։

բ․ Տեղիք եղեալք ընդ գիծ հասարակածին՝ չունին լայնութիւն․ վասն զի լայնութիւնք անտի սկզբնաւորին ։

գ․ Տեղիք եղեալք ընդ բեւեռօք՝ այնչափ լայնութիւն ունին, քան զոր մեծագոյն չէ հնար լինել․ վասն զի չափք լայնութեանց ՚ի բեւեռն աւարտին ։

դ․ Ամենայն տեղիք, որք են առաջի և անդի հասարակածին, ունին զլայնութիւն յարաւոյ և հիւսոյ, ըստ որում յարաւոյ և հիւսոյ բացակայ են ՚ի նմանէ ։

ե․ Տեղիք ընդ առաջնով միջօրէիւ չունին երկայնութիւն․ վասն զի չափք երկայնութեանց անտի սկսանին ։

զ․ Տեղիք եղեալք առ առաջնով միջօրէիւ յարեւմտից կուսէ՝ այնչափ երկայնութիւն ունին, քան զոր մեծագոյն չէ մարթ լինել․ վասն զի անդ աւարտին չափք երկայնութեանց ։

է․ Ամենայն տեղիք կողմնականք հասարակածին, և ընդ նովին լայնութեամբ, ունին զերկայնութիւն յարեւելս և արեւմուտս ըստ համեմատութեան հեռաւորութեան իւրեանց յառաջնոյ միջօրէէ ։

ը․ Այն տեղի միայնակ, որ է ուղիղ ընդ այնոսիկ կէտաւ, ուր առաջին միջօրէոյն՝ և զծնագիծ հասարակածի հատանեն զմիմեանս, չունի բնաւ ոչ երկայնութիւն, և ոչ լայնութիւն ։

թ․ Չիք տեղի ՚ի վերայ երկրի, որ հեռագոյն իցէ յայլմէ տեղւոյ, առաւել քան 180 աստիճանօք ։

նոյն, կամ 16800 աշխարհագրական մղոնաւ. զիւրաքանչիւր աստիճան 60 մղոն հաշուելով ։

Ժ. Ձեր տեղի՝ կամ քաղաք՝ որ հեռաւորն իցէ ԽԵ հասարակածէն իւրոց աւելի քան զ6875 $\frac{3}{5}$ աշխարհագրական մղոնս ըստ միջակին առեւմտի երկրիս ։

ԺԱ. Զգալի եզերք իւրաքանչիւր անձին միշտ փոփոխի, 'ի փոփոխել նորա զտեղիս իւր ։

ԺԲ. Աստղաբաշխականն զգալի եզերաց իւրաքանչիւր տեղւոյ սակայ փոփոխի ըստ համեմատութեան բեւեռեկման արեգականային շառաւիղաց ։

ԺԳ. Ամենայն՝ սահմանք երկրի երբեմն տեսանեն զարեգակն, և երբեմն ոչ ։

ԺԴ. Յամենայն տեղիս երկրի՝ բայց 'ի տեղեաց 'ի ներքոյ բեւեռացն եղելոց, տիւք և գիշերք հաւասար են ը տեւողութեն. զի են 12 ժամք յորժամ արեգակն է 'ի հասարակածին ։

ԺԵ. Յամենայն տեղիս որք են ընդ մէջ հասարակածին և բեւեռացն՝ տիւք և գիշերք ոչ երբեք հաւասար են, բայց միայն յերկուս աւուրս տարւոյն, զի յորժամ արեգակն մտանէ 'ի կշիռն, և 'ի խոյն ։

ԺԶ. Որչափ առաւել մօտ է տեղի ինչ առ հասարակածն՝ այնչափ նուազ է անհաւասարութիւն տեւողութեան և գիշերաց նորա ։ Եւ ընդ հակառակն, այնչափ առաւել է անհաւասարութիւն, որչափ հեռաւորագոյն գտանի 'ի նմանէ ։

ԺԷ. Յամենայն տեղիս՝ որք ընդ մի և նոյն զուգահեռական շրջանակաւ լայնութեան գտանին, երկայնութիւնք տեւողութեան և գիշերաց հաւասար են յամենայն եղանակս տարւոյ ։

ԺԸ. 'Ի տեղիս եղելոց ընդ մէջ հասարակածին՝ և մօտ 'ի բեւեռացն՝ յորս տիւք հաւասարք այլ ոչ անձին, ոչ է հաւասար հեռաւորութիւն զուգահեռական շրջանակաց նոցա ։

ԺԹ. Այն տեղիք՝ որոց զանազան է հեռաւորութիւն 'ի հասարակածէ առ բեւեռս, զանազան է և երկայնութիւն տեւողութեան և գիշերաց ։

Ի. Յայրեցած գօտին արշալուսոյն առաւօտեան՝ և նուաղլուսոյն երեկոյեան՝ կարի սակաւ տեւեն ։ 'Ի ներքոյ ցրտային գօտեաց՝ երկար քան

մայլ

յայլ տեղիս. իսկ 'ի բարեխառն գօտիս զմիջակն իմն տեւողութեան ունին:

իա. Ցամաքային տեղիս՝ որք է այրեցած գօտեաց են, յորժամ երկիցս արեգակն լինի նոցա գագաթնահայեաց. ընդ արեւադարձիւք միանգամ եւ եթ. իսկ 'ի ներքոյ ցրտային, եւ բարեխառն գօտեաց ոչ երբէք:

իբ. Ցամաքային տեղիս՝ որք են 'ի ներքոյ ցրտային գօտեաց՝ կայ մնայ արեգակն 'ի վերոյ քան զեզերս նոցա 'ի բազում աւուրս անընդհատ. եւ յայլ աւուրս բազումս ընաւ ոչ երեւի նոցա: Իսկ անընդհատ երեւումն, եւ բացակայութիւն արեգական այնչափ համառօտ է կամ երկայն 'ի տեղիսն յայնոսիկ, որչափ առաւել մօտ են՝ կամ հեռի 'ի բեւեռաց:

իգ. Ցամաքային տեղիս՝ որք անմերձ ընդ բեւեռային շրջանակօք անկանին, ամի ամի յորժամ արեգակն գտանի 'ի վերջին խոտորումն իւր 'ի հասարակածէն, որ յարեւադարձն այնր կողմանն՝ ընդ օր մի ողջոյն որ ժամս 24 երեւի նոցա անընդհատ: Իսկ յորժամ գտանի 'ի հակառակ կողմն որ 'ի յարեւադարձն միւսոյ կողմանն, ընաւ ոչ ծագէ նոցա. իսկ յայլ ժամանակս տարւոյն ծագէ եւ մտանէ, որ եւ առ մեզ:

իդ. 'Ի տարւոջ երկու աւուրք են միայն. (որ յորժամ արեգակն մտանէ 'ի հասարակածն,) յորս երկու բեւեռականք միանգամայն ընդ նոյնչափ ժամս որ զօրն ողջոյն տեսանեն զարեւ, բայց մի բեւեռն տեսանէ զկէսն արեւուն, իսկ երկր̄ բեւեռն զմիւս կէս նորին:

իե. 'Ի տեղիս՝ որք են ընդ մէջ հասարակածին եւ հիւսիսային բեւեռի, յամենժամ տիւք երկարագոյն են, եւ գիշերք համառօտք, յորժամ արեգակն գտանի 'ի մեծագոյն խոտորման իւրում 'ի հիւսիսակողմն, որ յարեւադարձն խեցգետնի: Եւ յամենժամ համառօտ են տիւք, եւ գիշերք երկայնագոյն, յորժամ արեգակն 'ի մեծագոյն խոտորման իւրում գտանի 'ի հարաւակողմն. որ յարեւադարձն այծեղջեր:

իզ. 'Ի տեղիս՝ որք են ընդ մէջ հասարակածին՝ եւ հարաւային բեւեռի՝ յամենժամ տիւք եր-

կարա

կարգաւորին են, և գիշերք հաւասարք, յոր-ժամ արեգակն 'ի մեծագոյն խոտորման իւրում է 'ի հասարակածէն, որ յարեւադարձն այծեղջեր: Իսկ բաղդատմամբ ընդ հակառակն լինի, յորժամ գտանի յարեւադարձն խեց-գետնի:

ԻԷ. 'Ի տեղիս' որք են ընդ այրեցած գօտեաւ, (բաց յեղեւրաց ընդ արևադարձիւք,) մէջ-օրէական ստուերք մարմնոց 'ի կէսն տար-ւոյն' ձգի ընդ հիւսիս, և 'ի միւս կէսն' ընդ հարաւ:

ԻԸ. 'Ի տեղիս' որք են ընդ այրեցած գօտեաւ նաև ընդ արևադարձիւք և այլն, մարմինք ոչ ձգեն ստուերս ինչ 'ի հասարակ աւուր' յորժամ արեգակն գծէ ուղղահայեացն զուգահեռա-կան նոցա, որ ընդ հասարակածաւ լինի յորժամ մտանէ 'ի կենդանատեսակս խոյոյ, և կշռոյ:

ԻԹ. Մէջօրէական ստուերք գծինելեցէ ուղղահայեաց մար-մնոյ' է յաւէտ. և նուազ երկայն կամ կարճ, ըստ որում տեղին' ուր կայ մարմինն' ստո-ւեր մօտ է 'ի հասարակածն, կամ հեռի 'ի նմանէ:

Լ. Որչափ առաւել հեռի են 'ի հասարակածէն տե-ղիք ինչ, միայն թէ հեռաւորութիւն նոցա ոչ անցցէ զ66 աստիճանաւք լայնութեան, այնչափ մեծագոյն է անդ շրջանակի արեգական. որ առեալ այն' զոր գործէ 'ի մի երկրորդ, նաև առանցն երկրոց որք պատահեն 'ի մէջ արեւելեան և արեւմտեան կիսոց, և 'ի մէջ այնչափ կիսոց, ը որս կշռանէ և մտանէ արեգակն յերկնային արևադարձս:

ԼԱ. Տեղիք անկեալք ընդ մի և նոյն միջօրէական շրջանակաւ, միշտ զնոյն ժամս ունին. որ կեսէ 'ի մին են 12 ժամք աւուր, նոյնչափ են և 'ի միւսն:

ԼԲ. 'Ի տեղիս' որք են ընդ հակակայ զուգահեռա-կան շրջանակաւ լայնութեան, երկայնակք աւուրցն ոչ են նոյն. զի յորժամ 'ի մին է ամառն, 'ի միւսն է ձմեռն:

